Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
հունիսի 4-ի նիստի N 25
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քրեական գործող օրենսգրքի արդի վիճակը

1.1 2003թ. օգոստոսի 1-ից գործողության մեջ դրվեց ՀՀ քրեական նոր օրենսգիրքը: Դրա ընդունումը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: Նախ՝ 1995թ. ընդունվել էր անկախ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և բնականաբար բոլոր մյուս օրենքներն ու օրենսգրքերը պետք է համապատասխանեցվեին վերջինիս դրույթներին: Այս տեսակետից ՀՀ քրեական նոր օրենսգրքի ընդունումը նույնիսկ փոքր-ինչ ուշացել էր: Բացի այդ՝ նախկին քրեական օրենսգիրքը արդեն չէր համապատասխանում հանրապետությունում ձևավորվող ու զարգացող տնտեսական, սոցիալական, քաղաքական, գաղափարախոսական իրողություններին, ինչպես նաև քրեական իրավունքի գիտության առկա մակարդակին:

1.2 ՀՀ քրեական օրենսգիրքը սկզբնական շրջանում կատարեց իր առաքելությունը՝ հանրապետությունում ընթացող գործընթացների արդյունքում ծագած ու ձևավորվող հանցավոր վարքագծի նոր ձևերի դեմ պայքարի գործում հարաբերականորեն արդյունավետ միջոց հանդիսանալով:

1.3 Բարձր գնահատելով գործող քրեական օրենսգրքի դերը հանրապետությունում հանցավորության դեմ պայքարի գործում, այնուհանդերձ պետք է նշել, որ դրա նորմերի գիտական վերլուծությունը և կիրառման պրակտիկան բացահայտեցին նաև օրենսգրքում առկա բազմաթիվ թերություններ: Պատահական չէ, որ մինչ այժմ քրեական օրենսգրքում արդեն մոտ հարյուր փոփոխություն ու լրացում է կատարվել: Ընդ որում, այս գործընթացը դեռ շարունակվում է: Պետք է նշել սակայն, որ շատ հաճախ, արված փոփոխությունները ոչ թե շտկել են վիճակը, այլ ընդհակառակը՝ ավելացրել են օրենսգրքում առկա հակասություններն ու

թերությունները: Փոփոխությունների մի մասը կատարվել են պահի ազդեցության տակ, կոնկրետ դեպքի կապակցությամբ, առանց հաշվի առնելու օրենսգրքի ընդհանուր տրամաբանությունը, մյուսները զուրկ են կրիմինալոգիական հիմնավորվածությունից կամ հակասում են քրեական իրավունքի տեսության ժամանակակից միտումներին: ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունների ու լրացումների մի զգալի մասը աչքի է ընկնում լեզվական անճշտություններով, ինչի արդյունքում անհնար է դառնում նորմի ճիշտ կիրառումը: Բայց ամենակարևորն այն է, որ այդ փոփոխությունները արդյունավետ չեն:

ՀՀ քրեական օրենսգիրքը նաև հայեցակարգային փոփոխությունների կարիք ունի, որովհետև դրանում, ըստ էության, հայեցակարգ էլ չկա. մեր քրեական օրենսգիրքը ԱՊՀ մոդելային քրեական օրենսգրքի և ՌԴ քրեական օրենսգրքի սինթեզ է ներկայացնում, որը զուրկ է կուռ կառուցվածքից և լի է հակասություններով: Բնականաբար, խիստ ցածր է քրեական օրենսգրքի արդյունավետությունը:

Եթե ընդհանրացնելու լինենք ՀՀ քրեական օրենսգրքում առկա թերությունները, ապա դրանք կարելի է դասակարգել հետևյալ տեսակների՝

ա/ հայեցակարգային անճշտություններ և կրիմինալոգիական իրականության անտեսում,

բ/ սխալներ և հակասություններ,

գ/ բացեր:

1.4. Հայեցակարգային անճշտություններ և կրիմինալոգիական իրականության անտեսում

1.4.(1) Հանցագործության այս կամ այն տեսակի համար պատիժ նախատեսելիս օրենսդիրը պետք է հիմք ընդունի ոչ միայն պատճառված վնասի չափը, այլև հիմնվի ***կրիմինալոգիական իրողության*** վրա, որի կարևոր տարրերից մեկը հանցանք կատարողի անձն է: Ցավոք, օրենսդիրը գրեթե երբեք հաշվի չի առնում այս իրողությունը: ՀՀ քրեական օրենսգիրքը՝ հիմնված լինելով «արարքի հայեցակարգի վրա», հանցագործությունների համար պատիժ նախատեսելիս հիմք է ընդունում պատճառված վնասի չափը, ինչի արդյունքում հաճախ անտեսվում է կրիմինալոգիական իրողությունը, խախտվում արդարությունը: Մասնավորապես՝ ՀՀ

քրեական օրենսգիրքը հափշտակությունների համար քրեական պատասխանատվության խստությունը կապում է հափշտակության չափի հետ՝ խոշոր և առանձնապես խոշոր չափերը նախատեսելով որպես հանցակազմերի ծանրացնող հանգամանքներ: Արդյունքում՝ գողության եղանակով 501 հազար դրամ հափշտակած, առաջին անգամ հանցանք կատարած անձը կարող է դատապարտվել երկուսից հինգ տարի ժամկետով ազատազրկման, իսկ նույն եղանակով 499 հազար դրամ հափշտակած, նախկինում դատապարտված անձը կարող է դատապարտվել մինչև երկու տարի ժամկետով ազատազրկման:

Կրիմինալոգիական իրողության անտեսումը հանգեցնում է նաև հանցագործությունների տարբեր տեսակների համար նախատեսվող պատիժների անհամամասնությանը: Մասնավորապես՝ կրիմինալոգիական տեսանկյունից առավել մեծ հանրային վտանգավորություն են ներկայացնում սպանություն կատարողները, մինդեռ գործող քրեական օրենսգրքով հասարակ սպանության և ավազակության համար նախատեսված սանկցիաները նույնն են: Կարելի էր նաև այլ օրինակներ բերել:

1.4.(2) Քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներից է ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը: Քրեական իրավունքի տեսության մեջ մեղքի վերաբերյալ առկա են երեք հիմնական հայեցակարգեր՝ վտանգավոր վիճակի, նորմատիվիստական և հոգեբանական: ՀՀ քրեական օրենսդրությունը հիմնված է հոգեբանական հայեցակարգի վրա, որի հիմնական դրույթը հանգում է նրան, որ մեղքը անձի հոգեբանական վերաբերմունքն է իր արարքի և դրա վտանգավոր հետևանքների նկատմամբ և դրսևորվում է դիտավորության կամ անզգուշության ձևերով: Սակայն հոգեբանական հայեցակարգը հաճախ թույլ չի տալիս ապահովելու արդարությունը և հաշվի առնելու կրիմինալոգիական իրողությունները: Մասնավորապես, հոգեբանական հայեցակարգի շրջանակներում դիտավորությունն առկա է այն դեպքում, երբ անձը գիտակցում է իր արարքի փաստական հանգամանքները և դրանց սոցիալական նշանակությունը: Ակնհայտ է, որ դիտավորության օրենսդրական բնորոշումը թույլ չի տալիս լիովին հիմնավորել քրեական պատասխանատվությունը աֆեկտի, ծանր հարբածության վիճակում կատարված հանցագործությունների համար:

Ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի հետ է առնչվում իրավաբանական կամ փաստական սխալի ինստիտուտը: Այս հարցը ներկայումս որևէ օրենսդրական լուծում չի ստացել: Մինչդեռ գրեթե բոլոր ժողովրդավարական պետությունների քրեական օրենսդրություններում սխալի ինստիտուտը մանրամասն կարգավորվում է, ինչը նպաստում է օրենքի միասնական կիրառմանը և ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի ապահովմանը:

1.4.(3) Աշխարհի շատ երկրների քրեական օրենսգրքերը հիմնվում են «անձի հայեցակարգի» վրա, համաձայն որի՝ պատժվում է հանցանք կատարած անձը, ուստի պատիժը պետք է համապատասխանի ոչ միայն հանցագործության, այլ նաև անձի հանրային վտանգավորությանը: Այս հայեցակարգը ավելի պրագմատիկ բնույթ ունի: Պատժի հիմնական նպատակը այստեղ հանցանք կատարած անձին ուղղելն է և նրա վերասոցիալականացումը: ՀՀ քրեական օրենսգիրքը, հիմնվելով արարքի հայեցակարգի վրա, շատ դեպքերում թույլ չի տալիս ոչ միայն ապահովելու արդարության սկզբունքը, այլև պրագմատիկ և ժամանակակից պայմաններին ու քրեական իրավունքի տեսությանը համապատասխան քրեաիրավական քաղաքականություն իրականացնել: Օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքում հանցագործությունները դասկարգվում են ըստ օրենքում նախատեսված պատժի խստության: Դրա հետ կապված՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձը չի կարող, ասենք, ազատվել քրեական պատասխանատվությունից տուժողի հետ հաշտվելու, գործուն զղջալու, իրադրության փոփոխության հիմքերով: Բայց հարցն այն է, որ շատ դեպքերում ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձը կարող է իրենից ավելի քիչ հանրային վտանգավորություն ներկայացնել, քան միջին ծանրության հանցանք կատարածը: Օրինակ՝ անձը ծանր հանցագործության մեջ հանդես է եկել օժանդակողի դերում, կամ առկա են բազմաթիվ մեղմացնող հանգամանքներ և այլն: Ըստ այդմ էլ դատարանը այնպիսի մեղմ պատիժ է նշանակել, որը հավասարազոր է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար նախատեսված պատժին: Սակայն, քանի որ հանցագործությունների դասակարգման հիմքում դրվում է օրենքով նախատեսված պատժաչափը, ապա անձի արարքը համարվում է ծանր հանցագործություն՝ դրանից բխող իրավական հետևանքներով:

Այս տեսակետից լուրջ վերանայման կարիք ունեն քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու չափանիշները: Ներկայումս, օրինակ, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու դեպքում պատժի պարտադիր կրման ժամկետը կախվածության մեջ է դրված հանցագործության տեսակից, ինչը սխալ է:

1.4.(4) Լուրջ թերություններ ունի պատժի համակարգը: Գործող օրենսդրության պայմաններում հաճախ դատարանը ազատազրկմանն այլընտրանք չի ունենում: Այստեղից էլ ազատազրկում պատժատեսակի չարդարացված հաճախակի կիրառումը, ինչն արդեն պրոբլեմներ է ստեղծել քրեակատարողական հիմնարկների համար: Բացի այդ, ազատազրկում պատժատեսակի հաճախակի կիրառումը կարող է նպաստել հասարակական հարաբերությունների քրեականացմանը, քաղաքացիական հասարակության մեջ «գողական օրենքների» տարածմանը: Դատարանները հաճախ ելքը գտնում են պատիժը պայմանականորեն չկիրառելով, բայց այս ինստիտուտի ոչ հստակ և բացերով ու թերություններով աչքի ընկնող օրենսդրական կարգավորումը չի նպաստում պատժողական քաղաքականության արդյունավետությանը: Խնդրի լուծման ուղիներից մեկը ազատազրկմանը իրական այլընտրանք հանդիսացող պատժատեսակների ցանկի ընդլայնումն է և դրանց կիրառման համար արդյունավետ ու գործուն մեխանիզմների ներդնումը: Ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքում ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող հանրային աշխատանքները արդյունավետ չեն և հիմնականում նշանակվում են տուգանքի վճարման անհնարինության դեպքում: Այս պատժատեսակի անարդյունավետությունը մի քանի պատճառներ ունի, որոնցից հիմնականներն են շատ երկար ժամկետը (270-ից 2200 ժամ) և քր. օր.-ի հատուկ մասի հոդվածում նախատեսված չլինելն ու դատապարտյալին ընտրության հնարավորություն տալը (դատապարտյալը ինքն է որոշում՝ գնալ այդ պատժատեսակին, թե ոչ):

Կալանք պատժատեսակը նույնպես ըստ էության չի կիրառվում. պատճառներից մեկը երկար ժամկետն է (երեք ամիս տևողությամբ շոկային էֆեկտը հիմնավորված չէ):

Մեկ այլ ուղի է քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատելու ինստիտուտների կատարելագործումը և կիրառման հնարավորությունների ընդլայնումը: Այս առումով լուրջ կատարելագործման կարիք ունեն տուժողի հետ

հաշտվելու կամ գործուն զղջալու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու, պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտները: Մասնավորապես, լուծված չէ այն հարցը, թե ինչպես պետք է վարվել այն դեպքերում, երբ առկա են մի քանի տուժողներ, մի քանի հանցանք կատարող անձինք, և տուժողը մեկի հետ հաշտվում է իսկ մյուսների հետ ոչ, կամ տուժողը անչափահաս է, կամ անմեղսունակ կամ անգործունակ:

Պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու հետ կապված խնդրահարույց հարց է դրա ընթացակարգը: Մասնավորապես, գործող քրեական օրենսգրքով պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելիս դատարանը կարող է անձի վրա որոշակի պարտականություններ դնել, սակայն իրականում, որպես կանոն, ոչ մի պարտականություն չի դրվում: Բացի այդ, ազատված անձի նկատմամբ հսկողության որևէ գործուն մեխանիզմ չկա: Օրենքում հստակ նախատեսված չեն նաև այն չափանիշները, որոնցով ղեկավարվելով, դատարանը կարող է անձին վաղաժամկետ ազատել պատժից:

Ինչ վերաբերում է պատիժը պայմանականորեն չկիրառելուն, ապա վերջինս, ըստ էության, անպատժելիությանը նպաստող ինստիտուտ է դարձել, որովհետև դատապարտյալի նկատմամբ ոչ մի լուրջ սահմանափակում չի կիրառվում, նրա հետ ոչ մի վերականգնողական աշխատանք չի տարվում: Բացի այդ, օրենքը չի կարգավորում այս ինստիտուտի կիրառման հետ կապված շատ հարցեր: Մասնավորապես, խնդրահարույց է այն հարցը, թե արդյոք կարելի է պատիժը պայմանականորեն չկիրառել այն հանցագործության համար, որը հանցավորի կողմից կատարվել է նախորդ հանցագործության համար պատիժը պայմանականորեն չկիրառելիս նշանակված փորձաշրջանի ընթացքում: Մեկ այլ խնդիր է այն, որ որևէ սահմանափակում չի նախատեսվում այս ինստիտուտի կիրառման կապակցությամբ:

1.4.(5) Օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու ինստիտուտը նույնպես հստակ օրենսդրական կարգավորում չունի: Ըստ էության որևէ հստակ օրենսդրական չափանիշ դրա կիրառման համար չկա: Օրենքը օգտագործում է արժեքավորվող հասկացություն՝ «բացառիկ հանգամանքներ, որոնք էականորեն նվազեցնում են արարքի հանրային վտանգավորությունը»: Դատարանը ինքը պետք է

գնահատի՝ բացառիկ են հանգամանքները, թե ոչ, էականորեն են դրանք նվազեցրել արարքի հանրային վտանգավորությունը, թե ոչ: Սխալ է նաև միայն արարքի հանրային վտանգավորության մասին խոսելը, որովհետև այն բացառիկ հանգամանքները, որոնց մասին նշում է օրենքը, վերաբերում են հանցագործության շարժառիթին, նպատակին, հանցավորի դերին, հանցագործության ընթացքում կամ դրանից հետո նրա վարքագծին: Ակնհայտ է, որ սրանք առաջին հերթին հանցավորի անձը և ոչ թե արարքի վտանգավորությունը բնութագրող հատկանիշներ են: Այս հասկացութային շփոթը նույնպես չի նպաստում օրենքի իմաստը ճիշտ ընկալելուն ու այն ճիշտ կիրառելուն:

1.4.(6) Ասվածի հետ անմիջականորեն առնչվում են պատժի նշանակման հարցերը: Այս ոլորտում առկա բացթողումներն ու թերությունները հանգում են հետևյալին:

Գործող քրեական օրենսգրքում ոչ մի կանոն նախատեսված չէ քրեական պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները հաշվի առնելու համար: Դատարանը ինքն է որոշում այս կամ այն մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքի «արժեքը»: Ուստի պետք է քննարկել այս հանգամանքների հաշվառումը որոշակիորեն ձևայնացնելու և դատարանին որոշակի կողմնորոշիչներ տալու հարցը:

Բացի այդ, գործող քրեական օրենսգրքում հանցագործությունների կրկնակիության ինստիտուտը վերացնելուց հետո բաց է մնացել պրոֆեսիոնալ հանցագործների դեմ պայքարի հարցը: Սրա հետ կապված, անհրաժեշտ է քննարկել ռեցիդիվի դեպքում պատժի խստացման անհրաժեշտության հարցը: Գործող օրենսգիրքը նախատեսում է ռեցիդիվի դեպքում միայն պատժի նվազագույն սահմանի հարցը, սակայն, անհրաժեշտ է նախատեսել նաև պատժի առավելագույն չափը խստացնելու կարգ:

Մյուս հարցը վերաբերում է հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելուն: Ներկայումս հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը որոշվում է պատիժները գումարելու սկզբունքով՝ որոշակի սահմանափակում նախատեսելով: Օրինակ՝ եթե հանցագործությունների համակցության մեջ մտնում են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ, ապա վերջնական պատիժը կարող է լինել մինչև 25 տարի ժամկետով ազատազրկում: Բայց այստեղ խնդիր կա: Մասնավորապես, ծանր հանցանքներ են ապօրինաբար բնակարան մուտք գործելով

գողությունը, առանձնապես խոշոր չափերով խարդախությունը: Ընդ որում, գողությունների համակցությունը բավականին հաճախ է հանդիպում: Հանցագործությունների համակցության դեպքում վերջնական պատիժ որոշելու գործող կանոնի պայմաններում հնարավոր է, որ մի քանի գողություն կամ խարդախություն կատարած անձը ավելի խիստ պատժվի, քան ծանրացնող հանգամանքներով սպանություն կատարած անձը, ինչը արդարացի չէ:

1.4.(7) Շատ կարևոր է տուժողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը: Պատժի համակարգը և պատժատեսակները պետք է նպատակաուղղված լինեն նաև հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը: Այս տեսանկյունից վերանայման կարիք ունի գույքի բռնագրավում և տուգանք պատժատեսակների նկատմամբ մոտեցումը. դրանք առաջին հերթին պետք է նպատակաուղղված լինեն պատճառված վնասի հատուցմանը: Մինչդեռ գործող օրենսդրության պայմաններում այս պատժատեսակները գրեթե նման գործառույթ չեն կատարում:

Մեկ այլ հարց է տուգանք պատժատեսակի կարգավորումը: Այն նախատեսված է որպես հիմնական պատիժ, սակայն, այն չափերը, որոնք նախատեսված են գործող օրենսգրքում՝ հիմնական պատժի համար շատ փոքր են: Բացի այդ, տուգանքը պետք է նախատեսվի նաև որպես լրացուցիչ պատիժ, որովհետև այն միայն որպես հիմնական պատիժ նախատեսելը շատ դեպքերում անհնարին է դարձնում օրենքի կիրառումը. դատարանը սանկցիայի կառուցվածքի պատճառով այլընտրանք չի ունենում, իսկ տուգանքի վճարումն էլ դատապարտյալի կողմից անհնարին է: Արդյունքում խիստ նվազում է քրեական օրենքի արդյունավետությունը:

1.4.(8) Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել անչափահասների քրեական պատասխանատվության ու պատժի հարցերին: Գործող քրեական օրենսգրքում այս հարցերը շատ դեպքերում թերի են կարգավորված: Մասնավորապես, վերանայման կարիք ունի անչափահասների համար նախատեսված պատժի համակարգը: Ըստ էության, գործում է միայն ազատազրկում պատժատեսակը, որովհետև մյուս պատժատեսակները օրենսդրական ոչ հստակ կարգավորման պատճառով արդյունավետ չեն: Բացի այդ, պետք է հստակ իմանալ, որ անչափահասների պատասխանատվության ու պատժի նպատակը առաջին հերթին պետք է նպատակաուղղված լինի նրանց դաստիարակությանն ու ուղղմանը, այլ ոչ թե

պատժելուն: Դատարանները ելքը գտնում են պատիժը պայմանականորեն չկիրառելով, բայց, այս ինստիտուտը իրեն չի արդարացնում: Ըստ էության չի գործում նաև դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների ինստիտուտը:

1.5. Սխալներ և հակասություններ:

Սրանք դրսևորվում են բազմաթիվ ինստիտուտներում և բազմազան ձևերով. հանցակազմի սխալ նկարագրություն, լեզվական անճշտություններ, սխալ կետադրման պատճառով օրենքի իմաստի աղավաղում, հարցի ոչ ամբողջական, սխալ լուծում և այլն:

1.5. (1) ՀՀ քր. օր.-ի հոդված 131-ը պատասխանատվություն է նախատեսում մարդուն առևանգելու համար, որտեղ հանցագործության այս տեսակը բնորոշվում է հետևյալ կերպ. «Խաբեության, վստահությունը չարաշահելու, բռնության կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով մարդուն գաղտնի կամ բացահայտ առևանգելը...»: Ինչպես տեսնում ենք, հոդվածում տրվում է մարդուն առևանգելու եղանակների սպառիչ ցանկը: Ստացվում է, որ եթե մարդուն առևանգեն, ասենք, նրա անօգնական վիճակն օգտագործելով, ապա հանցակազմը կբացակայի:

1.5. (2) Մեկ այլ հիմնախնդիր է հանցակազմի ծանրացնող հանգամանքների հարցը: Շատ դեպքերում դրանք անհիմն են նախատեսվում և հակասությունների պատճառ են դառնում: Օրինակ՝ շատ լավ գիտենք, թե ինչ վեճերի տեղիք է տալիս այն իրադրությունը, երբ հանցակազմում՝ որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է այլ հանցագործության հետ զուգորդված լինելու հանգամանքը: Դա շատ լավ երևում է սպանության ծանրացնող հանգամանքների հետ կապված: Միշտ վեճերի տեղիք է տալիս այն հարցը, թե արդյոք արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ: Եթե համակցությամբ ենք որակում, ապա ստացվում է, որ անձը նույն հանցագործության համար կրկնակի է պատժվում: Իսկ եթե բավարարվում ենք միայն որպես ծանրացնող հանգամանքներով սպանություն որակելով, ապա կարծես թե անձը մեկ հանցագործության համար է պատասխանատվության ենթարկվում: Հարցի լուծումը նման կարգի ծանրացնող հանգամանքներ նախատեսելուց ձեռնպահ մնալն է, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այլ ծանրացնող հանգամանքները (օրինակ՝ այլ հանցանքի կատարումը թաքցնելու կամ հեշտացնելու նպատակով, շահադիտական

դրդումներով, անձի կամ նրա մերձավորի՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ և այլն) փակում են հարցը:

1.5. (3) Սխալների ու հակասությունների մի խումբ էլ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերի ու ՀՀ Սահմանադրության միջև առկա հակասություններին: Մասնավորապես, հակասություն է առկա ՀՀ քր. օր.-ի 42 հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի 2-րդ մասի միջև, համաձայն որի՝ անձին կյանքից զրկելը անհրաժեշտ պաշտպանության վիճակում պետք է պայմանավորված լինի բացարձակ անհրաժեշտությամբ: Մինչդեռ 42 հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը միասին ընթերցելու դեպքում ստացվում է, որ գործող քր. օր.-ը թույլ է տալիս կյանքից զրկելով պաշտպանությունն իրականացնել նաև այն դեպքում, երբ դա պայմանավորված չի եղել բացարձակ անհրաժեշտությամբ:

Միջազգային պայմանագրերի դրույթները որոշ հանցակազմերում սխալ են արտացոլված կամ ամբողջությամբ չեն արտացոլված:

1.6. Բացեր

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը և քրեական օրենսդրությայն նորմերի վերլուծությունը ցույց են տալիս, որ շատ հարցեր իրենց օրենսդրական լուծումը չեն ստացել: Օրինակները շատ են:

Այսպես, քրեական իրավունքի տեսությանը հայտնի է քրեաիրավական նորմերի մրցակցության ինստիտուտը, երբ կատարված արարքի կամ իրադրության հատկանիշները առկա են քրեական օրենսգրքի մեկից ավելի տարբեր հոդվածներում և հարց է առաջանում, թե որ նորմը պետք է կիրառվի տվյալ իրադրության կապակցությամբ: Քրեական իրավունքի տեսության մեջ այս հարցը կարգավորված է, այն կարգավորված է նաև մի շարք երկրների քրեական օրենսդրություններում: Մինչդեռ ՀՀ քրեական օրենսգիրքը հարցի ոչ մի լուծում չի պարունակում, ինչը գործնական դժվարություններ է առաջացնում. պրակտիկայում կարող է կիրառվել հարցի լուծման ցանկացած եղանակ և հնարավոր չի լինի հավաստել դրա սխալ կամ ճիշտ լինելը:

Մեկ այլ օրինակ: Քրեական օրենսգիրքը նախատեսում է քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու, պատիժը մեղմացնելու մի շարք ինստիտուտներ: Ընդ որում, կարող են լինել իրադրություններ, որ միաժամանակ առկա լինեն դրանցից մի քանիսի հատկանիշները: Օրինակ՝ հնարավոր է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակել և պատիժը պայմանականորեն չկիրառել: Ընդ որում, այս երկու ինստիտուտների միջև մրցակցությունը բացակայում է: Հարց է առաջանում, կարո՞ղ է արդյոք դատարանը միաժամանակ կիրառել այս երկու ինստիտուտները: Քրեական օրենքը այս հարցին չի պատասխանում:

1.7. Վերոգրյալը բավարար է ՀՀ քրեական օրենսգրքի արմատական բարեփոխման անհրաժեշտությունը հիմնավորելու համար: Ընդ որում, հայեցակարգային սխալներն ու կրիմինալոգիական իրողության անտեսումը վերացնելը հնարավոր է միայն նոր քրեական օրենսգրքի շրջանակներում, որովհետև հայեցակարգային մեկ դրույթի փոփոխությունը հանգեցնում է բազմաթիվ քրեաիրավական նորմերի և ամբողջ քրեական օրենսգրքի տրամաբանության փոփոխության: Նույնիսկ միայն սխալներն ու հակասությունները վերացնելու դեպքում իրականում խոսքը կարող է նոր քրեական օրենսգրքի մասին լինել, որովհետև

սխալներն ու հակասություններն այնքան շատ են, որ առնչվում են գործող օրենսգրքի հոդվածների մոտ 90 տոկոսին և դրանց շտկումը կհանգեցնի ամբողջ քրեական օրենսգրքի կառուցվածքի ու բովանդակության փոփոխության:

2. ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգային բնութագիրը

2.1. Վերոգրյալը թույլ է տալիս հավաստելու, որ անհրաժեշտ է նոր հայեցակարգի վրա հիմնված, կրիմինալոգիական իրողությունն արտացոլող, ժամանակակից մարտահրավերների դեմ պայքարի արդյունավետությունն ապահովող, քրեական իրավունքի տեսության ու օրենսդրության ժամանակակից միտումներին համահունչ քրեական նոր օրենսգիրք: Իհարկե քրեական նոր օրենսգիրքը պետք է պահպանի այն լավագույնը, ինչն առկա է գործող օրենսգրքում և զերծ մնա այնպիսի հեղափոխական բնույթի փոփոխություններից, որոնք մեր պայմաններում կարող են դժվարացնել կամ անհնարին դարձնել դրա կիրառումը:

2.2. Նոր քրեական օրենսգիրքը պետք է նպատակ հետապնդի լուծելու հետևյալ խնդիրները.

– ապահովել անձի, հասարակության և պետության անվտանգությունը հանցավոր ոտնձգություններից,

– հնարավորինս նվազեցնել հանցավորությամբ պայմանավորված սոցիալական լարվածությունը,

– ապահովել քրեական օրենսդրության համապատասխանությունը հանցավորության զարգացման ժամանակակից միտումներին և կրիմինալ սպառնալիքներին,

– ամրագրել հանցավոր արարքները ոչ հանցավորներից սահմանազատելու հստակ հատկանիշներ, որոնք կբացառեն օրենքի տարածական մեկնաբանությունը,

– երաշխավորել հանցագործության զոհի (տուժողի) իրավունքների և ազատությունների պաշտպանությունը, առավելագույն պայմաններ ստեղծել հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքն իրականացնելու համար,

– կատարելագործել քրեաիրավական ներգործության միջոցների համակարգը՝ հարկադրանքի, կանխման և վերականգնողական գործառույթների հավասարակշռությունն ապահովելու նպատակով,

– ապահովել քրեական օրենսդրության համապատասխանությունը վավերացված միջազգային պայմանագրերի նորմերին, միջազգային իրավունքի սկզբունքներին, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությանը:

Նոր քրեական օրենսգրքի հիմնական հայեցակարգային բնութագրիչները պետք է լինեն հետևյալները.

2.3. Քրեական նոր օրենսգիրքը պետք է հիմնվի ***կրիմինալոգիական իրողության*** վրա և հաշվի առնի այն: Այս տեսանկյունից անչափ կարևոր է հանցակազմերը կառուցելիս, պատիժները նախատեսելիս, ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքներ սահմանելիս հաշվի առնել ոչ միայն քրեական իրավունքի դոգմատիկան, այլև բժշկության, հոգեբանության, կրիմինալոգիայի և այլ գիտությունների նվաճումները:

Քրեական օրենսգիրքը պետք է հիմնվի ոչ միայն «արարքի հայեցակարգի» այլև ***«անձի հայեցակարգի»*** վրա: Անհրաժեշտ է հասկանալ, որ օրենքը պատժում է ոչ թե հանցագործությունը, այլ հանցանք կատարողին: Ըստ այդմ էլ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու, պատիժ նշանակելու, պատժից կամ պատասխանատվությունից ազատելու հարցերը անհրաժեշտ է կարգավորել հիմք ընդունելով ոչ միայն հանցագործության պատկանելությունը դասակարգման այս կամ այն խմբին, այլև հանցանք կատարողի անձնավորությունը, նրա հանրային վտանգավորությունը, կրիմինալոգիական բնութագիրը, ուղղման և վերասոցիալականացման հնարավորությունները: Սրա հետ կապված անհրաժեշտ է, որ քրեական պատասխանատվության և պատժի հարցերը լուծելիս հաշվի առնվեն ոչ միայն հանցագործությամբ պատճառված վնասի չափը, այլև հանցագործության եղանակը, գործիքներն ու միջոցները, հանցագործության դրդապատճառը, նպատակը և այլն:

2.4. Անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով հետևողականորեն ապահովել ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքը: Դրա համար անհրաժեշտ է օրենսդրորեն կարգավորել իրավաբանական ու փաստական սխալի ինստիտուտները,

լուծել մեղքի ձևի ու տեսակի խնդիրը աֆեկտի և հարբածության վիճակում հանրորեն վտանգավոր արարք կատարելու դեպքերում: Սրա հետ կապված՝ անհրաժեշտ է քրեական օրենսգրքում ներմուծել մեղքի արժեքաբանական տեսության որոշ տարրեր:

2.5. Անհրաժեշտ է վերանայել պատժի համակարգը և դրանում նախատեսել ազատազրկմանը այլընտրանք հանդիսացող գործուն պատժատեսակներ, կատարելագործել եղածները, նախատեսել քրեական պատասխանատվությանը այլընտրանք հանդիսացող միջոցներ, ինչը թույլ կտա տնտեսելու քրեաիրավական հարկադրանքը: Քրեաիրավական հարկադրանքի տնտեսումը կարող է իրականացվել նաև քրեական օրենսգրքի Հատուկ մասի մի շարք հոդվածներում ազատազրկում պատժատեսակի ավելի կարճ ժամկետներ նախատեսելով (դեպենալիզացիա):

2.7. Քրեական օրենսգիրքը պետք է մեծ ուշադրություն դարձնի տուժողի շահերի պաշտպանությանը և պատճառված վնասի հատուցմանը: Այս տեսանկյունից կատարելագործման կարիք ունեն գույքային սանկցիաները: Աշխարհի շատ երկրների քրեական օրենսդրություններում ուղղակիորեն կամ անուղղակիորեն արտացոլված է այն հանգամանքը, որ դրանք նպատակաուղղված են պատճառված վնասի հատուցմանը: Ընդ որում, այս սանկցիաները խիստ մանրակրկիտ կարգավորում են ստանում:

2.8. Անհրաժեշտ է իրականացնել ապաքրեականացում և քրեականացում:

Ապաքրեականացումը պետք է վերաբերի այն արարքներին, որոնց քրեականացումը իրականացվել է պահի ազդեցության տակ, մեկ կոնկրետ դեպքի առնչությամբ՝ առանց հաշվի առնելու արարքների քրեականացման անհրաժեշտությունը: Բացի այդ, ապաքրեականացումն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք գործոններ: Դրանց թվին է դասվում արարքի հանրային վտանգավորության ցածր աստիճանը, մասնավորապես՝ պատճառված վնասի նվազ կարևորությունը, դրա բնույթը: Օրինակ՝ զուտ գույքային վնասի դեպքում ապաքրեականացումը կարող է վերաբերել տվյալ հանցատեսակի այն դեպքերին, երբ պատճառված գույքային վնասը մանր կամ զգալի չափերի է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատճառված վնասը կարելի է վերականգնել, օրինակ, քաղաքացիաիրավական միջոցներով: Իհարկե խոսքը չի վերաբերում հանցավորության միջուկը կազմող դասական հանցագործություններին: Ուստի,

ապաքրեականացում իրականացնելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել այդ արարքի դեմ ոչ թե քրեաիրավական, այլ վարչական կամ քաղաքացիաիրավական միջոցներով պայքարելու հնարավորությունը:

Մյուս կարևոր գործոններից է, օրինակ, հանցագործության եղանակը: Գույքային վնաս պատճառող հանցատեսակների պարագայում, մանավանդ երբ դրանք անզգուշությամբ են կատարվում, հիմնականում կարելի է քրեականացված թողնել տվյալ հանցատեսակի միայն այն դեպքերը, որոնք կատարվում են առավել վտանգի աղբյուրների շահագործման կամ վտանգավոր նյութերի հետ վարվելու կանոնները խախտելով:

Կարևոր նշանակություն ունի մեղքի ձևը: Կարելի է ապաքրեականացնել անզգուշությամբ կատարվող այն հանցագործությունները, որոնք զուտ գույքային վնաս են պատճառում: Նման դեպքերում հանրային ոչ բարձր վտանգավորություն ունի ոչ միայն հանցագործությունը, այլև հանցանք կատարողը, ուստի քրեաիրավական հարկադրանքը չափազանց խիստ կլինի:

Որոշ դեպքերում կարելի է մասնակի ապաքրեականացում իրականացնել՝ հանցակազմի մեջ լրացուցիչ հատկանիշներ մտցնելով, ինչը կնպաստի հանցավոր համարվող արարքների շրջանակի նեղացմանը: Մասնավորապես՝ հանցակազմի մեջ որպես լրացուցիչ հատկանիշներ կարող են ընգրկվել հանցագործության շարժառիթը, կատարման եղանակը, ձևական հանցակազմերի դեպքում՝ հանրորեն վտանգավոր հետևանքները: Այս հատկանիշները կարող են դառնալ այն ցուցիչները, որոնք օգնությամբ կարելի է հանցավոր և իրենից բարձր հանրային վտանգավորություն ներկայացնող արարքները սահմանազատել ոչ հանցավոր արարքներից:

Ապաքրեականացման համար կարևոր նշանակություն ունի նաև հանրորեն վտանգավոր այս կամ այն արարքի տարածվածությունը, տվյալ արարքի կամ քրեաիրավական արգելքի նկատմամբ բնակչության վերաբերմունքը: Եթե իրավական բարիքներին ոչ էական վնաս պատճառող արարքը հազվադեպ է, եթե տվյալ արարքը մարդկանց մեծ մասի կողմից չի դատապարտվում կամ ընկալվում է որպես ոչ բարձր վտանգավորություն ունեցող, ապա քրեաիրավական միջոցներով դրա դեմ պայքարը դառնում է անիմաստ, քրեական օրենքը չի կատարում իր կանխարգելիչ գործառույթը իսկ իրավապահպան մարմիններն էլ իզուր ծանրաբեռնվում են: Դրա համար էլ

ապաքրեականացում իրականացնելիս անհրաժեշտ է հիմնվել այս կամ այն հանցատեսակի տարածվածության, դրանով պատճառվող վնասների չափի ու բնույթի վերաբերյալ վիճակագրական տվյալների վրա:

Ապաքրեականացման համար կարևոր չափանիշ կարող են լինել նաև ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերը, ՀՀ Սահմանադրությունը. եթե նշված իրավական ակտերով որևէ արարք թույլատրելի է համարվում կամ անթույլատրելի է համարվում դրա համար քրեական պատասխանատվությունը, ապա այդ արարքը պետք է ապաքրեականացվի (օրինակ՝ չի կարելի քրեական պատասխանատվություն սահմանել պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար, եթե անձը հնարավորություն չի ունեցել դրանք կատարելու կամ չկատարելը հանրորեն վտանգավոր նպատակներ չի հետապնդել):

Վերոգրյալ չափանիշների հիման վրա անհրաժեշտ է վերլուծության ենթարկել ՀՀ գործող քրեական օրենսգրքում նախատեսված հանցակազմերը: Որոշ դեպքերում հնարավոր է իրականացնել ոչ թե ապաքրեականացում այլ դեպենալիզացիա՝ զգալիորեն մեղմացնելով տվյալ հանցատեսակի կամ դրա առանձին դրսևորումների համար օրենքով նախատեսված սանկցիաները՝ հաշվի առնելով նաև դատական պրակտիկան: Ապաքրեականացումը թույլ կտա տնտեսելու քրեաիրավական հարկադրանքը, որը ներկայումս ամբողջ աշխարհում արդիական խնդիր է:

Նույն գործոնները հաշվի առնելով պետք է իրականացվի նաև քրեականացումը: Քրեականացումը պայմանավորված է նաև հետևյալ հանգամանքներով. միջազգային պարտավորություններ, գլոբալ գործընթացներ, գիտատեխնիկական առաջընթաց (մասնավորապես՝ կիբեռհանցավորություն, գենետիկայի, բժշկագիտության բնագավառում ներկայումս տարածում ստացող հանրավտանգ արարքներ, ահաբեկչության տարբեր դրսևորումներ և այլն): Քրեականացումը պայմանավորված է նաև հանրավտանգ արարքների այնպիսի նոր դրսևորումներով կամ դրանց հնարավորությամբ, որոնք հասարակական հարաբերություններում տեղի ունեցող գործընթացների հետևանք են: Մասնավորապես այդպիսի նոր դրսևորումներ են առկա կամ կարող են ի հայտ գալ տնտեսական հարաբերություններում (ռեյդերություն, ինսայդերական հակահիրավական գործունեություն և այլն): Բացի այդ, քրեականացում իրականացնելիս պետք է հաշվի առնել արդեն նշված գործոնները՝ արարքի հանրային

վտանգավորության աստիճանը, դրա տարածվածությունը, հասարակական հարաբերությունների զարգացման համար խոչընդոտ լինելը, այլ՝ ոչ քրեաիրավական միջոցներով այդ արարքի դեմ պայքարի անարդյունավետությունը, համանման հանրային վտանգավորություն ունեցող արարքների արդեն իսկ քրեականացված լինելու փաստը, ինչը ապացուցել է իր արդյունավետությունը: Քրեականացման համար կարևոր չափանիշ կարող է լինել նաև դատական պրակտիկան: Ներկայումս հանդիպում են դեպքեր, երբ իրավակիրառողը հնարավորություն չի ունենում հանրային բարձր վտանգավորություն ներկայացնող և քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին շատ նման դրսևորմանը համապատասխան քրեաիրավական գնահատական տալ, որովհետև այն քրեականացված չէ կամ համապատասխան հանցակազմը հստակ ձևակերպված չէ, ապահովված չէ իրավական որոշակիությունը: Փաստորեն առկա է օրենսդրական բացը: Նման դեպքերում հարցի լուծման եղանակը նման արարքները հստակ հատկանիշներով օրենքում նախատեսելն է:

2.9. Պետք է խստացնել քրեական պատասխանատվությունը կրկնահանցագործների նկատմամբ՝ նախատեսելով նրանց նկատմամբ պատժի նշանակման այնպիսի կարգ, որն իրականում կհամապատասխանի այդ անձանց հանրային վտանգավորության աստիճանին: Լուծման ուղիներից մեկը ռեցիդիվի դեպքում պատժի առավելագույն չափի խստացումն է, ինչն առկա է երկրների մեծ մասի քրեական օրենսդրություններում:

2.10. Անհրաժեշտ է ապահովել քրեական օրենսգրքում նորմերի ձևակերպման հստակությունը, անհակասականությունը, իրավական որոշակիությունը, բացառել լեզվական անճշտությունները, հակասությունները այլ իրավական ակտերի հետ:

Քրեական օրենսգիրքը պետք է ունենա հասկացությունների ցանկ՝ դրանց բովանդակության պարզաբանմամբ, ինչը զգալիորեն կհեշտացնի իրավակիրառողի գործը, կապահովի հասկացությունների միատեսակ ըմբռնումը և օրենքի միատեսակ մեկնաբանությունն ու կիրառումը: Բացի այդ, անհրաժեշտ է սահմանել հանցագործությունների որակման կանոնները հատկապես հանցագործությունների համակցության և բարդ հանցագործությունների դեպքերում:

Քրեական օրենսգիրքը պետք է հնարավորինս մանրամասն կարգավորի հարցերը և հնարավոր իրադրությունները. այն՝ ինչը կարելի է օրենքով կարգավորել, պետք է կարգավորվի: Այս տեսանկյունից կարևոր նշանակություն ունի հատկապես պատժի նշանակմանը, քրեական պատասխանատվությունից ու պատժից ազատելուն վերաբերող դրույթների հստակ, մանրամասն նկարագրությունը:

Նշված միջոցառումները կարող են էապես նվազեցնել քրեական օրենսգրքի կոռուպցիոն ռիսկայնությունը:

2.11. Պետք է ապահովել քրեական օրենսգրքի համապատասխանությունը վավերացված միջազգային պայմանագրերին և ՀՀ Սահմանադրությանը:

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. Քրեական օրենք

1.1. Քրեական օրենսգրքի գաղափարախոսական հենքի ապահովման համար կարևոր նշանակություն ունի այն ***խնդիրների*** հստակեցումը, որոնց լուծմանն է ուղղված լինելու ընդունվող օրենսդրական ակտը: Գործող քրեական օրենսգրքում որպես առաջադրված խնդիրներ սահմանված են՝ հանցավոր ոտնձգություններից մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, իրավաբանական անձանց իրավունքների, սեփականության, շրջակա միջավայրի, հասարակական կարգի և անվտանգության, սահմանադրական կարգի, խաղաղության և մարդկության անվտանգության պաշտպանությունը, հանցագործությունների կանխումը: Ընդհանրապես, օրենսդրական ձևակերպումների մեջ տարբեր արժեքների թվարկման հաջորդականությունը վկայում է դրանց կարևորության և պաշտպանության առաջնահերթության մասին: ՀՀ քրեական օրենսգրքում ներկայացված ձևակերպումից հետևում է, որ պետությունը սեփականության պաշտպանությունը առավել բարձր է դասում, օրինակ, խաղաղության և մարդկության անվտանգության պաշտպանությունից, ինչը սակայն տրամաբանորեն պետք է իր կարևորությամբ զիջեր միայն մարդու իրավունքների և անվտանգության պաշտպանությանը: Հետևաբար, քրեական նոր օրենսգրքում այս թերությունը պետք է վերացվի:

Միաժամանակ, քրեական օրենսգրքի խնդիրները պետք է լրացվեն. առաջին հերթին, պետք է նախատեսվի հանցանք կատարած անձին իր կատարած արարքի համար համաչափ պատասխանատվության և պատժի ենթարկելը, նրան որպես օրինապահ անձ հասարակություն վերադարձնելը, հասարակությունում նրա վերաինտեգրումն ապահովելը:

1.2. Գործող քրեական օրենսգիրքը թվարկում է քրեական իրավունքի հետևյալ սկզբունքները՝ օրինականության, օրենքի առջև հավասարության, պատասխանատվության անխուսափելիության, անձնական պատասխանատվության, ըստ մեղքի պատասխանատվության, արդարության և պատժի անհատականացման, մարդասիրության: Այնուհանդերձ, հիշյալ սկզբունքները հստակեցման կարիք ունեն՝ թե՛ բովանդակության, թե՛ գործունեության սահմանների տեսակետից:

Նախ, վերանայման կարիք ունի ***օրինականության սկզբունքը***: Գործող քրեական օրենսգիրքը սահմանում է, որ «արարքի հանցավորությունը, պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են միայն քրեական օրենքով», մինչդեռ այս ձևակերպումը չի արտացոլում իրական պատկերը այնպիսի միջազգային կոնվենցիաների վավերացման պարագայում, որոնք քրեական պատասխանատվություն սահմանող դրույթներ են պարունակում: Նման պարագայում արդեն իսկ վավերացված, հետևաբար նաև ՀՀ օրենսդրության բաղկացուցիչ մասը կազմող միջազգային փաստաթղթի նորմերը գործում են ուղղակիորեն, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսքը վերաբերում է արարքի հանցավորության և դրա համար կոնկրետ պատժատեսակի և պատժաչափի սահմանմանը: Նման վիճակ կարող է առաջանալ, օրինակ, ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթում այնպիսի դրույթի առկայության դեպքում, որը ՀՀ քաղաքացու կողմից արտերկրում հանցանք կատարելու պարագայում ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվության ենթարկելու համար կսահմանի կրկնակի քրեականացման պահանջի վերացում:

Բացի այդ, օրինականության սկզբունքի էությունն այն է, որ անձի կողմից կատարված արարքը կարող է համարվել հանցագործություն, եթե այն որպես այդպիսին նախատեսված էր դրա կատարման պահին գործող օրենքով: Այսինքն՝ շեշտադրում պետք է կատարվի նաև արարքի հանցավորության, պատժելիության և քրեաիրավական հետևանքների սահմանման ժամանակի վրա:

Հետևաբար, օրինականության սկզբունքի ներկայիս բնորոշումը փոփոխման կարիք ունի՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ հստակեցման կարիք ունի նաև անալոգիայի կիրառման արգելքը սահմանող դրույթը: Վերջինիս ձևակերպումը պետք է լինի հստակ՝ պարզորոշ կերպով ցույց տալով, որ քրեական պատասխանատվության սահմանման առումով արգելվում է ինչպես օրենքի, այնպես էլ իրավունքի անալոգիան:

Քրեական օրենսգրքում ներկայումս տեղ գտած ***օրենքի առջև հավասարության սկզբունքը*** անհարկի, առավել սահմանափակ կտրվածքով կրկնում է ՀՀ Սահմանադրության մեջ առկա դրույթը և քրեաիրավական առումով էական նշանակություն չունի: ՀՀ Սահմանադրությունից տարբերվող հիմնական մոտեցումը հիշյալ ձևակերպման մեջ այն է, որ օրենսդիրը սահմանում է, որ հանցանք կատարած անձինք հավասար են օրենքի առջև և ենթակա են քրեական պատասխանատվության՝

անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից… գույքային կամ այլ դրությունից՝ հիշյալ ցանկում չնախատեսելով տարիքը: Այնուհանդերձ, այդ հարցը արդեն իսկ կանոնակարգվում է քրեական օրենսգրքի մեկ այլ՝ քրեական պատասխանատվության տարիքը սահմանող հոդվածով: Մինչդեռ, ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրում ստացած օրենքի առջև հավասարության սկզբունքը հնարավորություն է տալիս ոչ միայն կանոնակարգել քրեական պատասխանատվության ենթակա լինելու առումով հանցանք կատարած անձանց օրենքի առջև հավասարությունը, այլև առավել ամբողջական կերպով երաշխավորում է անձանց հավասարությունը քրեաիրավական պաշտպանությունից օգտվելիս, քրեաիրավական առանձին ինստիտուտներն իրացնելիս (անհրաժեշտ պաշտպանություն, հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառել և այլն): Նման պարագայում, քրեական օրենսգրքում օրենքի առջև հավասարության սկզբունքը սահմանող դրույթի նախատեսումը թվում է անիմաստ:

Հիմնավորված չի թվում նաև գործող քրեական օրենսգրքում ***պատասխանատվության անխուսափելիության*** սկզբունքի նախատեսումը: Ինքնին, քրեական օրենսգրքում քրեական պատասխանատվության հիմքի և պայմանների, ինչպես նաև քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու հիմքերի և պայմանների սպառիչ թվարկումը, ՀՀ Սահմանադրությամբ սահմանված՝ օրենքի առջև հավասարության սկզբունքի հետ մեկտեղ, վկայում են, որ հանցանք կատարած յուրաքանչյուր ոք ենթակա է պատասխանատվության, իսկ քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը հնարավոր է միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում: Ավելին, քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի՝ գործող քրեական օրենսգրքում առկա ձևակերպման մեջ առկա է թերություն, քանի որ վերջինս սահմանում է, որ քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը հնարավոր է միայն ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում, մինչդեռ քրեական պատասխանատվությունից ազատելը հնարավոր է նաև ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթով նախատեսված, սակայն դեռևս ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրում չստացած հիմքերի և պայմանների առկայության դեպքում:

Փոփոխությունների կարիք է զգում նաև ***ըստ մեղքի պատասխանատվության սկզբունքի*** բնորոշումը: Քննարկվող սկզբունքի ներկայիս ձևակերպումը սահմանում է, որ անձը քրեական պատասխանատվության ենթակա է միայն հանրության համար վտանգավոր այնպիսի գործողության կամ անգործության և հանրության համար վտանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից: Փաստորեն, օրենսդիրը սահմանել է մեղքի առկայության անհրաժեշտությունը քրեական պատասխանատվության ենթարկելու համար, սակայն չի հստակեցրել, որ անձի քրեական պատասխանատվությունը հնարավոր է միայն այն ծավալով, որքանով որ կատարված արարքը կարող է նրան մեղսագրվել: Մասնավորապես, եթե անձի արարքից առաջացել են, օրինակ, ծանր հետևանքներ, ապա դրանց համար նա կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի միայն այն դեպքում, եթե հավաստվել է այդ հետևանքների նկատմամբ անձի կողմից դիտավորության կամ անզգուշության դրսևորումը:

Միաժամանակ, գործող քրեական օրենսգիրքը սահմանում է, որ արգելվում է օբյեկտիվ մեղսայնացումը, այն է՝ առանց մեղքի վնաս պատճառելու համար քրեական պատասխանատվությունը: Մինչդեռ օրենսդրական մակարդակով հստակ մատնանշման կարիք ունի, որ արգելվում է ոչ միայն առանց մեղքի վնաս պատճառելու համար քրեական պատասխանատվությունը, այլև առանց մեղքի քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված արարքի օբյեկտիվ կողմը կատարելու, կամ այն արարքն անզգուշությամբ կատարելու համար քրեական պատասխանատվությունը, որի հանցակազմը նկարագրելիս օրենսդիրը նախատեսել է մեղքի միայն դիտավորյալ ձևի առկայությունը:

Արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը ևս բարելավման կարիք ունի: Գործող քրեական օրենսգրքով հիշյալ սկզբունքի ձևակերպմամբ շեշտադրումը դրվում է հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատժի և քրեաիրավական ներգործության այլ միջոցների արդարացիության վրա, մինչդեռ անհրաժեշտ է հստակեցնել նաև անձի նկատմամբ կիրառվող կոնկրետ օրենսդրական դրույթի արդարացիությունը երաշխավորելու

անհրաժեշտությունը: Միաժամանակ, պետք է հստակեցնել նույն հանցագործության համար անձին կրկին (ոչ թե երկրորդ անգամ) դատապարտելու արգելքը:

Վերանայման կարիք ունի ***մարդասիրության սկզբունքի*** նախատեսումը, քանի որ գործող քրեական օրենսգրքում տեղ գտած ձևակերպումը առավելապես դեկլարատիվ բնույթ ունի և քրեաիրավական կտրվածքով առանձնահատուկ չէ: Գործող քրեական օրենսգիրքը սահմանում է, որ «ՀՀ քրեական օրենսգիրքը ծառայում է մարդու ֆիզիկական, հոգեկան, նյութական և այլ անվտանգությունն ապահովելուն»: Սակայն նույն հաջողությամբ, օրենսդրական այլ ճյուղերը, օրինակ, վարչական օրենսդրությունը, ևս ծառայում են մարդու (ինչպես նաև իրավաբանական անձանց, հասարակության, պետության) անվտանգությունն ու այլ շահերն ապահովելուն:

Բացի այդ, ներկայացնելով մարդասիրության սկզբունքը, գործող քրեական օրենսգիրքը սահմանում է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Հիշյալ դրույթը արդեն իսկ նախատեսված է ՀՀ Սահմանադրության հոդված 17-ում, հետևաբար դրա նախատեսումը քրեական օրենսգրքում, որպես մարդասիրության սկզբունքի արտահայտություն, սահմանադրական դրույթի անհարկի և ոչնչով չարդարացված կրկնություն է:

Միևնույն ժամանակ, քրեական օրենսգրքի բազմաթիվ դրույթներ իրենց բովանդակային առումով մարդասիրության սկզբունքի դրսևորում են հանդիսանում, օրինակ՝ ցմահ ազատազրկման կիրառման արգելքը անչափահասների, հղի կանանց նկատմամբ, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման ինստիտուտը և այլն: Նման պարագայում մարդասիրության սկզբունքի առանձնացումը որպես ինքնուրույն քրեաիրավական սկզբունք առավելապես տեսական նշանակություն կարող է ունենալ և գործնական առումով արդարացված չէ:

1.3. Ճշգրտման կարիք ունի նաև ՀՀ քրեական օրենսդրության բնորոշումը. գործող քրեական օրենսգրքի հոդված 1-ը սահմանում է, որ «ՀՀ քրեական օրենսդրությունը բաղկացած է քրեական օրենսգրքից: Քրեական պատասխանատվություն նախատեսող նոր օրենքներն ընդգրկվում են ՀՀ քրեական օրենսգրքում»: Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, բլանկետային դիսպոզիցիա պարունակող նորմերի պարագայում անհրաժեշտություն է առաջանում դիմել օրենսդրական այլ ակտերի, որոնց դրույթների

մեկնաբանման պարագայում է միայն հնարավոր լինում որոշել հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Նման պարագայում ակնհայտ է, որ քրեական օրենսդրությունը չի սահմանափակվում միայն քրեական օրենսգրքով:

Միաժամանակ, դժվար է համաձայնվել այն մոտեցման հետ, որ քրեական պատասխանատվություն նախատեսող նոր օրենքներն ընդգրկվում են ՀՀ քրեական օրենսգրքում և կիրառություն են ստանում միայն քրեական օրենսգրքում ընդգրկվելուց հետո: Միջազգային փաստաթղթերի վավերացմամբ վերջիններս դառնում են ՀՀ օրենսդրության բաղկացուցիչ մասը, ավելին՝ քրեական օրենսգրքի համեմատ ունեն ավելի բարձր իրավաբանական ուժ: Հետևաբար, եթե վավերացված միջազգային փաստաթղթում սահմանվում է քրեական պատասխանատվություն, օրինակ՝ վերացվում է տարածության մեջ քրեական օրենքի գործողության քաղաքացիության սկզբունքի կիրառման նախապայման հանդիսացող կրկնակի քրեականացման պահանջը, ապա այն գործում է անկախ նրանից՝ այդ դրույթն ընդգրկվել է ՀՀ քրեական օրենսգրքում, թե ոչ: Այլ խնդիր է, որ քրեական օրենսգրքում պարտադիր պետք է ընդգրկվեն արարքի հանցավորությունը սահմանող նորմերը և այդ հանցակազմերի համար սահմանվեն պատժատեսակներ և պատժաչափեր, քանի որ միջազգային փաստաթղթերում ներկայացված հանցակազմերի համար պատժատեսակ և պատժաչափ սահմանված չէ, ուստի դրանք չեն կարող կիրառվել առանց քրեական օրենսգրքում ամրագրվելու:

Ուստի, քրեական նոր օրենսգրքում պետք է հստակեցվեն քրեական օրենսդրության շրջանակները:

1.4. Հստակեցման կարիք ունի նաև ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողության հարցը: Մասնավորապես, գործող քրեական օրենսգիրքը սահմանում է, որ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում է դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով, սակայն չի հստակեցնում, թե որ օրենքը պետք է կիրառվի արարքի քրեաիրավական այլ հետևանքների առումով: Մինչդեռ օրենսդրորեն պետք է կանոնակարգվի, որ արարքի հանցավորությունը, պատժելիությունը և քրեաիրավական այլ հետևանքները որոշվում են դրա կատարման ժամանակ գործող քրեական օրենքով:

Նկատի ունենալով այն, որ նյութական, շարունակվող, տևող, հանցակցությամբ կատարվող հանցագործությունների կատարման ժամանակի վերաբերյալ առկա են բազմաթիվ վեճեր, անհրաժեշտ է օրենսդրորեն հստակեցնել դրանցից յուրաքանչյուրի պարագայում քրեական օրենքի գործողության հիմնախնդիրները:

Գործող քրեական օրենսգրքում կանոնակարգված է նաև քրեական օրենքի հետադարձ ուժի հիմնախնդիրը, սակայն գործնական կիրառության արդյունավետության ապահովման տեսակետից անհրաժեշտ է հստակեցնել այն իրավական ազդեցությունը և ընթացակարգը, որը առկա կլինի օրենքին հետադարձ ուժ տալու պարագայում: Միաժամանակ, օրենսդրորեն պետք է կանոնակարգվի միջանկյալ քրեական օրենքի կիրառման հարցը: Գործող քրեական օրենսգիրքը այդ հարցին չի պատասխանել, մինչդեռ օրենսդրորեն անհրաժեշտ է սահմանել, որ արարքի հանցավորությունը լրիվ կամ մասնակիորեն վերացնող, պատիժը մեղմացնող կամ անձի վիճակը բարելավող միջանկյալ օրենքը ունի հետադարձ ուժ:

1.5. Թե՛ տեսական և թե՛ գործնական կարևորություն ունի նաև տարածության մեջ քրեական օրենքի գործողության հստակ կանոնակարգումը:

Նախ, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել, թե որն է համարվում պետության տարածք, որի վրա տարածվում է քրեական օրենսգրքի գործողությունը: Միաժամանակ, հստակեցման կարիք ունի դիվանագիտական, հյուպատոսական հաստատությունների տարածքներում կատարված հանցանքների դեպքում քրեական օրենքի կիրառման կարգավորումը: Թեև քննարկվող հարցերի կանոնակարգումն իրականացվում է ՀՀ կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով, այնուհանդերձ գործնականում քրեական օրենքի արդյունավետ կիրառումն ապահովելու, տարածության մեջ քրեական օրենքի գործողության վերաբերյալ ծագող հարցերին համակարգված կերպով արձագանքելու համար նպատակահարմար է դրանց հստակեցումը քրեական օրենսգրքում:

Ինչպես և գործող քրեական օրենսգրքում, նոր օրենքում անհրաժեշտ է նախատեսել տարածության մեջ քրեական օրենքի գործողության տարածքային, քաղաքացիության, ունիվերսալ և ռեալ սկզբունքները:

Քրեական օրենքի գործողության տարածքային սկզբունքի սահմանումը պետք է հստակեցնել՝ հատուկ ուշադրություն դարձնելով հանցանքի կատարման վայրի որոշմանը՝ ձևական, նյութական, շարունակվող, տևող, հանցակցությամբ կատարվող հանցագործությունների դեպքում:

Հստակեցման կարիք ունի նաև գործող քրեական օրենսգրքով նախատեսված քաղաքացիության սկզբունքի այն դրույթը, որը նախատեսում է քննարկվող սկզբունքի կիրառումը այն պարագայում, եթե ՀՀ-ից դուրս հանցանք կատարած ՀՀ քաղաքացին կամ ՀՀ-ում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձը հանցանքի կատարման երկրում չի դատապարտվել: Նկատի ունենալով այն, որ անձը կարող է այդ երկրում ոչ թե դատապարտված լինել, այլ ազատված լինել քրեական պատասխանատվությունից, ճիշտ կլինի օրենսդրորեն սահմանել այլ երկրում ոչ թե դատապարտված չլինելու, այլ քրեական պատասխանատվության ենթարկված չլինելու հանգամանքը: Ընդ որում, նույն մոտեցումը պետք է դրսևորել նաև քրեական օրենքի գործողության ունիվերսալ սկզբունքի սահմանման ժամանակ:

Փոփոխության կարիք ունի նաև ՀՀ գործող քրեական օրենսգրքով սահմանված՝ քրեական օրենքի գործողության ռեալ սկզբունքը: Մասնավորապես, ներկայիս ձևակերպման համաձայն, ռեալ սկզբունքը կիրառվում է օտարերկրացիների կամ ՀՀ-ում մշտապես չբնակվող քաղաքացիություն չունեցող անձանց կողմից ՀՀ տարածքից դուրս այնպիսի ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների կատարման դեպքում, որոնք ուղղված են ՀՀ շահերի կամ ՀՀ քաղաքացիների իրավունքների և ազատությունների դեմ: Ռեալ սկզբունքի սահմանափակումը միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններով արդարացված չի թվում, ուստի նման սահմանափակումը պետք է վերացնել և ռեալ սկզբունքի կիրառումը հնարավոր դարձնել նաև ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների կատարման պարագայում: Միաժամանակ, ռեալ սկզբունքի կիրառումը պետք է հնարավոր լինի ոչ միայն ՀՀ քաղաքացիների կամ ՀՀ-ի, այլև ՀՀ իրավաբանական անձանց, հասարակության շահերի դեմ ուղղված հանցանք կատարելու պարագայում:

1.6. Անհրաժեշտ է առանձին գլխով ներկայացնել քրեական օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունների բովանդակությունը, նախատեսել արարքների որակման կանոններ:

2. Հանցագործություն

2.1. Հանցագործության հասկացությունը քրեական իրավունքի և օրենսդրության հիմնարար հասկացություններից է, որը ունի ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն: Ավանդաբար ՀՀ քրեական օրենսգրքում տրվում է հանցագործության նյութական-ձևական հասկացությունը, որտեղ հանրային վտանգավորությունը դիտվում է որպես հանցագործության օբյեկտիվ, նյութական և հիմնարար հատկանիշ: Սակայն, հայտնի է այս կապակցությամբ իրավաբանական գրականության մեջ ծագած վեճը. այլ իրավախախտումները օժտված են հանրային վտանգավորությամբ, թե ոչ, ինչով են իրարից տարբերվում այլ իրավախախտումներն ու հանցագործությունը: Արարքի համար պատասխանատվություն կարող է նախատեսվել միայն այն դեպքում, երբ այն որևէ վնաս է պատճառում օրենքով պաշտպանվող բարիքներին: Հակառակ դեպքում պատասխանատվություն նախատեսելը անիրավաչափ է: Այս տեսանկյունից ակնհայտ է, որ թե՛ հանցագործությունը, թե՛ այլ իրավախախտումները վնաս են պատճառում կամ կարող են վնաս պատճառել նշված բարիքներին, ուստի այլ իրավախախտումները ևս օժտված են հանրային վտանգավորությամբ: Երևույթի հասկացությունը սահմանելիս պետք է օգտագործվեն այնպիսի հատկանիշներ, որոնք բնութագրական են միայն տվյալ երևույթին ու թույլ են տալիս այն սահմանազատելու այլ երևույթներից: Ակնհայտ է, որ հանրային վտանգավորությունը այն հատկանիշը չէ, որով հանցավոր արարքը տարբերվում է այլ իրավախախտումներից:

Հաճախ նշվում է, որ հանցագործությունը այլ իրավախախտումներից սահմանազատելու չափանիշը հանրային վտանգավորության աստիճանն է: Բայց պետք է նշել, որ հանրային վտանգավորության աստիճանը հաճախ հստակ չափանիշներ չունի. հաճախ վարչական իրավախախտումների և հանցագործությունների հանրային վտանգավորության աստիճանների տարբերությունը այնքան չնչին է, դրանց միջև սահմանը այնքան հեղհեղուկ է, որ գրեթե անհնար է լինում դրանք հստակ սահմանազատել իրարից: Դեռ ավելին, ժամանակի ընթացքում որոշ վարչական իրավախախտումներ տեղափոխվում են քրեական օրենսդրություն ու դառնում հանցագործություն և հակառակը՝ շատ հանցագործություններ ապաքրեականացվում են ու դառնում վարչական կամ այլ

իրավախախտում: Ըստ էության, հանրային վտանգավորությունը, դրա աստիճանը ոչ միայն օբյեկտիվ, այլև սուբյեկտիվ հատկանիշ է, որովհետև որոշվում է օրենսդրի սուբյեկտիվ գնահատականի հիման վրա. որոշ դեպքերում այն, ինչ վտանգավոր է թվում օրենսդրին, կարող է իրականում այդպիսին չլինել, կամ շատերի կողմից այդպես չընկալվել: Այս տեսանկյունից արարքների քրեականացումը ոչ միշտ է, որ հստակ օբյեկտիվ չափանիշների հիման վրա է իրականացվում: Որոշ դեպքերում արարքների քրեականացումը կարող է նաև սոցիալապես հիմնավորված չլինել ու անցանկալի հետևանքների հանգեցնել (շատերին է հայտնի այսպես կոչված «չոր օրենքի» կիրառման անցանկալի արդյունքը ԱՄՆ-ում, ԽՍՀՄ-ում): Ուստի հանցագործությունը այլ իրավախախտումներից սահմանազատող միակ հստակ հատկանիշը հակահիրավականությունն է՝ քրեական օրենքով նախատեսված լինելը:

Մյուս խնդիրը կապված է գործող քր. օր.-ի հոդված 18-ի երկրորդ մասի հետ: Օրենքի ձևակերպումից ստացվում է, թե քրեական օրենսգրքով նախատեսված արարքը կարող է և հանցագործություն չլինել: Ընդ որում՝ այդ հանգամանքը կապվում է արարքի նվազ կարևորության հետ, որի հետևանքով արարքը հանրային վտանգավորություն չի ներկայացնում: Տեսության մեջ և պրակտիկայում նվազ կարևորության հիմնական չափանիշ է համարվում արարքով պատճառված վնասի չնչին չափը (իհարկե, եթե անձի դիտավորությունն ուղղված է այդպիսի չնչին վնաս պատճառելուն): Մեծ մասամբ նման իրադրություններ առաջանում են հափշտակությունների հետ կապված: Հարց է առաջանում. եթե ՎԻՎՕ-ով վարչական պատասխանատվություն է նախատեսված նվազագույն աշխատավարձի հնգապատիկը չգերազանցող չափով գողության համար, ապա ինչի մասին է խոսքը քր. օր.-ի հոդված 18-ի երկրորդ մասում: Պատահական չէ, որ իրավակիրառ պրակտիկայում հոդված 18-ի երկրորդ մասը ըստ էության չի կիրառվում: Այլ հարց է, որ արարքի նվազ կարևորությունը, այն դեպքերում, երբ դրա համար այլ օրենքներով պատասխանատվություն նախատեսված չէ, դիտվի որպես պատժից ազատելու հիմք:

Հանցագործության հասկացության մեջ հանրային վտանգավորության մասին նշումը սերտորեն կապված է նաև մեղքի ինստիտուտի, մասնավորապես՝ դիտավորության բնորոշման հետ: Եթե հանցագործության հիմնական հատկանիշը հանրային վտանգավորությունն է, ապա այն կատարող անձի դիտավորության մեջ այդ

հատկանիշը պետք է առկա լինի: Մինչդեռ իրականում շատ դեպքերում արարքի հանրային վտանգավորության գիտակցման մասին խոսք լինել չի կարող: Դեռ ավելին, անձը կարող է կարծել, թե իր արարքն օգտակար է: Իրականում ճիշտ կլինի խոսել արարքի հակաիրավականության գիտակցման մասին:

Հետևաբար անհրաժեշտ է հանցագործության հասկացությունից բացառել հանրային վտանգավորության մասին նշումը, ինչպես նաև վերացնել հոդված 18-ի երկրորդ մասը:

2.2. Անհրաժեշտ է օրենքում սահմանել հակաիրավական արարքի և դրա տեսակների բնորոշումը, ամրագրել անգործությամբ հանցանք կատարելու դեպքում քրեական պատասխանատվության հնարավորության հարցը: Ընդ որում, պետք է սահմանվի, որ քրեական օրենքով նախատեսված հակաիրավական արարքի կատարում է համարվում այդ արարքի նախապատրաստությունը, դա կատարելու փորձը, ինչպես նաև ավարտված արարքի կատարումը: Օրենքով պետք է ամրագրվի այն հանգամանքը, որ անգործությամբ հանցանք կատարելու համար անձը կարող է ենթարկվել պատասխանատվության միայն այն դեպքում, երբ գործելու պարտականություն է ունեցել և հնարավորություն է ունեցել կատարելու իր պարտականությունը: Ընդ որում, օրենքում պետք է հստակեցվեն այդ պարտականությունների առաջացման հիմքերը:

2.3. Կարևոր խնդիր է հանցագործությունների դասակարգումը: Ներկայումս անզգուշությամբ կատարվող հանցագործություններն ընդգրկված են ոչ մեծ ծանրության և միջին ծանրության հանցագործությունների խմբում՝ դիտավորությամբ կատարվող հանցագործությունների հետ, ընդ որում՝ ավելի խիստ պատժաչափերով, ինչը որևէ տրամաբանական հիմնավորում չունի: Դասակարգման նույն խմբի մեջ ընդգրկված հանցանքները պետք է նույն պատժաչափը ունենան: Ընդ որում, անզգույշ հանցագործությունները պետք է ընդգրկվեն նաև ծանր հանցագործությունների խմբում:

Ներկայումս շատ է խոսվում քրեական օրենսգրքում նախատեսված արարքները հանցանքների և զանցանքների դասակարգելու մասին: Աշխարհի շատ երկրներում այսպիսի դասակարգումն առկա է: Բայց շատ երկրներում էլ զանցանքները պարզապես նախատեսվում են ՎԻՎՕ-ում: Պետք է նշել սակայն, որ նման

դասակարգումը, բացի քրեադատավարական գործընթացների տարբերություններից, որևէ գործնական նշանակություն չունի: Ըստ հայեցակարգի նախատեսվում է որոշակի ապաքրեականացում իրականացնել և ապաքրեականացված արարքները նախատեսել ՎԻՎՕ-ում:

3. Հանցագործությունների բազմակիություն

3.1. Հանցագործությունների բազմակիության ինստիտուտը քրեական օրենսդրության կարևորագույն ինստիտուտներից է, որը սերտորեն կապված է հանցագործությունների որակման և դրանց համար պատիժներ նշանակելու հետ: Բավական է նշել, որ իրավակիրառ պրակտիկայում արարքների որակման խնդիրների մի զգալի մասը կապված է հանցագործությունները համակցութամբ որակելու հետ: Այս տեսանկյունից այս ինստիտուտը պակաս կարևոր չէ, քան մյուսները: Ուստի այս ինստիտուտը առանձին գլխով պետք է օրենսդրական ամրագրում ստանա՝ հանցագործությունների բազմակիության օրենսդրական բնորոշմամբ:

3.2. Գործող քրեական օրենսգրքում հանցագործությունների իդեալական համակցությունը բնորոշվում է որպես արարք, որում առկա են միայն տարբեր հոդվածներով նախատեսված երկու կամ ավելի հանցագործությունների հատկանիշներ: Մինչդեռ իրականում իդեալական համակցությունը հնարավոր է նաև այն իրավիճակներում, երբ արարքում առկա են միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցագործությունների հատկանիշներ: Դա կարող է լինել այն դեպքերում, երբ հոդվածի տարբեր մասերով նախատեսված են ոչ թե նույն հանցագործության հասարակ և ծանրացնող հանգամանքներով հանցակազմերը, այլ տարբեր հանցագործություններ: Միևնույն ժամանակ իդեալական համակցությունը բացակայում է, եթե անձի միևնույն արարքում առկա են քրեական օրենսգրքի Հատուկ մասի միևնույն հոդվածի միևնույն մասի տարբեր կետերով նախատեսված հատկանիշները: Նման իրադրության մեջ մեկ արարքում պարզապես առկա են մի քանի ծանրացնող հանգամանքներ, ինչը պետք է հաշվի առնվի միայն պատիժ նշանակելիս: Այս դրույթները պետք է օրենսդրական ամրագրում ստանան:

3.3. Գործող քրեական օրենսգիրքը չի կարգավորում քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում արարքի որակման հարցերը: Մինչդեռ քրեաիրավական

նորմերի մրցակցության տարբեր իրավիճակներում գործնական բարդություններ են առաջանում: Ուստի անհրաժեշտ է հարցի օրենսդրական կարգավորում: Խոսքը հատկապես այն դեպքերի մասին է, երբ հանցագործության մի տեսակը ընդգրկվում է մյուսի մեջ՝ որպես դրա կառուցվածքային տարր: Նման դեպքերում հանցագործությունների համակցությամբ որակումը հնարավոր է, եթե ամբողջի մեջ մտնող կառուցվածքային տարրի համար ավելի խիստ պատասխանատվություն է նախատեսված: Այս կարգով օրենսդրորեն պետք է ամրագրել նաև մրցակցության այլ ձևերի դեպքում արարքի որակման առանձնահատկությունները:

3.4. Ներկայումս ռեցիդիվը տեսակների է դասակարգվում ըստ կատարված հանցանքի ծանրության: Ընդ որում, դասակարգման հիմքում ոչ մի հստակ տրամաբանություն չկա, չկա նաև միասնական չափանիշ, դասակարգումը խրթին է, անիմաստ: Ընդհանրապես ռեցիդիվը տեսակների դասակարգելը որևէ գործնական օգուտ չի տալիս, ուստի շատ երկրների քրեական օրենսդրություններում ռեցիդիվի դասակարգում ընդհանրապես չի իրականացվում, իսկ որոշ երկրների օրենսդրություններում անուղղակի ձևով այդ դասակարգումն իրականացվում է կապված պատիժ նշանակելու առանձնահատկությունների հետ: Ասվածի հետ կապված՝ ռեցիդիվը պետք է պարզապես նախատեսել որպես պատիժը ծանրացնող հանգամանք՝ պատժի պարտադիր խստացում նախատեսելով միայն այն դեպքում, երբ անձը նախկինում ազատազրկման ձևով պատիժ է կրել և դատվածությունը դեռևս չհանված կամ չմարած կատարել է այնպիսի դիտավորյալ հանցանք, որի համար ազատազրկման է դատապարտվում:

4. Քրեական պատասխանատվության ենթակա անձինք

4.1. Գործող քրեական օրենսգիրքը սահմանում է քրեական պատասխանատվության ենթակա անձի հատկանիշները՝ մեղսունակությունը, ֆիզիկական անձ լինելը, քրեական օրենքով նախատեսված տարիքի հասած լինելը: Սակայն հանցագործության սուբյեկտի հետ կապված շատ հարցեր մնում են չկարգավորված:

4.2. Քրեական պատասխանատվության ենթակա անձի (հանցագործության սուբյեկտի) պարտադիր հատկանիշն է մեղսունակությունը, մինչդեռ օրենքում դրա

բնորոշումը բացակայում է: Ուստի անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել մեղսունակության հատկանիշները:

4.3 Գործող քրեական օրենսգիրքը սխալ է կարգավորում հարբածության վիճակում հանցանք կատարած անձի քրեական պատասխանատվության հարցերը: Նշվում է միայն, որ հարբածության վիճակում հանցանք կատարած անձը չի ազատվում քրեական պատասխանատվությունից և, որ հարբածությունը առանձին դեպքերում կարող է համարվել քրեական պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք: Բայց հարբածությունը ունի տարբեր աստիճաններ, կարող է առաջանալ տարբեր պատճառներով, տարբեր շարժառիթներով ու իրադրություններում: Միշտ չէ, որ հարբածությունը կարող է համարվել պատիժը ծանրացնող հանգամանք: Վերջապես, ախտաբանական կամ պաթոլոգիական հարբածությունը համարվում է հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում և անմեղսունակության բժշկական հատկանիշներից է: Աշխարհի շատ երկրների քրեական օրենսգրքերում հարբածությունը չի դիտվում որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք: Դեռ ավելին՝ որոշ դեպքերում այն օգտագործվում է որպես պաշտպանական կողմի փաստարկ: Ուստի օրենքը պետք է կարգավորի այս հարցերը: Անհրաժեշտ է ճիշտ իրավական գնահատական տալ հարբածության դեպքերին: Շատ դեպքերում հարբածությունը կարող է գնահատվել որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք: Խոսքը մասնավորապես այն դեպքերի մասին է, երբ անձը հարբածության վիճակի է հասցվում ոչ իր կամքով, այլ հարկադրանքի, խաբեության ազդեցության տակ:

4.4. Կատարելագործման կարիք ունի սահմանափակ մեղսունակության ինստիտուտը: Պետք է նախատեսել, որ սահմանափակ մեղսունակության վիճակ կարող են առաջացնել ոչ միայն հոգեկան խանգարումները, այլև քրեական օրենսգրքի հոդված 25-ի առաջին մասով նախատեսված, անմեղսունակության հատկանիշ հանդիսացող հոգեկան հիվանդությունները, հոգեկան հիվանդագին այլ վիճակները:

4.5. Աշխարհի երկրների մեծ մասի քրեական օրենսդրություններում քրեական պատասխանատվության միասնական տարիք է սահմանված, ընդ որում, քրեական պատասխանատվությունը վրա է հասնում ավելի վաղ տարիքից, քան նախատեսված է ՀՀ գործող քրեական օրենսգրքում: Գործող քրեական օրենսգրքում նախատեսված է

այն հանցագործությունների սպառիչ ցանկը, որոնց համար քրեական պատասխանատվությունը առաջանում է 14 տարեկանից: Բայց այսպիսի տարբերակման հստակ չափանիշները ըստ էության բացակայում են: Իզուր չէ, որ այն երկրներում, որոնցում նման տարբերակում կա, ժամանակ առ ժամանակ քննարկվում է հանցագործությունների այդ սպառիչ ցանկի փոփոխության հարցը: Այս կապակցությամբ պետք է սահմանել քրեական պատասխանատվության միասնական տարիք՝ առանց որևէ տարբերակման: Քրեական պատասխանատվության տարիք պետք է սահմանվի 14 տարեկանը, հաշվի առնելով այն, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ակսելերացիայի պայմաններում երեխան շատ ավելի վաղ է հասունանում: Տարբերակումը պետք է վերաբերի միայն քրեական պատասխանատվության ու պատժի առանձնահատկություններին: Ընդ որում, ճիշտ կլինի, որ 14-17 տարեկանների քրեական պատասխանատվության ու պատժի առանձնահատկությունները որոշ դեպքերում վերաբերեն նաև 18-21 տարիքային խմբին:

4.6. Անհրաժեշտ է քրեական օրենսգրքում սահմանել հանցագործության հատուկ սուբյեկտի բնորոշումը, օրենսդրորեն ամրագրել հատուկ սուբյեկտով հանցագործությանը հատուկ սուբյեկտի հատկանիշներ չունեցող անձի մասնակցության տարբեր դեպքերում արարքի որակման առանձնահատկությունները:

4.7. Օրակարգի հարց է իրավաբանական անձանց քրեական պատասխանատվություն նախատեսելը: Քրեական օրենսգրքում պետք է սահմանել այն հանցագործությունների շրջանակը, որոնց համար իրավաբանական անձինք ենթակա են քրեական պատասխանատվության, ինչպես նաև իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվելիք քրեական պատասխանատվության ու պատժի միջոցները: Իրավաբանական անձի քրեական պատասխանատվություն նախատեսելը անհրաժեշտ է հետևյալ պատճառներով: ՀՀ կողմից վավերացված միջազգային կոնվենցիաները պահանջում են մասնավորապես կոռուպցիոն հանցագործությունների դեպքում իրավաբանական անձի արդյունավետ պատասխանատվության մեխանիզմներ ունենալ: Չնայած այս կոնվենցիաներով չի պահանջվում անպայման քրեական պատասխանատվություն նախատեսել, բայց քրեական պատասխանատվությունը շահեկան է մի քանի նկատառումներով: Նախ՝ այդ դեպքում

անհրաժեշտություն չի առաջանա քաղաքացիական կան վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերում նույնությամբ նախատեսել կոռուպցիոն հանցագործությունները ու դրանց համար սանկցիաներ սահմանել: Հանցավոր արարքները պետք է նախատեսվեն քրեական օրենսգրքով: Երկրորդ՝ քրեական պատասխանատվություն նախատեսելը թույլ է տալիս կատարվածին համապատասխան արդյունավետ սանկցիաների նախատեսում ու կիրառում: Երրորդ՝ քրեական պատասխանատվությունը նշանակում է, որ գործի քննությունն իրականացվելու է քրեադատավարական կարգով, ինչը իրավունքների պաշտպանության ավելի արդյունավետ երաշխիքներ է նախատեսում: Չորրորդ՝ որոշ դեպքերում իրավաբանական անձի բարդ կառուցվածքի պատճառով հնարավոր չի լինում պարզել իրականում մեղավոր ֆիզիկական անձին, ուստի նման դեպքերում հանցավոր գործունեությունը կասեցնելու համար արդյունավետ է իրավաբանական անձին քրեական պատասխանատվության ենթարկելը:

5. Մեղքը

5.1. Ավանդաբար ՀՀ քրեական իրավունքի տեսությունը և օրենսդրությունը հիմնվում են մեղքի հոգեբանական տեսության վրա: Բայց այս տեսության շրջանակներում հաճախ հնարավոր չի լինում քրեաիրավական շատ խնդիրների արդարացի լուծում գտնել: Դրա պատճառն այն է, որ քրեական իրավունքը արժեքաբանական, նորմատիվիստական գիտություն է: Այն կապված է գնահատականներ տալու հետ: Առանց արժեքաբանական մոտեցման քրեական իրավունքը կդադարի իրավունք լինելուց:

Աշխարհի երկրների մեծ մասի քրեական օրենսդրությունները հիմնված են մեղքի արժեքաբանական, նորմատիվիստական տեսության վրա: Իհարկե, ոչ մի քրեական օրենսգիրք հիմված չէ որևէ մեկ մաքուր տեսության վրա: Բոլոր երկրների քրեական օրենսգրքերում էլ առկա են թե արժեքաբանական, թե հոգեբանական, թե վտանգավոր վիճակի տեսությունների տարրեր: Այնուամենայնիվ հոգեբանական տեսության այն դրույթը, թե մարդը ենթակա է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ իր արարքի բոլոր տարրերն ու հատկանիշները արտացոլվել են (կարող էին արտացոլվել) նրա գիտակցության և կամքի մեջ, ոչ մի քննադատության չի դիմանում:

Նման մոտեցման դեպքում այս տեսությունը նույնիսկ հոգեբանական անվանելն է սխալ, որովհետև հակասում է հոգեբանության կողմից վաղուց բացահայտված անգիտակցական և ենթագիտակցական հոգեբանական երևույթների առկայության վերաբերյալ դրույթին: Ուստի մեղքը, որում արտացոլվում է մարդու և նրա արարքի հակասոցիալական բնույթը, ուղղվածությունն ու էությունը, չի կարող բնորոշվել, որպես զուտ հոգեբանական վերաբերմունք, որի տարրերն են գիտակցությունը և կամքը: Մեղքը այնպիսի հոգեբանական վերաբերմունքն է արարքի և դրա հետևանքների նկատմամբ, որում արտացոլվում են անձի բացասական, հակասոցիալական դիրքորոշուները, գիտակցված և շատ դեպքերում էլ ենթագիտակցական դրդապատճառները: Մեղքի էության նկատմամբ նման մոտեցումը արդեն թույլ է տալիս հիմնավորելու քրեական պատասխանատվությունը այն դեպքերում, երբ դա չի կարողանում անել մեղքի մաքուր հոգեբանական տեսությունը: Մասնավորապես, մեղքի արժեքաբանական տեսությունը թույլ է տալիս հիմնավորելու քրեական պատասխանատվությունը ծանր հարբածության դեպքում, հավաստելու դիտավորության առկայությունը ֆիզիոլոգիական աֆեկտի վիճակում հանցանքը կատարելու դեպքերում, թույլ է տալիս օրենսդրորեն ամրագրելու քրեական պատասխանատվությունը բացառող այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են արարքի կատարումը մեղքը բացառող ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, մահվան անմիջական սպառնալիքի ազդեցությամբ, վախի աֆեկտի վիճակում և այլն:

5.2. Ավանդաբար ՀՀ քրեական օրենսգրքում դիտավորության հասկացության մեջ նշվում է արարքի հանրային վտանգավորության գիտակցման փաստը, որը ներկայումս զուտ խորհրդային քրեական իրավունքի տեսության մնացուկ է: Դիտավորության հասկացության մեջ արարքի հանրային վտանգավորության մասին նշելու նպատակներից մեկը «օրենքը չիմանալը չի ազատում քրեական պատասխանատվությունից» սկզբունքը գործնականում կենսագործելն էր: Բայց ժամանակակից աշխարհում այս սկզբունքը չի կարող գործել: Պատահական չէ, որ բոլոր առաջադեմ երկրների քրեական օրենսդրությունները բացառում են այս սկզբունքը: Հակառակը՝ երկրների մեծ մասի քրեական օրենսդրություններում ամրագրված է, որ օրենքը չիմանալը կարող է ազատել քրեական պատասխանատվությունից կամ դա կարող է հաշվի առնվել որպես մեղմացնող

հանգամանք, կամ հիմք հանդիսանալ արարքը որպես անզգուշությամբ կատարվող հանցագործություն որակելու: Ուստի մեղքի հասկացության մեջ շեշտը պետք է դրվի արարքի հակահիրավականության գիտակցման վրա:

5.3 Բացի ուղղակի և անուղղակի դիտավորություններից, քրեական իրավունքի տեսությանը հայտնի են նաև դիտավորության այլ տեսակներ՝ կոնկրետացված, պարզ, երկընտրելի, չկոնկրետացված: Դիտավորության այս տեսակների պարագայում արարքի որակումը որոշ դեպքերում խնդիրներ է առաջացնում և վեճերի տեղիք տալիս: Մասնավորապես, քրեական իրավունքի տեսության մեջ վեճերի տեղիք է տալիս այն հարցը, թե ինչպես պետք է որակել արարքը երկընտրելի դիտավորության այն դեպքերում, երբ հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված հետևանքներից ոչ մեկը չի առաջանում: Որոշ քրեագետներ առաջարկում են արարքը որակել որպես հնարավոր առավել ծանր հանցագործության փորձ, ինչը ճիշտ չէ: Որոշ քրեագետներ նույն դիրքորոշումն են արտահայտում չկոնկրետացված դիտավորության համանման իրավիճակների կապակցությամբ, երբ հանցագործության եղանակը, գործիքներն ու միջոցները վկայում են այն մասին, որ հանցավորը մեծ վնաս պատճառելու դիտավորություն է ունեցել: Նման տարբեր մեկնաբանություններից խուսափելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել դիտավորության նշված տեսակները և դրանց դեպքում արարքի որակման առանձնահատկությունները:

5.4. Դիտավորության խնդրի հետ են կապված նաև իրավաբանական և փաստական սխալի ինստիտուտները, որոնք որևէ օրենսդրական ամրագրում չեն ստացել: Մինչդեռ աշխարհի երկրների մեծ մասում սխալի դեպքում քրեական պատասխանատվության և արարքի որակման հարցերը հստակ կարգավորվում են քրեական օրենսդրության մեջ:

Անհրաժեշտ է քրեական օրենսգրքում նախատեսել իրավաբանական և փաստական սխալի ինստիտուտները ու սահմանել դրանց դեպքում անձի քրեական պատասխանատվության առանձնահատկությունները: Իրավաբանական սխալի կապակցությամբ մոտեցումը պետք է լինի հետևյալը: Եթե անձը չի գիտակցել իր արարքի հակահիրավականությունը և տվյալ իրադրությունում չէր կարող գիտակցել այն, ապա ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Օրենքում պետք է ամրագրվեն փաստական սխալի տարբեր իրավիճակները և դրանց դեպքում արարքի որակման առանձնահատկությունները:

5.5. Ուղղակի դիտավորության կամային հատկանիշը օրենքում բնութագրվում է «ցանկանում է» հասկացությամբ: Բայց պետք է նշել, որ ցանկությունը բնութագրում է ոչ թե կամքը, այլ արարքի մոտիվացիան, դրդապատճառը: Առկա օրենսդրական ձևակերպման պայմաններում գրեթե անհնար է ապացուցել ուղղակի դիտավորության առկայությունը այն անձի արարքում, ում համար հանրորեն վտանգավոր հետևանքները արարքի նպատակը չեն եղել, նպատակին հասնելու միջոց չեն եղել, բայց անխուսափելի են եղել: Ուստի հանրորեն վտանգավոր հետևանքների անխուսափելիության նախատեսումը որպես ուղղակի դիտավորության դրսևորում պետք է առանձին սահմանվի:

5.6. Հանցավոր ինքնավստահության օրենսդրական բնորոշման մեջ նշվում է այն մասին, որ հանցավորը առանց բավարար հիմքերի, ինքնավստահորեն հույս է ունենում, որ հանրորեն վտանգավոր հետևանքները կկանխվեն: Հույսը նշանակում է, որ անձը լիովին վստահ չէ հնարավոր արդյունքի, ապագայի, հետևանքների հարցում: Տվյալ դեպքում հույս ունենալը նշանակում է, թե անձը հնարավոր է համարում նաև հետևանքի առաջացումը, որովհետև լիովին վստահ չէ, որ հետևանքը չի առաջանալու: Բայց այդ դեպքում անզգուշության մասին խոսելն ավելորդ է: Հույս ունենալը իրականում բնութագրական է անուղղակի դիտավորությանը, իսկ ինքնավստահության դեպքում խոսք պետք է գնա վստահ լինելու մասին: Ուստի հանցավոր ինքնավստահության օրենսդրական բնորոշման մեջ պետք է նշվի ոչ թե հույս ունենալու, այլ համոզված լինելու մասին: Այլ հարց է, որ այդ համոզմունքը հիմնավորված չէ:

5.7. Գործող քրեական օրենսգրքում թերի է կարգավորված առանց մեղքի վնաս պատճառելու ինստիտուտը: Խոսքը հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ անձը նախատեսում է հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, սակայն ծայրահեղ պայմաններին կամ նյարդահոգեկան ծանրաբեռնվածությանն իր հոգեֆիզիոլոգիական հատկությունների անհամապատասխանության հետևանքով չէր կարող կանխել դրանց առաջացումը: Բանն այն է, որ որոշ դեպքերում անձը ինքը կարող է իրեն դնել նյարդահոգեկան

ծանրաբեռնվածության մեջ, կամ հնարավորություն ունենալ դադարեցնելու իր այն արարքը, որը կարող էր հանրորեն վտանգավոր հետևանքներ առաջացնել: Նման դեպքերում մեղքն առկա է և անձը ենթակա է քրեական պատասխանատվության: Այս իրավիճակները պետք է օրենսդրորեն ամրագրվեն:

6. Հանցագործության փուլերը

6.1. Հանցագործության փուլերի ներկայիս օրենսդրական կարգավորումը աչքի է ընկնում սխալներով, թերություններով ու բացթողումներով, որոնք շտկման կարիք ունեն: Մասնավորապես, սխալ է բնորոշված ավարտված հանցագործությունը: Քրեական օրենսգրքի հոդված 33-ի առաջին մասի համաձայն՝ «Ավարտված հանցագործություն է համարվում այն արարքը, որը պարունակում է սույն օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»: Բայց «սույն օրենսգրքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները» կարող է պարունակել նաև հանցափորձը: Օրինակ՝ անձը սպանության նպատակով կրակում է զոհի ուղղությամբ, բայց միայն ծանր վնաս է պատճառում առողջությանը: Ակնհայտ է, որ այս դեպքում անձի արարքում առկա են դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու հանցակազմի բոլոր հատկանիշները, բայց արարքը ոչ թե ավարտված հանցագործություն է, այլ սպանության փորձ: Ուստի ավարտված հանցագործության բնորոշման մեջ պետք է ընդգրկվի հանցավորի դիտավորության ուղղվածության մասին նշումը: Ըստ այդմ՝ ավարտված հանցագործություն կարող է համարվել այն արարքը, որը պարունակում է հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված հանցակազմի բոլոր հատկանիշները:

6.2. Գործող քրեական օրենսգրքում ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների նախապատրաստությունը ապաքրեականացված է և մնում է անպատժելի, ինչը ճիշտ չէ: Ստացվում է, որ, օրինակ, մարդուն առևանգելու հասարակ տեսակի կատարումը նախապատրաստող կամ մի քանի ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքներ նախապատրաստող անձը ոչ մի պատասխանատվություն չի կրում: Ճիշտ կլինի քրեական պատասխանատվություն նախատեսել բոլոր տեսակի հանցագործությունների նախապատրաստության համար՝ սահմանելով պատժի նշանակման հատուկ կարգ: Ընդ որում, անհրաժեշտ է նախատեսել նաև, որ ոչ մեծ

կամ միջին ծանրության հանցագործությունների նախապատրաստության դեպքում ազատազրկման հետ կապված պատիժ չի կարող նշանակվել:

6.3. Հանցափորձի՝ գործող քրեական օրենսգրում առկա բնորոշումը այնքան էլ ճիշտ չի արտահայտում հանցափորձի էությունը: Բանն այն է, որ հանցանքի կատարմանն անմիջականորեն ուղղված գործողությունը լայն մեկնաբանության դեպքում կարող է նաև նախապատրաստություն հանդիսանալ: Ուստի հանցափորձի բնորոշման մեջ պետք է նշվի այն հանգամանքը, որ հանցափորձի դեպքում սկսվում է հանցակազմի իրականացումը:

6.4. Քրեական իրավունքի տեսության մեջ առանձնացվում է հանցափորձի երկու տեսակ՝ ավարտված և չավարտված: Ընդ որում, այս դասակարգումը ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն ունի: Բանն այն է, որ հանցափորձի տեսակներից են կախված հանցագործությունից կամովին հրաժարվելու առանձնահատկությունները: Ուստի հանցափորձի հասկացությունն իր մեջ պետք է ընդգրկի ինչպես ավարտված, այնպես էլ չավարտված հանցափորձերի բնորոշումները:

6.5. Հանցագործությունից կամովին հրաժարվելու օրենսդրական ձևակերպումը նույնպես ճշգրտման կարիք ունի: Գործող օրենսգրքում առկա ձևակերպումից հստակ չի երևում, որ հանցագործությունից կամովին հրաժարումը հնարավոր է նաև այն դեպքերում, երբ հանրորեն վտանգավոր արարքի և հետևանքների միջև որոշակի ժամանակահատված է անցնում և հանցավորը կարողանում է կանխել հետևանքների առաջացումը: Այս իրավիճակը պետք է հստակ օրենսդրական ամրագրում ստանա:

7. Հանցակցություն

7.1. Գործող քրեական օրենսգրքում հանցակցությունը բնորոշվում է որպես երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցություն դիտավորյալ հանցագործությանը: Երկու կամ ավելի անձ ասելով, պետք է հասկանալ ֆիզիկական, մեղսունակ, քրեական պատասխանատվության տարիքի հասած անձանց: Այս տեսանկյունից հանցակցություն չեն կարող համարվել հանցագործության միջնորդավորված կատարման այն դեպքերը, երբ կատարողը օգտագործում է այնպիսի անձանց՝ ովքեր օրենքի ուժով ենթակա չեն քրեական պատասխանատվության: Այս հանգամանքը պետք է օրենսդրորեն ամրագրվի

հանցակցության հասկացության մեջ, ինչը կլուծի քրեական իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում առկա այն վեճը, թե արդյոք կարելի է արարքը որակել որպես մի խումբ անձանց կողմից կատարված հանցանք, եթե հանցագործության երկու կատարողներից մեկը օրենքի ուժով ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Հանցագործության միջնորդավորված կատարման դեպքերի կապակցությամբ կատարողի հասկացության մեջ կարևոր է նշել նաև այն իրավիճակները, երբ հատուկ սուբյեկտը օգտագործում է այնպիսի անձանց, ովքեր հատուկ սուբյեկտի հատկանիշով օժտված չլինելու հետևանքով ենթակա են քրեական պատասխանատվության տվյալ հանցագործությանը օժանդակելու համար:

Անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել նաև հանցագործության կազմակերպման, դրդչության և օժանդակության միջնորդավորված կատարման դեպքերը: Հնարավոր են իրավիճակներ, որ հանցակիցները հանցագործությունն իրականացնեն այնպիսի անձանց միջոցով ովքեր ենթակա չեն քրեական պատասխանատվության կամ գործել են անզգուշությամբ:

Բացի այդ, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել անզգուշությամբ հանցանքի համակատարման և համապատճառման իրավիճակները: Համապատճառման մասին նշումը պատահական չէ: Բանն այն է, որ համապատճառման դեպքում պարտադիր չէ տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմի իրականացումը. բավական է, որ անձը իր հակաիրավական, հակաբարոյական, անվտանգության կանոններին չհամապատասխանող արարքներով նպաստի մեկ ուրիշի կողմից անզգույշ հանցանքի կատարմանն ու հանրորեն վտանգավոր հետևանքների առաջացմանը: Օրինակ՝ անձը մեկ ուրիշին դրդում է խախտել անվտանգության կանոնները, վերջինս էլ կատարում է դա և անզգուշությամբ հանրորեն վտանգավոր հետևանքներ են առաջանում: Այս դեպքում առաջացած հարորեն վտանգավոր հետևանքների համար պետք է պատասխանատվության ենթարկվի նաև անվտանգության կանոնները խախտելուն դրդողը: Կամ երկու վարորդ մրցավազք են կազմակերպում և նրանցից մեկը վրաերթ է կատարում: Այս դեպքում մյուս վարորդն էլ պետք է պատասխանատվության ենթարկվի առաջացած հետևանքի համար:

Վերոգրյալի հետ կապված քրեական օրենսգրքի համապատասխան գլուխը պետք է անվանել ոչ թե հանցակցություն, այլ հանցագործությանը համատեղ մասնակցություն և

հանցակցություն՝ առանձին նախատեսելով հանցակցության, համակատարման, անզգուշությամբ համակատարման ու համապատճառման իրադրությունները:

Հանցակցության հետ կապված խնդիր է հանցագործության հնարքները, եղանակները, մեթոդները մեկ ուրիշին սովորեցնելը, եթե դա նպատակաուղղված է մեկ ուրիշին հանցանքի կատարման մղելուն: Գործող քրեական օրենսգրքի պայմաններում այս արարքը, որն իրենից բավականաչափ վտանգավորություն է ներկայացնում, անպատժելի է: Ուստի, անհրաժեշտ է այս արարքի համար ևս քրեական պատասխանատվություն նախատեսել:

7.2. Հստակեցման կարիք ունեն հանցակիցների բնորոշումները, մասնավորապես, կապված օժանդակության և դրդչության հետ: Օրինակ՝ ներկայումս բաց է այն անձի քրեական պատասխանատվության հարցը, ով համաձայնություն տալով համակատարման, հետագայում, հանցանքը կատարելու պահին՝ գտնվելով հանցանքի վայրում, թեև չի իրականացնում հանցագործության օբյեկտիվ կողմը, սակայն իր ներկայությամբ ամրապնդում է կատարողի վճռականությունը:

7.3. Գործող քրեական օրենսգրքում հանցակցության ձևերը հստակ չափանիշներով չեն առանձնացված: Այդ է պատճառը, որ դժվարություններ են առաջանում կազմակերպված խումբը հանցավոր համագործակցությունից կամ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ հանցանքը կատարելու դեպքերից սահմանազատելու հարցում: Սրա հետ կապված անհրաժեշտ է քրեական օրենսգրքում հստակ չափանիշների միջոցով ամրագրել հանցակցության տարբեր ձևերը, հստակեցնել դրանց անվանումները, գործունեության բնույթը:

Վերոգրյալի հիման վրա պետք է առանձնացնել հանցանքը համատեղ կատարելու հետևյալ ձևերը. 1) հանցանքը խմբի կողմից կատարելը, որը կարող է լինել նախնական համաձայնությամբ կամ առանց դրա: Ընդ որում, այս դեպքում խումբ ասելով պետք է հասկանալ երկու կամ ավելի համակատարողներից բաղկացած հանրույթը, 2) հանցավոր կազմակերպությունը, որը երեք կամ ավելի անձից բաղկացած, կայուն խումբն է, կամ միասնական ղեկավարություն ունեցող կազմակերպված հանցավոր խմբերի միավորումը, որի անդամները միավորվել են մեկից ավելի հանցանքներ կատարելու համար: Բնականաբար քրեական օրենսգրքի Հատուկ մասում պետք է

պատասխանատվություն նախատեսվի հանցավոր կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու, ինչպես նաև դրանց մասնակցելու համար:

7.4. Քրեական օրենսգրքում պետք է մանրամասն կարգավորվի հանցակցի սահմանազանցման հարցը: Անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել քանակական և որակական սահմանազանցման տեսակները և դրանց դեպքում հանցակիցների արարքների որակումը: Բացի այդ, առանձին պետք է ամրագրվեն կատարողի և մյուս հանցակիցների սահմանազանցման դեպքերը:

7.5. Պետք է ավելի մանրամասն կարգավորվի հանցակիցների և համակատարողների՝ հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտը: Գործող քրեական օրենսգրքում այս ինստիտուտի հետ կապված շատ հարցեր լուծում չեն ստացել: Մասնավորապես, անհրաժեշտ է օրենսգրքում ամրագրել համակատարողի, խմբակային հանցագործության մասնակցի, կազմակերպված խմբի կամ հանցավոր ընկերակցության անդամի՝ հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու պայմանները: Մասնավորապես՝ համակատարողը, դրդիչը, կազմակերպիչը, խմբակային հանցագործության մասնակիցը, կազմակերպված խմբի կամ հանցավոր ընկերակցության անդամը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից միայն այն դեպքում, եթե կարողացել է կանխել հանցագործությունը: Պետք է առանձին կարգավորվի օժանդակողի հանցագործությունից կամովին հրաժարվելու հարցը: Օժանդակության տարբեր դեպքերում այն կարող է տարբեր դրսևորումներ ունենալ և պարտադիր չէ, որ բոլոր դեպքերում օժանդակողը կանխի հանցանքի կատարումը: Օրինակ՝ հանցագործության գործիք կամ միջոց տրամադրող օժանդակողը կամ նա, ով նախապես խոստացել է պարտակում իրականացնել, պետք է ազատվի պատասխանատվությունից այն դեպքում, եթե հետ է վերցրել գործիքը կամ միջոցը կամ տեղեկացրել է հանցավորին, որ չի կատարելու իր խոստումը: Այլ հարց է, որ նման դեպքերում անձը կարող է պատասխանատվության ենթարկվել իմանալ չհայտնելու համար: Կատարողին ցուցումներ, խորհուրդներ, տեղեկատվություն տրամադրելու կամ խոչընդոտները վերացնելու դեպքերում օժանդակողը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունիվ, եթե կանխել է հանցանքի կատարումը:

7.6. Անհրաժեշտ է հստակեցնել հատուկ սուբյեկտով հանցագործություններում այլ անձանց մասնակցության հետ կապված հարցերը: Գործող քրեական օրենսգրքի հոդված 39-ի երրորդ մասում ամրագրված այն դրույթը, թե հատուկ սուբյեկտ չհամարվող անձը, ով մասնակցել է հատուկ սուբյեկտով հանցագործությանը, կարող է պատասխանատվություն կրել միայն որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող, լիովին չի արտացոլում հնարավոր իրադրությունները և ճիշտ է միայն մասնակի դեպքերի համար: Բանն այն է, որ շատ դեպքերում հատուկ սուբյեկտի հատկանիշներ չունեցող անձը կարող է մասնակցել հատուկ սուբյեկտով հանցագործությանը՝ այդ հանցագործության օբյեկտիվ կողմը կամ դրա մի մասը իրականացնելով, բայց պատասխանատվության ենթարկվի ոչ թե որպես հանցակից, այլ որպես այլ հանցագործության կատարող: Մասնավորապես, հատուկ սուբյեկտով հանցագործություն է մոր կողմից նորածին երեխայի սպանությունը, որը մեղմացնող հանգամանքներով հանցակազմ է: Ակնհայտ է, որ եթե նորածին երեխային կյանքից զրկելու գործընթացին մասնակցում է այլ անձ, ով իրականացնում է սպանության օբյեկտիվ կողմը կամ դրա մի մասը, ապա նա չի կարող պատասխանատվության ենթարկվել որպես հանցակից: Նման դեպքերում անձը ենթակա է պատասխանատվության հասարակ կամ ծանրացնող հանգամանքներով սպանության համար՝ որպես կատարող: Այս իրավիճակները պետք է օրենսդրական ամրագրում ստանան:

7.7. Անհրաժեշտ է ավելի հստակ կարգավորել հանցագործության ծանրացնող հանգամանքները հանցակիցներին մեղսագրելու հարցերը: Մասնավորապես, պետք է կարգավորել դիտավորյալ հանցագործության այն ծանրացնող հանգամանքները մեղսագրելու հարցը, որոնց կապակցությամբ օրենքը նախատեսում է մեղքի անզգույշ ձև: Բանն այն է, որ նման ծանրացնող հանգամանքները կարող են մեղսագրվել հանցակիցներին, եթե նրանք կոնկրետ իրադրությունում պարտավոր էին և կարող էին գիտակցել դրանք (օրինակ՝ դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ):

Բացի այդ, օրենքը ոչինչ չի ասում մեղմացնող հանգամանքները հանցակիցներին մեղսագրելու մասին: Այս հարցը ևս պետք է օրենսդրական լուծում ստանա: Ընդհանուր

կանոնը պետք է լինի այն, որ հանցակազմի մեղմացնող հանգամանքները մյուս հանցակիցներին չեն մեղսագրվում:

8. Արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ

8.1. Քրեական իրավունքի տեսությանը հայտնի են արարքի հանցավորությունը բացառող բազմաթիվ հանգամանքներ: Աշխարհի շատ երկրների քրեական օրենսգրքերում դրանք իրենց արտացոլումն են ստացել: ՀՀ քրեական օրենսգիրքը, թեև նախկինի համեմատ ընդլայնել է այս հանգամանքների ցանկը, այնուամենայնիվ կան արարքի հանցավորությունը բացառող հանգամանքներ, որոնք տեղ չեն գտել գործող քրեական օրենսգրքում: Խոսքը վերաբերում է հատկապես մասնագիտական պարտականությունների կատարմանը, օրենքի պատվիրանների կատարմանը, հանցագործությունների կանխման կամ բացահայտման հատուկ առաջադրանքների կատարմանը: Արարքի հանցավորությունը բացառող այս հանգամանքները պետք է ստանան իրենց օրենսդրական ամրագրումն ու կարգավորումը:

Օրենքում պետք է նախատեսել նաև պրովոկացիայի տարբեր դրսևորումները:

8.2. Անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի օրենսդրական կարգավորումը որոշակի ճշգրտումների ու լրացումների կարիք ունի: Նախ՝ անհրաժեշտ պաշտպանությունը կարող է իրականացվել նաև անգործությամբ (օրինակ՝ անձը չի խոչընդոտում պահպանություն իրականացնող կենդանու կողմից վնաս պատճառելը ոտնձգողին, երբ անձը, այլ դեպքերում նման պարտականություն ունի), ուստի գործող օրենսգրքի այն դրույթը, թե «հանցագործություն չի համարվում այն գործողությունը, որը կատարվել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում», ճիշտ չէ: Բացի այդ, գործող քրեական օրենսգիրքը արդարացիորեն թույլ է տալիս կյանքի համար վտանգավոր ոտնձգությունից կամ դրա իրական սպառնալիքից պաշտպանվել ոտնձգողին ամեն տեսակի վնաս, այդ թվում՝ մահ պատճառելով (հոդված 42-ի երկրորդ մաս): Միևնույն ժամանակ նշվում է, որ անհրաժեշտ պաշտպանության իրավունքը անձին է պատկանում անկախ ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից (հոդված 42-ի երրորդ մաս): Այս երկու դրույթները միասին ընթերցելիս ստացվում է, որ ոտնձգողին կարելի է կյանքից զրկել նույնիսկ այն դեպքում, եթե կային

պաշտպանության այլ միջոցներ: Սա ուղղակիորեն հակասում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի հոդված 2-ի երկրորդ մասի դրույթներին, համաձայն որոնց՝ անհրաժեշտ պաշտպանության ժամանակ կյանքից զրկելը պետք է պայմանավորված լինի բացարձակ անհրաժեշտությամբ: Ուստի, թեև ճիշտ է այն դրույթը, որ անհրաժեշտ պաշտպանության իրավունքը անձին է պատկանում անկախ ոտնձգությունից խուսափելու կամ այլ անձանց կամ պետական մարմինների օգնությանը դիմելու հնարավորությունից, այնուամենայնիվ կյանքից զրկելով պաշտպանության դեպքերի համար պետք է բացառություն նախատեսվի: Այս լույսի ներքո պետք է վերանայվի նաև հոդված 42-ի հինգերորդ մասի այն դրույթը, որը վերաբերում է շինություն ներխուժելը կանխելու համար ոտնձգողին պատճառվող վնասի հարցին:

Պետք է օրենսդրորեն կարգավորել կարծեցյալ պաշտպանության իրադրությունը, այն իրավիճակները, երբ պաշտպանվողը չի գիտակցում ոտնձգության ավարտի պահը, այն իրադրությունները, երբ անձը անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցում է թույլ տալիս հուզմունքի, վախի պատճառով:

Բացի այդ, օրենսդրական լուծում պետք է ստանա անմեղսունակների, քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձանց հանրորեն վտանգավոր արարքների դեմ անհրաժեշտ պաշտպանության հնարավորության և դրա սահմանների հարցը: Օրենքի դիրքորոշումը պետք է հետևյալը լինի. այս անձանց հանրորեն վտանգավոր ոտնձգություններից կարելի է պաշտպանվել նրանց վնաս պատճառելու միջոցով միայն այն դեպքում, եթե բացակայում են պաշտպանության այլ միջոցները:

Օրենսդրական կարգավորում պետք է ստանա նաև անհրաժեշտ պաշտպանության պրովոկացիայի հարցը:

8.3. Գործող քրեական օրենսգիրքը չի տալիս այն հարցի պատասխանը, թե երբ է հնարավոր զրկել կյանքից հանցանք կատարած անձին: Ուստի այս հարցը պետք է օրենսդրական կարգավորում ստանա: Բացի այդ, առկա օրենսդրական կարգավորման պայմաններում բաց է մնում անմեղսունակների, քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձանց բռնելու հիմքերի ու պայմանների հարցը, ինչը պետք է օրենսդրական կարգավորում ստանա: Այս տեսակետից օրենքում

որպես արարքի հանցավորությունը բացառող հանգամանք պետք է նախատեսել հանրորեն վտանգավոր արարք և ոչ թե հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը:

8.4. ՀՀ քրեական օրենսգրքում առկա է ծայրահեղ անհրաժեշտության միայն այն տեսակի օրենսդրական կարգավորումը, որը այլ երկրների քրեական օրենսդրություններով կոչվում է արարքի հակահիրավականությունը բացառող ծայրահեղ անհրաժեշտություն: Մինչդեռ շատ երկրների քրեական օրենսդրություններում կարգավորվում է նաև մեղքը բացառող ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը: Խոսքը այն իրավիճակների մասին է, երբ անձը իր կամ իր մերձավորի կյանքին սպառնացող անմիջական վտանգը վերացնելու համար վնաս է պատճառում հավասար կամ ավելի մեծ արժեք ունեցող բարիքի: Ակնհայտ է օրինակ, որ մայրը իր երեխայի կյանքը փրկելու համար կարող է նման քայլի գնալ և նրան պատասխանատվության ենթարկելը ոչ մի բանով չի կարող արդարացվել: Մինչդեռ քննարկվող ինստիտուտի՝ գործող օրենսգրքում առկա կարգավորման պայմաններում մայրը ենթակա է պատասխանատվության:

Սրա հետ կապված օրենսդրական լուծում պետք է ստանա նաև այն անձանց պատասխանատվության հարցը, ովքեր իրենց կամ իրենց մերձավորի կյանքը կամ առողջությունը փրկելու համար վնաս են պատճառում ավելի մեծ կամ հավասար արժեք ունեցող բարիքի, սակայն զբաղեցրած պաշտոնի, մասնագիտության, օրենքի կամ ենթաօրենսդրական ակտի, կամ պայմանագրի ուժով պարտավոր էին պաշտպանելու այդ բարիքները: Խոսքը նշված անձանց կողմից իրենց պարտականությունները չկատարելու մասին է, որի հետևանքով ավելի մեծ վնաս է պատճառվում, քան այն վնասը, որը կարող էր պատճառվել իրենց: Նման դեպքերում խոսք կարող է լինել միայն պատասխանատվության մեղմացման մասին (Օրինակ՝ հրշեջը չի կարող քրեական պատասխանատվությունից ազատվել այն դեպքում, երբ իր կյանքի համար վախենալով լքել է այրվող բնակարանը՝ այնտեղ թողնելով օգնության կարիք ունեցող անձի, որը հետագայում մահացել է):

Անհրաժեշտ է օրենսդրորեն կարգավորել ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտի հետ կապված նաև այլ հարցեր: Մասնավորապես՝ անհրաժեշտ է կարգավորել այն անձի պատասխանատվության հարցը, որը օրենքով պաշտպանվող

շահերին վնաս պատճառելու միջոցով կանխում է սեփական անօրինական արարքների հետևանքով սպառնացող վտանգը: Բացի այդ, պետք է սահմանել այն դեպքերում անձի պատասխանատվության հարցը, ով օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառել, բայց չի կարողացել կանխել սպառնացող վտանգը:

8.5. Գործող քրեական օրենսգրքում թերի է կարգավորված ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ինստիտուտը: Մասնավորապես, օրենքը նշում է ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքի ազդեցությամբ միայն արարքը ղեկավարելու հնարավորությունից զրկված լինելու մասին: Մինչդեռ հարկադրանքի որոշ դեպքերում անձը կարող է զրկվել նաև արարքները գիտակցելու հնարավորությունից:

8.6. Հիմնավորված ռիսկի օրենսդրական կարգավորումը չի տալիս այն հարցի պատասխանը, թե ինչպես պետք է լուծվի անձի քրեական պատասխանատվության հարցը այն դեպքերում, երբ օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը չի հաջողվում կանխել և առաջանում է ավելի մեծ վնաս, քան այն օգուտը, որին ձգտում էր հասնել ռիսկին դիմած անձը: Ռիսկը գիտական և տնտեսական առաջընթացի կարևոր գործոններից է: Շատ բնագավառներում սկզբունքորեն հնարավոր չէ մեծ հաջողությունների հասնել առանց ռիսկի դիմելու: Ուստի քրեական օրենսդրությունը պետք է այնպես կարգավորի այս ինստիտուտի հետ կապված հարցերը, որ չկաշկանդի գիտական առաջընթացը: Օրենքում պետք է ամրագրվի այն դրույթը, որ եթե ռիսկին դիմած անձը անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկել հնարավոր վնասը կանխելու համար, բայց վնասն այնուամենայնիվ առաջացել է, ապա անկախ վնասի չափից անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության:

9. Պատժի հասկացությունը, նպատակները և տեսակները

9.1 Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում հանցածին իրավիճակը զգալիորեն սրվել է: Հանցավոր ամենատարբեր դրսևորումները խոչընդոտում են սոցիալ-տնտեսական բարեփոխումների բնականոն ընթացքը և ստեղծում լարվածության, տագնապայնության ու անկայունության մթնոլորտ: Արդյունքում առավել ընդգծվում են հասարակության քրեականացման բացասական միտումները: Այդ ֆոնի վրա վերջին տարիներին հանրապետությունում արձանագրվում է ընդհանուր հանցավորության կայուն աճ: Ստեղծված պայմաններում առավել արդիական է

դառնում հանցագործության մեջ մեղավոր ճանաչված անձանց նկատմամբ ադեկվատ պատիժ նշանակելը: Այս առումով էական նշանակություն է ձեռք բերում ոչ միայն նշանակված պատիժների արդյունավետ կատարումը, այլև պատիժների զարգացած, բազմատեսակ համակարգի առկայությունը:

Այսօրվա պայմաններում ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններին հաճախ փաստորեն հետևում են նույն սանկցիաները, ինչ որ ծանր և առանձնապես ծանր հանցագործություններին: Հանցավորությունը, սակայն, դրանից չի նվազում: Ավելին, անպատժելիության մթնոլորտն ավելի է խորանում: Այդ իմաստով ազատազրկման հետ չկապված պատիժների կիրառումը, երբ դա, իհարկե, հիմնավորված է, պետք է դառնա իրավակիրառական տարածված պրակտիկա, որի հիմնական նպատակը քրեական պատասխանատվության անխուսափելիության, այլ ոչ թե չափազանց խստության ապահովումն է:

Ներկայիս պայմաններում առավել կարևորվում է որոշակի կատեգորիայի հանցագործությունների համար ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակների կիրառման անհրաժեշտությունը: Հասարակությունից տևականորեն մեկուսացնելու այլընտրանքները հանդիսանում են հասարակությունը քրեականացումից, դատապարտյալներին՝ հանցավոր ենթամշակույթին սերտաճելուց խուսափելու գործուն միջոցներ: Հենց այլընտրանքային պատիժները պետք է դառնան քրեական սանկցիաների նոր համակարգի առավել պահանջված բաղադրատարրեր:

Վերոգրյալի հետ կապված պետք է հստակեցվեն պատժի նպատակները. պատժի նպատակներ պետք է համարվեն ոչ միայն սոցիալական արդարության վերականգնումը, հանցանք կատարած անձին ուղղելը և նոր հանցագործությունները կանխելը, այլև անձի վերասոցիալականացումը:

ՀՀ քրեական օրենսդրության՝ պատժի և քրեաիրավական ներգործության այլ միջոցների վերաբերյալ նորմերի բարեփոխումը նախ և առաջ ենթադրում է.

- համաձայնեցված, տեսականորեն հիմնավորված և աներկիմաստ հայեցակարգային մոտեցման հիման վրա «քրեական պատասխանատվություն», «պատիժ» և «քրեաիրավական ներգործության այլ միջոցներ» հասկացությունների հարաբերակցության և սահմանազատման օրենսդրական կարգավորում,

- քրեաիրավական ներգործության պատժիչ, վերականգնողական և կանխարգելիչ միջոցների համալիր կիրառման օպտիմալ բալանսի ապահովում,
- պատժի համակարգի և առանձին պատժատեսակների բովանդակության կատարելագործում, ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակների առավել լայն շրջանակի մշակում,
- հանցագործություններից տուժողներին պատճառված վնասի պարտադիր հատուցման դեպքերի շրջանակի նախատեսում:

9. 2. Ներկայիս պայմաններում հաճախ դատարանները ազատազրկմանն այլընտրանք չեն ունենում: Արդյունքում ազատազրկում պատժատեսակը չարդարացված հաճախակի է կիրառվում, ինչը ոչ միայն չի նպաստում պատժողական քաղաքականության արդյունավետությանը, այլև բազմաթիվ պրոբլեմներ է ստեղծում քրեակատարողական հիմնարկների համար և նպաստում հասարակական հարաբերությունների քրեականացմանը, քաղաքացիական հասարակության մեջ «գողական օրենքների» տարածմանը: Թեև դատարանները հաճախ ելքը գտնում են պատիժը պայմանականորեն չկիրառելով, սակայն տվյալ ինստիտուտի ոչ հստակ և բացերով ու թերություններով աչքի ընկնող օրենսդրական կարգավորումը չի նպաստում քրեաիրավական ներգործության արդյունավետությանը:

Ներկայումս ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված՝ ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակներից քիչ թե շատ արդյունավետ կիրառվում է միայն տուգանքը: Հանրային աշխատանքները գրեթե չեն նշանակվում: Դրանք արդյունավետ չեն, ինչը բացատրվում է մի քանի պատճառներով, որոնցից հիմնականներն են՝ չափազանց երկար ժամկետը, քր. օր.-ի հատուկ մասի հոդվածում նախատեսված չլինելը և դատապարտյալի հայեցողությանը թողնված լինելը: Որպես հետևանք, հանրային աշխատանքները հիմնականում նշանակվում են տուգանքի վճարման անհնարինության դեպքում:

Կալանք պատժատեսակը նույնպես գրեթե չի կիրառվում, ինչի գլխավոր պատճառը երկար ժամկետն է: Երեք ամիս տևողությամբ «շոկային էֆեկտը» չի կարող հիմնավորված համարվել:

Տվյալ խնդրի լուծման հիմնական ուղղություններից մեկը ազատազրկմանն իրական այլընտրանք հանդիսացող պատժատեսակների ցանկի ընդլայնումն է և

դրանց (ինչպես նաև արդեն նախատեսված այլընտրանքային պատժատեսակների) կիրառման համար գործուն մեխանիզմների ներդնումը: Ընդ որում, այլընտրանքային պատժատեսակներ ասելով՝ պետք է հասկանալ հանցագործությանը պետության կողմից արձագանքելու քրեաիրավական ներգործության այն միջոցները, որոնք պատժիչ բնույթ են կրում, սակայն կապված չեն հանցանք կատարած անձին հասարակությունից մեկուսացնելու և նրա առանձին սոցիալական կապերը խզելու հետ: Հետևաբար, ՀՀ քրեական գործող օրենսգրքում տեղ գտածներից բացի, առաջարկվում է այլընտրանքային հետևյալ պատժատեսակների նախատեսումը՝

1) ազատության սահմանափակումը,

2) հանրային իրավունքների սահմանափակումը,

3) օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին ՀՀ տարածքից արտաքսումը,

4) ծնողական իրավունքներից զրկելը:

Ազատության սահմանափակումը դատապարտյալին առանց հասարակությունից մեկուսացնելու տնային պայմաններում հսկողության տակ պահելու հետ կապված այլընտրանքային պատիժ է, որը կարող է կիրառվել օրենքով նախատեսված որոշակի հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկվող անձանց հստակ սահմանված շրջանակի նկատմամբ: Տվյալ պատժատեսակին դատապարտվողները չեն կտրվում ուսումնառությունից կամ արտադրությունից, սակայն նրանց նկատմամբ կարող են կիրառվել օրենքով նախատեսված որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես, նրանց կարող է արգելվել որոշակի ժամերի բացակայել տանից, հաճախել տարբեր հաստատություններ (բարեր, սրճարաններ, ռեստորաններ, ինտերնետային ակումբներ, ժամանցային այլ վայրեր), օգտագործել ոգելից խմիչքներ և այլն: Նրանք կարող են ներգրավվել նաև հանրօգուտ աշխատանքների: Եթե տնային կալանքի դատապարտված անձը չարամտորեն խուսափում է պատիժը կրելուց, այն կարող է փոխարինվել որոշակի ժամկետով ազատազրկմամբ:

Հանրային իրավունքների սահմանափակումը նույնպես ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակ է, որը կարող է կիրառվել հանրային իրավունքների (ընտրական և այլն) իրականացման հետ կապված ոչ մեծ կամ միջին

ծանրության հանցանքներ կատարած անձանց նկատմամբ: Այն դրսևորվում է որոշակի իրավունքների իրականացումից (օրինակ՝ ընտրվելու) որոշակի ժամկետով զրկելու մեջ:

Օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին ՀՀ տարածքից արտաքսումը նույնպես ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող պատժատեսակ է, որը կարող է կիրառվել օրենքով նախատեսված որոշակի հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկվող օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ:

Ծնողական իրավունքներից զրկելը անժամկետ կարող է նշանակվել քր. օր.-ի Ընդհանուր մասով հատկապես նախատեսված պայմաններում՝ որպես թե՝ հիմնական, թե՝ լրացուցիչ պատժատեսակ: Դատապարտյալի ուղղման և նրա կողմից երեխայի նկատմամբ պատշաճ վարքագիծ դրսևորելու դեպքում դատարանը կարող է վերականգնել նշված իրավունքները:

9. 3. Որպես հիմնական պետք է նախատեսվեն միայն ազատազրկման հետ կապված պատժատեսակները: Դրանք են՝ կարճաժամկետ ազատազրկումը (սա ներկայումս գործող կալանք պատժատեսակն է, որի անվանումը շփոթության տեղիք է տալիս կապված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կալանավորման՝ որպես խափանման միջոցի առկայության հետ), ազատության սահմանափակումը, կարգապահական գումարտակում պահելը, ազատազրկումը և ցմահ ազատազրկումը: Լրացուցիչ պատժատեսակ պետք է համարվի հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը: Մնացած պատժատեսակները կարող են նշանակվել թե՛ որպես հիմնական և թե՛ լրացուցիչ: Ընդ որում, հիմնական պատժատեսակները կարող են նշանակվել միայն քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված լինելու դեպքերում:

9. 4. Անհրաժեշտ են օրենսդրական ձևակերպումներ, որոնք կսահմանափակեն ազատազրկում պատժատեսակի կիրառման հնարավոր տարբերակների շրջանակը: Օրենսդրորեն պետք է սահմանել, որ տվյալ պատժատեսակը կարող է կիրառվել միայն այն դեպքերում, երբ հանցագործության ծանրությունը և հանցանք կատարած անձի առանձնահատկությունները հաշվի առնելով, հնարավոր չէ նշանակել քր. օր.-ի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված ավելի մեղմ պատիժ:

Առաջին անգամ ոչ մեծ ծանրության հանցանք կատարած անձը չի կարող դատապարտվել ազատազրկման, եթե արարքը զուգորդված չէ բռնությամբ:

9. 5. Պատժի համակարգը և առանձին պատժատեսակները պետք է նպատակաուղղված լինեն նաև հանցագործություններից տուժողների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը: Այս տեսանկյունից վերանայման կարիք ունի գույքի բռնագրավում և տուգանք պատժատեսակների կիրառման նկատմամբ մոտեցումը: Դրանք առաջին հերթին պետք է նպատակաուղղված լինեն տուժողին պատճառված վնասի հատուցմանը: Մինչդեռ քրեական գործող օրենսդրության պայմաններում տվյալ պատժատեսակները նման գործառույթ գրեթե չեն կատարում: Բացի այդ, գույքի բռնագրավումը պետք է նախատեսվի որպես անվտանգության միջոց, որովհետև բռնագրավման են ենթակա միայն հանցավոր ճանապարհով ստացված գույքը, եկամուտները, հանցագործության գործիքներն ու միջոցները, որոշ դեպքերում հանցագործության առարկաները: Նման կարգավորման պայմաններում գույքի բռնագրավումը չի կարող պատիժ համարվել:

9. 6. Մեկ այլ հարց է տուգանք պատժատեսակի կարգավորումը: Այն նախատեսված է որպես հիմնական պատիժ: Բայց այն չափերը, որոնք սահմանված են գործող օրենսգրքում, հիմնական պատժատեսակի համար շատ փոքր են: Ասվածն ակնհայտ է, օրինակ՝ տնտեսական հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող հոդվածների սանկցիաներում, որոնցում փոքր չափերով տուգանքի հետ որպես այլընտրանք նախատեսվում է ազատազրկումը, ասենք՝ երկուսից հինգ տարի ժամկետով: Դրանով էապես խախտվում է սանկցիաների համամասնությունը:

Բարեփոխման անհրաժեշտություն ենթադրող խնդիր է նաև տուգանքի չափի որոշման հարցը: Մասնավորապես, արդարության և արդյունավետության տեսանկյունից առավել նպատակահարմար է տուգանքի ամրագրված չափերից անցում կատարել տվյալ պատժատեսակի չափը հանցանք կատարած անձի եկամուտների չափով որոշելու կարգին:

Օրենսդրորեն պետք է ամրագրել, որ դատարանը տուգանքը կարող է նշանակել միայն այն դեպքում, երբ անձը ունի եկամուտ կամ այնպիսի գույք, որի վրա կարող է բռնագանձում տարածվել:

Բացի այդ, պետք է նախատեսվի, որ, եթե տուգանքը նշանակվում է որպես լրացուցիչ պատիժ՝ ազատությունից զրկելու հետ կապված պատժի հետ, կամ հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ և դատապարտյալը հնարավորություն չի ունենում անհապաղ վճարելու այն, ապա տուգանքի վճարումը կասեցվում է մինչև հիմնական պատիժը կրելու ավարտը:

9. 7. ՀՀ քրեական նոր օրենսգրքով նախատեսվող պատժի համակարգը կունենա հետևյալ տեսքը՝

1) հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը,
2) տուգանքը,
3) հանրային աշխատանքները,
4) որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը,
5) հանրային իրավունքների սահմանափակումը,
6) ծնողական իրավունքներից զրկելը,
7) օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին ՀՀ տարածքից արտաքսումը,
8) ազատության սահմանափակումը,
9) զինվորական ծառայության մեջ սահմանափակումը,
10) կարճաժամկետ ազատազրկումը,
11) կարգապահական գումարտակում պահելը,
12) ազատազրկումը,
13) ցմահ ազատազրկումը:

Ներկայացված հերթականությունը պայմանական է:

10. Պատիժ նշանակելը

10.1. ՀՀ քր. օր.-ում անհրաժեշտ է նախատեսել քրեական պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող և մեղմացնող հանգամանքները հաշվի առնելու հստակ կանոններ: Անթույլատրելի է այս կամ այն մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքի «արժեքի» որոշումը միայն դատարանի հայեցողությանը թողնելը: Ուստի պետք է

օրենսդրորեն կարգավորել նշված հանգամանքների հաշվառումը որոշակիորեն ձևայնացնելու և դատարանին որոշակի կողմնորոշիչներ տալու հարցը:

10. 2. Վերանայման կարիք ունեն հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հետ կապված հարցերը:

ՀՀ քրեական գործող օրենսգիրքը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում նախատեսում է միայն պատժի նվազագույն չափը խստացնելու պահանջը: Ստացվում է, որ առավելագույն չափը մնում է նույնը, ինչ որ սովորական դեպքերում: Նման մոտեցումն արդարացված չէ: Ուստի հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կապակցությամբ անհրաժեշտ է նախատեսել նաև պատժի առավելագույն չափը խստացնելու պահանջ:

Հանցագործությունների ռեցիդիվի համար պատժի նշանակման առանձնահատկությունները պետք է հանգեն հետևյալին:

«Եթե դիտավորյալ հանցագործության համար նախկինում որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրած, դատվածություն ունեցող անձը կատարել է դիտավորյալ հանցանք, որի համար դատապարտվում է ազատազրկման, ապա նշանակվող պատիժը չի կարող պակաս լինել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված ազատազրկման ձևով առավելագույն պատժի երկու երրորդից և կարող է գերազանցել տվյալ հանցագործության համար օրենքով նախատեսված ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը՝ դրա մեկ երրորդի չափով: Ամեն դեպքում ազատազրկման ձևով պատիժը չի կարող գերազանցել տվյալ պատժատեսակի համար օրենքով նախատեսված առավելագույն ժամկետը:

Եթե դիտավորյալ հանցագործության համար նախկինում որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման ձևով պատիժ կրած, դատվածություն ունեցող անձը կատարել է մեկից ավելի հանցանք, ապա համակցության մեջ մտնող յուրաքանչյուր դիտավորյալ հանցանքի համար պատիժը որոշվում է նույն կանոններով: Այդ դեպքում հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը չի կարող գերազանցել 25 տարի ժամկետով ազատազրկումը»:

Անհրաժեշտ է օրենսդրորեն նաև ամրագրել, որ նշված դրույթները արգելք չեն հանդիսանում նշանակելու օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ:

10. 3. Կարևորվում է հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու ինստիտուտի օրենսդրական հստակեցման հարցը: ՀՀ քրեական գործող օրենսգրքի պայմաններում հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը որոշվում է պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու սկզբունքով՝ որոշակի սահմանափակում նախատեսելով: Նման սահմանափակում նախատեսված չէ հիմնական մյուս պատժատեսակների համար: Արդյունքում ստացվում է, որ հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելիս տուգանքը, հանրային աշխատանքները, կարգապահական գումարտակում պահելը, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը (որպես հիմնական պատիժ նշանակելու դեպքում) կարող են առանց որևէ սահմանափակման գումարվել և մի քանի անգամ գերազանցել քր. օր.-ի Ընդհանուր մասում տվյալ պատժատեսակի համար նախատեսված առավելագույն ժամկետը կամ չափը: Տվյալ մոտեցումը չի կարող արդարացված համարվել: Ուստի այս հարցը պետք է օրենսդրական կարգավորում ստանա:

Մյուս խնդիրը կապված է ազատազրկման ձևով վերջնական պատժի ժամկետի հետ: Այսպես, եթե համակցության մեջ մտնում են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ, ապա վերջնական պատիժը չի կարող գերազանցել 25 տարի ժամկետով ազատազրկումը: Բայց ծանր հանցագործություններ են, օրինակ, ապօրինաբար բնակարան մուտք գործելով գողությունը կամ առանձնապես խոշոր չափերով խարդախությունը: Ստացվում է, որ հանցագործությունների համակցության դեպքում վերջնական պատիժ նշանակելու գործող կանոնի պայմաններում մի քանի գողություն կամ խարդախություն կատարող անձը կարող է ավելի խիստ պատժվել, քան ծանրացնող հանգամանքներով սպանություն կատարողը: Նման իրավիճակը նույնպես չի կարող արդարացված համարվել: Դրա համար հարցը պետք է լուծվի հետևյալ տարբերակով. եթե հանցագործությունների համակցությունն ընդգրկում է միայն ոչ մեծ ծանրության հանցագործություններ, ապա վերջնական պատիժը չի կարող գերազանցել հինգ տարի ժամկետով ազատազրկումը, եթե համակցությունն ընդգրկում է միջին ծանրության կամ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործություններ, ապա՝ տասը տարի ժամկետով ազատազրկումը, եթե ծանր հանցագործություն, ապա՝ տասնհինգ տարի ժամկետով ազատազրկումը, եթե

առանձնապես ծանր հանցագործություն, ապա՝ քսան տարի ժամկետով ազատազրկումը, իսկ եթե համակցության մեջ ընդգրկվում է այնպիսի առանձնապես ծանր հանցագործություն, որտեղ դիտավորությամբ կյանքից զրկելը հանցակազմի հատկանիշ է, ապա՝ քսանհինգ տարի ժամկետով ազատազրկումը: Վերջին իրավիճակի կապակցությամբ օրենքում պետք է նշվի համակցության մեջ մտնող այն առաձնապես ծանր հանցագործությունների սպառիչ ցանկը, որոնց դեպքում վերջնական պատիժը կարող է հասնել քսանհինգ տարի ժամկետով ազատազրկման: Մասնավորապես ցեղասպանությունը, ահաբեկչական գործողությունը օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության ներկայացուցչի դեմ և այլն:

10.4. Թերություններ ու սխալներ են առկա հանցագործության նախապատրաստության և հանցափորձի պատժելիության հարցերի օրենսդրական կարգավորման մեջ: Գործող օրենսդրությամբ հանցագործության նախապատրաստության համար առավելագույն պատիժը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով կամ հոդվածի մասով որոշակի ժամկետով ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կեսը: Այն, որ նախապատրաստության համար պատիժը պետք է մեղմ լինի՝ կասկած չի հարուցում: Բայց հարցի օրենսդրական լուծումը կատարելագործման կարիք ունի: Նախ՝ հնարավոր են դեպքեր, որ նախապատրաստության համար պատիժը կարող է հավասարվել, շատ դեպքերում ավելի լինել, քան համանման ավարտված հանցագործության համար, ինչն անթույլատրելի է: Բացի այդ, օրենքը հստակ չի կարգավորում այն հարցը, թե արդյոք դատարանը իրավունք ունի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն ժամկետից պակաս ժամկետով պատիժ նշանակել, եթե ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի կեսը պակաս է սանկցիայով նախատեսված նվազագույն ժամկետից: Խնդիրը լուծելու համար առաջարկվում է հետևյալ կարգը. «Հանցագործության նախապատրաստության համար ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը չի կարող ավելի լինել, քան տվյալ հանցագործության համար ազատազրկման ձևով նախատեսված պատժի առավելագույն ժամկետի մեկ երրորդը: Եթե նվազագույն ժամկետի մեկ երրորդը պակաս է երեք ամիս ժամկետով ազատազրկումից, ապա նշանակվում է երեք ամիս

ժամկետով ազատազրկում»: Բացի այդ, անհրաժեշտ է ամրագրել, որ ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցագործությունների նախապատրաստության դեպքում ազատազրկման ձևով պատիժ չի կարող նշանակվել:

Գործող քրեական օրենսգրքում հանցափորձի համար պատիժը նույնպես մեղմացված է և նախատեսված է հստակ առավելագույն սահման: Նման մոտեցումը արդարացված չէ: Նախ՝ հանցափորձի (հատկապես ավարտված հանցափորձի) և ավարտված հանցագործության տարբերությունը հաճախ շատ չնչին է: Ընդ որում, հանցափորձի դեպքում կարող են առաջանալ հանրորեն վտանգավոր հետևանքներ՝ հաճախ շատ ծանր: Պետք է հիշել նաև, որ հանցափորձի դեպքում հանցագործությունն ավարտին չի հասնում հանցավորի կամքից անկախ հանգամանքներով: Ընդ որում, ավարտված հանցափորձի դեպքում հաճախ անձին կարող է թվալ, թե ինքը հասել է իր նպատակին (օրինակ՝ կյանքից զրկել է զոհին): Մեր օրենսդրությունը հիմնված լինելով արարքի հայեցակարգի վրա, զուտ այն հիմնավորմամբ, որ վնասն այնքան չի եղել, ինչքան ընդգրկված էր հանցավորի դիտավորության մեջ՝ նախատեսում է պատժի անպայման մեղմացում: Բայց, նման մոտեցման դեպքում, կայուն հակասոցիալական դիրքորոշում ունեցող, բարձր հանրային վտանգավորություն ներակայցնող հանցավորը կարող է ավելի մեղմ պատժվել, քան պատահական կամ իրադրութային հանցագործները: Ուստի հանցափորձի համար պատժի պարտադիր մեղմացում չպետք է նախատեսվի: Ընդ որում, հանցափորձի համար ցմահ ազատազրկման արգելքը նույնպես պետք է վերացվի:

10. 5. Պատիժ նշանակելու ինստիտուտի արդյունավետության ապահովման առումով կարևորվում է նաև քրեական օրենսգրքի Հատուկ մասում նախատեսված սանկցիաների համամասնության ապահովման հարցը: ՀՀ ներկայիս քր. օր.-ի գործողության պայմաններում, օրինակ՝ ավազակության համար նախատեսված է նույն ժամկետով ազատազրկում, ինչ որ հասարակ սպանության համար: Ծանրացնող հանգամանքներով թրաֆիքինգի համար պատժի առավելագույն ժամկետը միայն մեկ տարով է պակաս սպանության համար հախատեսված ժամկետից և ավելին է, քան ծանրացնող հանգամանքներով դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար նախատեսված պատժաչափը: Նման դեպքերը բազմաթիվ են,

ինչն անընդունելի է: Նշված համամասնությունն ապահովելու համար անհրաժեշտ է մշակել հստակ չափանիշներ:

11.Քրեական պատասխանատվությունից ազատելը

11.1. Տեսական և գործնական կարևոր նշանակություն ունեցող առաջնահերթ խնդիրներից է քրեական օրենսգրքում քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերի և պայմանների սպառիչ և մանրակրկիտ կանոնակարգումը: Մասնավորապես, որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք պետք է նախատեսվի մասնավոր մեղադրանքի գործերով տուժողի կամ նրա օրինական ներկայացուցչի, իսկ անչափահաս տուժողների առկայության առանձին դեպքերում՝ նաև խնամակալության և հոգաբարձության մարմինների դիմումի բացակայությունը: Ընդ որում, քրեական օրենսգրքում պետք է թվարկվեն այն արարքները, որոնք դիտվում են որպես մասնավոր մեղադրանքի գործեր: Ներկայումս այդ հարցը կարգավորվում է միայն քրեական դատավարության օրենսգրքով, ինչը չի համապատասխանում գործող քրեական օրենսգրքում սահմանված պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի պահանջին, այն է՝ հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից և պատժից միայն քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում:

11.2. Հստակեցման կարիք ունի գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը: Այս հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքերն ու պայմանները պետք է հնարավորինս սպառիչ շարադրվեն՝ դատարանի հայեցողական մոտեցումը նվազեցնելու նպատակով: Պետք է օրենսդրորեն ամրագրվի, թե արդյոք հնարավոր է այս ինստիտուտի կիրառումը հանցագործությունների համակցության դեպքում, մասնավորապես այն դեպքերում, երբ գործ ունենք իրական կամ իդեալական համակցության հետ, որոնց մեջ մտնում են, օրինակ, միայն ոչ մեծ ծանրության հանցագործություններ:

Առանձին խնդիր է նաև այն, թե որքանով է հիմնավորված հիշյալ ինստիտուտի կիրառումը այն անձի նկատմամբ, ով նախկինում կատարել է հանցանք, սակայն ազատվել է քրեական պատասխանատվությունից այս կամ քրեական օրենսգրքով

նախատեսված այլ հիմքերով: Նման դեպքերում անձը կրկին համարվում է առաջին անգամ հանցանք կատարած: Այս առումով օրենսդրորեն պետք է այնպիսի դրույթ ամրագրվի, որը կարգելի գործուն զղջալու հիմքով այն անձին քրեական պատասխանատվությունից ազատելը, ով նախկինում քրեական պատասխանատվությունից ազատելու այս կամ այլ հիմքերով ազատվել է քրեական պատասխանատվությունից:

11.3. Լուրջ փոփոխությունների կարիք ունի տուժողի հետ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը: Ըստ էության, սա եվրոպական երկրներում ամրագրում ստացած մեդիացիայի ինստիտուտի դրսևորում է:

ՀՀ քրեական օրենսդրության համակարգում մեդիացիայի ինստիտուտը ներդնելիս անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես տարբեր երկրների փորձը, այնպես էլ միջազգային չափանիշները: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է մեդիացիայի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականներին, ՄԱԿ-ի ուղեցույցներին և այլն:

Միջազգային փորձի և այդ փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ մեդիացիան վերականգնողական արդարադատության հիմնական ծրագրերից մեկն է, կոնֆլիկտների հարթման միջոց: Մեդիացիայի միջոցով մի կողմից բավարարվում են տուժողի պահանջները, մյուս կողմից՝ հանցավորը այնուամենայնիվ ենթարկվում է պատասխանատվության: Մեդիացիայի նպատակը պետք է լինի հանցագործությունից տուժած անձին օգնելն ու սատարելը, նրա պահանջների բավարարումը, ինչպես նաև այն բանին նպաստելը, որ հանցանք կատարած անձը գիտակցի իր արարքի հետևանքները, զգա իր մեղքը և դրա համար պատասխանատվություն կրելու անհրաժեշտությունը:

Ըստ էության, մեդիացիան մի քանի կարևոր խնդիր է լուծում. պարզել տուժողի պահանջները, հաշվի առնել դրանք և հատուցել նրան պատճառած վնասը, բարձրացնել տուժողի դերը քրեական դատավարությունում, ինչպես նաև տնտեսել քրեաիրավական հարկադրանքը՝ հանցավորի պատասխանատվությունը սահմանափակելով տուժողին պատճառված վնասները հատուցելով:

Գործող քրեական օրենսգրքում այս ինստիտուտի կիրառության շրջանակները խիստ նեղացված են՝ կապվելով միայն ոչ մեծ ծանրության հանցանք կատարելու հետ: Նման պարագայում այն դառնում է գրեթե ոչ կիրառելի՝ նկատի ունենալով նաև այն, որ ոչ մեծ ծանրության հանցագործությունների մի զգալի մասը մասնավոր մեղադրանքի գործեր են, և զուտ տուժողի բողոքի բացակայությունը, նույնիսկ եթե հանցավորի և տուժողի միջև հաշտությունը չի կայացել և տուժողին պատճառված վնասը չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել, արդեն իսկ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պայման է: Հարցի լուծման տարբերակ է միջին ծանրության հանցագործությունների պարագայում ևս այս ինստիտուտի կիրառման հնարավորության ընձեռումը, հատկապես որ մասնավոր մեղադրանքի գործերի շարքում ևս հանդիպում են միջին ծանրության հանցագործություններ:

Բացի այդ, այս ինստիտուտը չպետք է կիրառվի այն դեպքում, երբ հանցանքը կատարվել է նախկինում հանցագործություն կատարած կամ քրեական օրենսգրքով սահմանված ոչ արդարացուցիչ հիմքերի պարագայում քրեական պատասխանատվությունից ազատված անձի կողմից: Նման դեպքերում այս ինստիտուտի կիրառումը ըստ էության կնպաստի անպատժելիության զգացման ձևավորմանը: Օրենսդրական առաջարկվող կարգավորման դեպքում պետք է հստակ սահմանել, որ տուժողի և հանցավորի հաշտության պարագայում դատարանը հանցանք կատարած անձին ոչ թե կարող է ազատել, այլ ազատում է քրեական պատասխանատվությունից: Այսպիսի մոտեցումը բխում է նաև միջազգային պրակտիկայի պահանջներից:

Հիշյալ ինստիտուտի արդյունավետ կիրառելիությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է նաև կանոնակարգել, որ եթե հանցանք կատարած անձը կամ տուժողը անչափահաս են, ապա հարցը լուծվում է նրանց օրինական ներկայացուցիչների կամահայտնության հիման վրա: Հանցակցությամբ կատարված արարքի պարագայում եթե տուժողը հաշտվել է հանցակիցներից մեկի հետ, մինչդեռ մյուսի հետ նման հաշտություն չի կնքվել, ապա քրեական պատասխանատվությունից կարող է ազատվել միայն այն հանցակիցը ում հետ տուժողը հաշտվել է: Կանոնակարգման կարիք ունեն նաև այն դեպքերը, երբ տուժողը կամ հանցավորը տառապում են հոգեկան խանգարմամբ, կամ տուժողը մահացել է, սակայն նրա ժառանգները ցանկություն են

հայտնել հաշտություն կայացնելու կամ հանցավորի կողմից կատարվել են մի քանի հանցանքներ: Հարցի լուծման տարբերակ կարող լինել հետևյալ կարգավորումը. եթե առաջին անգամ կատարված ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունից տուժողը հոգեկան խանգարման, տկարամտության կամ անձնային շեղման հետևանքով զրկված է իր դեմ ուղղված հանցագործության բնույթն ու հետևանքները գիտակցելու կամ իր վարքագիծը ղեկավարելու հնարավորությունից, ապա նրա դեմ ուղղված հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե առկա է հաշտության վերաբերյալ տուժողի օրինական ներկայացուցչի կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը:

Այն դեպքում, երբ տուժողը մահացել է, առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե առկա է հաշտության վերաբերյալ տուժողի իրավահաջորդների և հանցանք կատարած անձի՝ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը:

11.4. Վերանայման կարիք ունի նաև վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտը: Նախ, օրենսդրորեն հստակեցման կարիք ունի այն, թե որ պահից պետք է հաշվվեն վաղեմության ժամկետները՝ կապված ձևական, նյութական հանցակազմերով, տևող, շարունակվող կամ հանցակցությամբ կատարվող, չավարտված հանցագործությունների հետ: Թեև գործող օրենսդրությամբ փորձ է արվել այս հարցը լուծել, սակայն այն միայն մասնակի բնույթ է կրում: Օրինակ՝ կարգավորում չեն ստացել հանցակցությամբ կատարվող հանցանքների, չավարտված հանցագործության դեպքում վաղեմության ժամկետը հաշվելու հարցերը: Միաժամանակ պետք է քննարկվի այն հարցը, թե որքանով է հիմնավորված վաղեմության ժամկետի ավարտման պահը դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահի հետ կապելը, ինչպես որ արված է գործող քրեական օրենսգրքում: Ստացվում է, որ նախաքննության մարմինը պարտավոր է գործին ընթացք տալ, ծախսել ռեսուրսներ՝ նույնիսկ այն պարագայում, երբ համոզված է, որ միևնույնն է, մինչև գործը դատարան ուղարկվելը կամ վերջնական լուծում ստանալը վաղեմության

ժամկետները կանցնեն և անձը կազատվի քրեական պատասխանատվությունից: Խնդրի լուծման տարբերակը որպես վաղեմության ժամկետը հաշվելու սահման անձին մեղադրանք առաջադրելու պահը դիտելն է:

Փոփոխությունների անհրաժեշտություն են զգում վաղեմության ժամկետները: Դրանք պետք է երկարաձգվեն, այլապես ներկայիս օրենսդրական կարգավորման պարագայում ստացվում է, որ վաղեմության ժամկետն ավելի կարճ կարող է լինել, քան հանցագործության տվյալ տեսակի համար օրենսդրի կողմից նախատեսված պատժի, մասնավորապես՝ ազատազրկման առավելագույն ժամկետն է: Օրինակ՝ միջին ծանրության հանցագործությունների պարագայում վաղեմության ժամկետը հինգ տարի է, մինչդեռ այս խմբում նախատեսված անզգուշությամբ կատարվող հանցանքների համար կարող է նախատեսվել ազատազրկում ընդհուպ մինչև տասը տարի ժամկետով: Տրամաբանորեն, վաղեմության ժամկետները պետք է գերազանցեն հանցագործությունների դասակարգման կոնկրետ խմբի մեջ մտնող արարքների համար սանկցիայով նախատեսված ազատազրկման առավելագույն պատժաժամկետը: Միաժամանակ, օրենսդրորեն պետք է կանոնակարգվի այն արարքների վաղեմության ժամկետը, որոնց համար օրենսդրի կողմից նախատեսվում է ցմահ ազատազրկում և ոչ թե այդ հարցի լուծումը թողնվի դատարանի հայեցողությանը:

Հստակեցման կարիք ունի նաև վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման և կասեցման հարցերի լուծումը: Գործող քրեական օրենսգիրքը սահմանում է վաղեմության ժամկետի ընդհատման հնարավորություն միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու դեպքում: Նման մոտեցումը արդարացված չէ. հարցի լուծումը ցանկացած հանցանքի կատարումը ընդհատման հիմք դիտելն է:

Խնդրահարույց է նաև գործող օրենսդրությամբ վաղեմության ժամկետի ընթացքի կասեցման կարգավորումը, որի համաձայն՝ վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից կամ դատից: Ընդ որում, անձը քրեական պատասխանատվության ենթակա չէ, եթե ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքն ավարտված համարվելու օրվանից անցել է տասը, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի ավարտման օրվանից՝ քսան տարի: Այս ժամկետները նույնպես վերանայման կարիք ունեն:

Բացի այդ, վաղեմության ժամկետի կասեցման նման կանոնակարգման պարագայում ինքնուրույն խնդիր է անձեռնմխելիությունից օգտվող անձանց կողմից կատարված արարքների համար վաղեմության ժամկետի հաշվարկումը: Մի կողմից ստացվում է, որ անձեռնմխելիության իրավունքից օգտվող անձին հնարավոր չէ այդ ընթացքում ենթարկել պատասխանատվության, քանի դեռ, օրինակ, չկա ԱԺ-ի համապատասխան որոշումը, մյուս կողմից էլ՝ վաղեմության ժամկետի կասեցման հիմք չկա, ինչն էլ փաստացի հանգեցնում է պատասխանատվության անհնարինության: Հարցի լուծման տարբերակ է օրենսդրորեն ամրագրումը, որ անձեռնմխելիության իրավունք ունեցող անձի կողմից կատարված հանցանքը հայտնի լինելու պարագայում վաղեմության ժամկետը կասեցվում է՝ մինչև այդ անձին անձեռնմխելիության իրավունքից զրկելը կամ այդ իրավունքի դադարումը:

Այս ինստիտուտի կիրառման պարագայում անհրաժեշտ է կանոնակարգել նաև հանցագործությունից տուժած անձին պատճառված վնասների հատուցման հարցը: Հակառակ պարագայում կանտեսվի տուժողների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը: Ուստի օրենսդրորեն պետք է ամրագրել, որ այս ինստիտուտի կիրառումը չի ազատում այդ արարքը կատարած անձին տուժողին պատճառված վնասի հատուցման պարտականությունից:

11.5. Խնդրահարույց է նաև իրադրության փոփոխման դեպքում քրեական պատասխանատվությունից ազատելու ինստիտուտի ներկայիս կանոնակարգումը: Գործող քրեական օրենսգիրքը սահմանում է, որ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե իրադրության փոփոխման հետևանքով այդ անձը կամ նրա կատարած արարքը դադարել է հանրության համար վտանգավոր լինելուց:

Այս ինստիտուտը վերաիմաստավորման կարիք ունի, քանի որ անհասկանալի է, թե ապաքրեականացումից բացի ո՞ր դեպքերում է արարքը դադարում հանրության համար վտանգավոր լինելուց: Նման պարագայում, սակայն, խոսք չի կարող գնալ քրեական պատասխանատվությունից ազատելու մասին: Ուստի ճիշտ կլինի քրեական օրենսգրքում ընդհանրապես չնախատեսել այս ինստիտուտը կամ հստակեցնել այն:

12. Պատժից ազատելը

12.1. Պատժի նպատակների ապահովման, քրեական օրենքի խնդիրների իրականացման կարևոր նախապայմաններից մեկը պատժից ազատելու ինստիտուտի արդյունավետ գործառնության ապահովումն է: Իսկ վերջինս հնարավոր է միայն պատժից ազատելու առանձին տեսակների հստակ կանոնակարգման պարագայում: Այդ առումով, գործող քրեական օրենսդրությունը լուրջ փոփոխությունների կարիք ունի:

Առավել վիճահարույց է պատժից ազատելու այնպիսի դրսևորման կանոնակարգումը, ինչպիսին է պատիժը պայմանականորեն չկիրառելը: Գործող քրեական օրենսգրքում դրան անդրադարձ է կատարվել պատժի նշանակման հարցերի կանոնակարգման ժամանակ, մինչդեռ պատիժը պայմանականորեն չկիրառելը ոչ այլ ինչ է, քան դատավճռի կատարման հետաձգման դրսևորում, հետևաբար այն ճիշտ է զետեղել պատժից ազատելու գլխում:

Այս ինստիտուտը օրենսդրական լուրջ կարգավորման կարիք ունի: Նախ, պետք է հստակեցնել, թե որ դեպքերում այն կարող է կիրառվել: Գործող քրեական օրենսգիրքը որևէ սահմանափակում չի նախատեսում, այլ միայն նախատեսում է փորձաշրջան՝ մեկից հինգ տարի ժամկետով: Տրամաբանորեն, նման փորձաշրջանի սահմանման պարագայում պետք է ենթադրել, որ պատիժը պայմանականորեն չկիրառելը հնարավոր է, եթե անձի նկատմամբ կիրառվող պատիժը ավելի մեղմ է: Ուստի օրենսդրական մակարդակով պետք է հստակ սահմանել, որ եթե դատարանի կողմից նշանակված պատիժը չի գերազանցում այս ինստիտուտի կիրառման համար օրենսդրորեն որոշված ժամկետը (ինչն առավել արդարացված է թվում առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկման պարագայում), ապա պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել:

Միաժամանակ, օրենսդրորեն պետք է ամրագրել, որ այս ինստիտուտի կիրառումը հնարավոր է միայն առաջին անգամ հանցանք կատարելու պարագայում:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի նշանակման ժամանակ դատարանը ուշադրություն պետք է դարձնի ոչ միայն կատարված արարքի բնույթին, վտանգավորության աստիճանին, հանցավորի անձնավորությանը, գործի հանգամանքներին, այլև դիտարկի տուժողին պատճառված վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պարտականության կատարումը, հանրօգուտ աշխատանքների կատարմանը ներգրավվելու պատրաստակամությունը: Ընդ որում, պետք է նշվի, որ

պատիժը պայմանականորեն չկատարելը չի ազատում հանցանք կատարած անձին տուժողին պատճառած վնասը հատուցելու պարտականությունից:

Կանոնակարգման կարիք ունի նաև այն հարցը, թե հնարավոր է արդյոք այս ինստիտուտի կիրառումը մասնավոր մեղադրանքի գործերով: Նման պարագայում առավել արդարացված կլինի հիշյալ ինստիտուտի կիրառումը տուժողի առարկության բացակայության պարագայում:

Ներկայումս խնդրահարույց է այն, որ պատիժը պայմանականորեն չկիրառելը անձի համար հաճախ գրեթե հավասարազոր է լինում անպատժելիությանը, քանի որ փորձաշրջանի ընթացքում անձի վրա գրեթե պարտականություններ չեն դրվում: Մինչդեռ առավել արդյունավետ կլինի փորձաշրջանի ընթացքում անձի վրա դնել պարտականություն՝ իրականացնելու հանրօգուտ աշխատանքներ: Պետք է հստակեցվեն նաև փորձաշրջանի ընթացքում անձի վրա դրվող պարտականությունները՝ դրանք լրացնելով, օրինակ՝ տուժողին, նրա ընտանիքի անդամներին կամ նրա խնամքի տակ գտնվող անձանց մոտենալու արգելքով, կրթական, մշակութային ծրագրերին ներգրավվելու պարտականությամբ, տուժողներին օգնություն ցույց տվող հիմնադրամի կամ կազմակերպությունների հաշվին դրամական փոխանցում կատարելով, դատապարտված անձանց հետ շփվելու արգելքով և այլն:

Հստակեցման կարիք ունեն նաև փորձաշրջանի ընթացքում դատապարտյալի կողմից փորձաշրջանի պայմանների խախտման կամ հանցագործության կատարման իրավական հետևանքները: Գործող քրեական օրենսգրքում ներկայացված կանոնակարգումը հաջողված համարել չի կարելի: Նախ, պետք է նախատեսել փորձաշրջանի ժամկետի երկարաձգման հնարավորություն՝ դատապարտյալի կողմից իր վրա դրված պարտականությունները փորձաշրջանի ընթացքում չարամտորեն չկատարելու համար: Մինչդեռ նոր հանցագործության կատարման պարագայում, անկախ նրանից, դա ոչ մեծ ծանրության է, թե ոչ, դիտավորյալ է, թե անզգույշ, պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը պետք է վերացվի և պատիժ նշանակվի դատավճիռների համակցությամբ:

Օրենսդրական կանոնակարգման պետք է ենթարկվեն նաև այն դեպքերը, երբ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի կիրառման ժամանակ, փորձաշրջանի ընթացքում պարզվում է, որ մինչ դատապարտվելը անձը կատարել էր

նաև մեկ այլ հանցանք, որի համար պատասխանատվության չէր ենթարկվել և նաև քրեական պատասխանատվությունից չի ազատվել: Քանի որ պատիժը պայմանականորեն չկիրառելը ըստ հայեցակարգի կարող է կիրառվել միայն առաջին անգամ հանցանք կատարած անձի նկատմամբ, ապա նման դեպքերում անձի նկատմամբ այս ինստիտուտի կիրառումը պետք է դադարեցվի և պատիժ նշանակվի հանցագործությունների համակցության կանոններով:

Պատժից ազատելու այս տեսակի կիրառման ժամանակ դատարանի կողմից կարող են նշանակվել նաև անվտանգության միջոցներ:

12.2. Հստակեցման կարիք ունի նաև դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով պատժից ազատելու ինստիտուտը: Ինչպես և վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարագայում, երկարաձգման կարիք ունեն վաղեմության ժամկետները: Միաժամանակ, կանոնակարգման կարիք ունի վաղեմության ժամկետի ընդհատման մեխանիզմը, որի հիմք ևս պետք է դիտել ոչ թե սոսկ դիտավորյալ հանցանքի, այլ ցանկացած նոր հանցանքի կատարումը:

12.3. Վերանայման և կատարելագործման կարիք ունի պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ինստիտուտը: Գործող քրեական օրենսգիրքը նախատեսում է նման հնարավորություն միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների համար: Ընդ որում, օրենսդիրը նշում է, որ նման հնարավորություն առկա է դատապարտյալի կողմից պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը փաստացի կրելուց հետո: Նման կանոնակարգման պարագայում հստակ չէ, թե ինչ չափանիշների հիման վրա պետք է դատարանը որոշի, որ անհրաժեշտ է կիրառել հենց այս և ոչ թե պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտը, նկատի ունենալով հատկապես այն, որ ոչ մեծ և միջին ծանրության հանցագործությունների պարագայում պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտի կիրառման համար օրենսդիրը ևս անհրաժեշտ է համարում պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդի փաստացի կրումը: Սրա հետ կապված՝ անհրաժեշտ է նախ հստակ սահմանազատել պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու ինստիտուտը պատիժը ավելի մեղմ պատժով փոխարինելու ինստիտուտից: Մասնավորապես, պատիժը ավելի մեղմ պատժով փոխարինելու

ինստիտուտը կիրառելու համար կարող են սահմանվել պատժի պարտադիր կրման ավելի կարճ ժամկետներ: Բացի այդ, կարելի է այս ինստիտուտը կիրառել այն դեպքերում, երբ մերժվում է պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելու դիմումը: Վերջապես, այս ինստիտուտի կիրառումը կարելի է նախատեսել ոչ միայն ոչ մեծ և միջին ծանրության, այլև ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար:

Անհրաժեշտ է նաև օրենսդրորեն նախատեսել պատժի չկրած մասի փոխարինումը այլ պատժատեսակով այն դեպքերում, երբ դատարանի կողմից նշանակված պատժի կրմանը խոչընդոտող հանգամանքներ են ի հայտ եկել, օրինակ՝ կարգապահական գումարտակում պատիժ կրող անձը դարձել է զինվորական ծառայության համար ոչ պիտանի կամ հանրային աշխատանքների դատապարտված անձը դարձել է հաշմանդամ և այլն: Գործող քրեական օրենսգրքի կանոնակարգման պարագայում, ներկայումս նման վիճակների առաջացման դեպքում անձն ազատվում է պատժից, ինչը, սակայն, պատժի նպատակների ապահովման տեսանկյունից արդարացված չէ:

12.4. Հստակեցման կարիք ունի նաև արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու ինստիտուտի կիրառման կանոնակարգումը: Գործող քրեական օրենսգրքով սահմանվում է այս ինստիտուտի կիրառման հնարավորությունը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար դատապարտված անձի նկատմամբ, եթե հրդեհի, տեխնոլոգիական կամ տարերային աղետի, ընտանիքի միակ աշխատունակ անդամի ծանր հիվանդության կամ մահվան կամ արտակարգ այլ հանգամանքների պատճառով պատժի հետագա կրումը դատապարտվածի կամ նրա ընտանիքի համար կարող է հանգեցնել ծանր հետևանքների: Պատժից ազատելու այս ինստիտուտի կիրառման ժամանակ ևս պետք է ղեկավարվել ոչ թե կատարված արարքի՝ հանցագործությունների դասակարգման այս կամ այն խմբին պատկանելով, այլ դատարանի դատավճռով նշանակված պատժաչափով: Հարցի նման կարգավորումը թույլ կտար պատասխանել նաև այն հարցին, թե հնարավոր է արդյոք այս ինստիտուտի կիրառումը մի քանի հանցագործությունների համար դատապարտված անձի նկատմամբ, ինչպես նաև դրա գործողությունը կտարածեր այն

անձանց վրա, ում նկատմամբ բացառիկ հանգամանքների առկայության պարագայում նշանակվել է օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ:

Բացի այդ, օրենսդրական կարգավորումը պետք է լինի հստակ, որպեսզի իրավակիրառողի համար ակնհայտ լինի, որ այս ինստիտուտի կիրառումը հնարավոր է ինչպես պատժի մի մասը կրած լինելու, այնպես էլ պատիժը դեռևս չկրած պարագայում: Փաստացի, վերջին պարագան դիտարկվում է որպես պատժի հետաձգման հատուկ դրսևորում:

Հիմնավորված չի թվում, սակայն, անձին պատժից ազատելը առանց նրա հետ հասարակությունում վերաինտեգրման միջոցառումների իրականացման: Հարցի լուծման տարբերակ է պատժից չկրած ժամանակահատվածը որպես փորձաշրջան դիտելը, որի ընթացքում անձի վրա դատարանի կողմից կդրվեն որոշակի պարտականություններ, իսկ պրոբացիոն ծառայության կողմից անձի հետ կտարվեն համապատասխան աշխատանքներ:

Նման պարագայում անհրաժեշտություն կառաջանա նաև կանոնակարգել, թե ինչ իրավական հետևանքներ կունենա այդ ժամանակահատվածում դատարանի կողմից սահմանված պարտականությունները չարամտորեն չկատարելը կամ նոր հանցանքի կատարումը:

12.5. Օրենսդրական որոշակիացման կարիք է զգում նաև ծանր հիվանդության հետևանքով պատժից ազատելու ինստիտուտը: Գործող քրեական օրենսգրքում ցուցաբերված մոտեցման համաձայն՝ քննարկվող ինստիտուտի կիրառումը հնարավոր է երկու հիմքերի առկայության դեպքում: Այդ հիմքերից մեկը օրենսդիրը կապում է պատժի կրման ընթացքում հոգեկան խանգարմամբ հիվանդացման հետ, որը անձին զրկել է իր արարքների փաստական բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ ղեկավարելու հնարավորությունից: Նման պարագայում օրենսդիրը դատարանին իրավունք է վերապահում նշանակել բժշկական բնույթի հարկադրանքի միջոց:

Ինքնին, նման ձևակերպումը փոփոխությունների կարիք ունի: Նախ՝ անձի հոգեկան հիվանդությունը կարող է առկա լինել նաև մինչ հանցանք կատարելն ու պատիժը կրելը, այլ հարց է, որ այն դրսևորվի հանցանքը կատարելուց հետո: Բացի այդ, անհասկանալի է, թե ինչու է օրենսդիրը նախատեսում պատժից ազատելու հնարավորություն միայն պատժի կրման ընթացքում հոգեկան խանգարման

դրսևորման պարագայում, քանի որ հնարավոր է նման վիճակի առաջացում նաև հանցանքի կատարումից հետո, սակայն մինչ դատապարտվելը: Միաժամանակ, նման վիճակում գտնվող անձին պատժից ազատելը հիմնավորված կլինի միայն այն դեպքում, երբ նրա հոգեկան խանգարումը ոչ թե կարճ ժամանակահատված է տևել, ուստի այդ հիմքով բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման անհրաժեշտություն չկա, այլ անձի հոգեկան խանգարման պատճառով նրան հնարավոր չէ պահել քրեակատարողական հիմնարկում: Նման պարագայում, սակայն, անհասկանալի է, թե ինչու է օրենսդիրը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումը նախատեսում ոչ թե որպես պարտադիր միջոց, այլ դրա կիրառման որոշումը թողնում է դատարանի հայեցողությանը:

Օրենսդիրը, որպես այս ինստիտուտի կիրառման երկրորդ հիմք, դիտում է հանցանքը կատարելուց կամ դատավճիռը կայացնելուց հետո անձի այնպիսի ծանր հիվանդությամբ հիվանդանալը, որը խոչընդոտում է պատիժը կրելուն: Այս դրույթը ևս վերանայման կարիք ունի: Առավել հիմնավորված կլիներ օրենսդրորեն ամրագրել ոչ թե պարզապես ծանր հիվանդությամբ հիվանդացումը, այլ անբուժելի ծանր հիվանդության դրսևորումը: Միաժամանակ, ինչպես և նախորդ դեպքում այս հիմքով պատժից ազատելու պարագայում պատժի չկրած մասը պետք է դիտվի որպես փորձաշրջան, որի ընթացքում հանցանք կատարելու պարագայում անձի նկատմամբ պատիժ պետք է նշանակվի դատավճիռների համակցությամբ: Փորձաշրջանի ընթացքում իր վրա դրված պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափելու դեպքում դատարանի որոշմամբ փորձաշրջանի ժամկետը կարող է երկարացվել, իսկ նման խախտման կրկնման դեպքում՝ պատժից ազատելու այս հիմքը կարող է վերացվել և անձն ուղարկվել պատիժը փաստացի կրելու: Բացի այդ, փորձաշրջան հանդիսացող ժամանակահատվածի ընթացքում պատժից ազատված անձը պետք է գտնվի պրոբացիոն ծառայության հսկողության տակ և նրա հետ, անհրաժեշտության դեպքում, պետք է տարվեն համապատասխան աշխատանքներ:

12.6. Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նաև հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելը կամ պատժից ազատելը: Օրենսդրությամբ նման հնարավորություն նախատեսվում է միայն ազատազրկման դատապարտված հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա

ունեցող անձանց համար, մինչդեռ նման սահմանափակումն արդարացված չի թվում: Առաջին հերթին, հիշյալ ինստիտուտի կիրառումը նպատակահարմար կլինի նաև այլ պատժատեսակների դատապարտման դեպքում, օրինակ՝ կալանքի, հանրային աշխատանքների և այլն: Բացի այդ, ճիշտ կլիներ ընդարձակել դատավճռի կատարման հետաձգման ինստիտուտի շրջանակները և այն միայն չսահմանափակել հղի կանանցով կամ խնամքին մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանցով: Նույն հաջողությամբ այս ինստիտուտը արդյունավետորեն կարող է կիրառվել, օրինակ՝ յոթանասուն տարին լրացած կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Հետևաբար, ճիշտ կլինի այս ինստիտուտի վերանայումը՝ սահմանելով, որ այն կարող է կիրառվել այն անձանց նկատմամբ, ում հանդեպ դատարանի կողմից նշանակված պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը: Պատժի փաստացի չկրած մասը պետք է դիտարկվի որպես փորձաշրջան, որի ընթացքում դատարանի կողմից անձի նկատմամբ կարող են դրվել որոշակի պարտականություններ, իսկ պրոբացիոն ծառայության աշխատակիցների կողմից նրա հետ պետք է տարվեն հասարակությունում անձի վերաինտեգրմանն ուղղված աշխատանքներ: Քննարկվող հիմքով պատժից ազատվելու դեպքում, փորձաշրջանի ընթացքում նոր հանցանք կատարելու պարագայում անձի նկատմամբ պատժից ազատելու այս միջոցը վերացվում է և պատիժ է նշանակվում դատավճիռների համակցությամբ, իսկ փորձաշրջանի ընթացքում անձի կողմից իր վրա դրված պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափելու դեպքում՝ փորձաշրջանի ժամկետը դատարանի որոշմամբ երկարացվում է, իսկ կրկնման դեպքում՝ պատժից ազատվելու այս հիմքը վերացվում է և անձը ուղարկվում է պատիժը կրելու:

12.7. Պատժից ազատելու ինստիտուտների շարքում իր կարևորությամբ առանձնանում է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը: Գործող քրեական օրենսգրքով այն կանոնակարգված է, սակայն այդ կանոնակարգումը բազմաթիվ թերություններ ունի, որոնք խոչընդոտում են քննարկվող ինստիտուտի արդունավետ կիրառմանը: Առաջին հերթին, այդ թերությունը վերաբերում է պատժից ազատելու ժամկետի հաշվարկման հիմքին: Գործող քրեական օրենսգիրքը դրանք հաշվարկում է՝ ղեկավարվելով կատարված հանցանքի հանցագործությունների

դասակարգման կոնկրետ խմբին պատկանելով, ինչը սակայն հնարավորություն չի տալիս անհատական մոտեցում դրսևորել նաև պատժից ազատելու պարագայում: Առավել հիմնավորված է թվում օրենքով սահմանված ժամկետների հաշվարկումը՝ ելնելով դատարանի կողմից կոնկրետ անձի նկատմամբ նշանակված պատժատեսակից և պատժաչափից: Հարցի նման լուծումը հնարավորություն կտա կանոնակարգել նաև այն դեպքերը, երբ պատիժ է նշանակվել հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ, կամ կիրառվել է օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ:

Օրենսդրորեն պետք է հստակեցնել, թե ինչպես պետք է հաշվարկվի այս ժամկետը դատապարտյալի կողմից պատժի կրման ընթացքում նոր հանցագործությունների կատարման դեպքում: Խնդրի լուծման տարբերակ պետք է լինի նոր հանցանքի կատարման փաստով այդ ժամկետի ընթացքի ընդհատումը և դրա վերահաշվարկումը դատարանի կողմից արդեն իսկ դատավճիռների համակցությամբ կայացված դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Օրենսդրական ճշգրտման կարիք ունի նաև ցմահ ազատազրկման դատապարտվածներին պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը: Գործող քրեական օրենսգիրքը սահմանում է, որ հիշյալ կատեգորիայի անձանց պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը հնարավոր է պատժի ոչ պակաս, քան քսան տարին փաստացի կրելուց հետո: Սակայն առավել հստակ կլիներ սահմանել, որ նոր հանցանքի կատարումը ընդհատում է այդ ժամկետը և հաշվարկումը վերսկսվում է նոր կատարված հանցագործության համար կայացված դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելու պահից: Գործող քրեական օրենսգիրքը նախատեսում է այս ժամկետի ոչ թե ընդհատման, այլ կասեցման հնարավորություն նոր դիտավորյալ հանցանքի կատարման պարագայում, եթե դրա համար նշանակվում է ազատազրկում: Ներկայիս կանոնակարգման համաձայն՝ այդ ժամկետը վերսկսվում է նոր պատժի ժամկետը լրանալուց հետո: Նման մոտեցումը, սակայն, արդարացված չի թվում, քանի որ անհասկանալի է, թե ինչպես պետք է այս դրույթը կիրառվի, օրինակ, այն պարագայում, երբ կատարված արարքի համար նշանակված պատիժը կլանվում է ցմահ ազատազրկմամբ:

Միաժամանակ պետք է հստակեցվի այն ժամանակահատվածը, որը ցմահ ազատազրկված անձանց պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքում պետք է համարվի որպես փորձաշրջան:

Հստակեցման կարիք ունի նաև պատժից ազատվելու ընթացքում անձի վրա դրվող պարտականությունների շրջանակը: Հստակ պետք է ամրագրվի, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում պատժի չկրած մասը դիտվում է որպես փորձաշրջան, որի ժամանակ անձի վրա դատարանի կողմից դրվում են պարտականություններ, իսկ պրոբացիոն ծառայության կողմից՝ իրականացվում հասարակությունում անձի վերաինտեգրումն ապահովող աշխատանքներ: Դրանց բնույթն ու նշանակությունը ըստ էության, նույնն են, ինչ և պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում:

Հստակ կանոնակարգման կարիք ունեն նաև այդ փորձաշրջանի ընթացքում անձի վրա դատարանի կամ պրոբացիոն ծառայության կողմից դրված պարտականությունների չարամիտ խախտման իրավական հետևանքները, անհրաժեշտության դեպքում դատարանին օժտելով նաև փորձաշրջանի տևողությունը երկարացնելու իրավասությամբ:

12.8. Պատժից ազատելիս, պատժի նպատակների ապահովման նկատառումներից ելնելով, դատարանը անձի նկատմամբ կարող է նշանակել անվտանգության միջոցներ: Միաժամանակ, պետք է ամրագրել, որ պատժից ազատելը չի ազատում հանցանք կատարած անձին տուժողին պատճառված վնասը հատուցելու պարտականությունից:

13. Համաներումը, ներումը, դատվածությունը

13.1. Հստակեցման կարիք ունեն համաներման և ներման ինստիտուտները: Նախ, ինքնին վիճելի է այն, թե որքանով է հիմնավորված ներման կամ համաներման ակտով անձի դատվածության վերացումը: Առավել հիմնավորված կլինի ամրագրել, որ համաներման ակտով հանցանք կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից կամ լրիվ կամ մասնակիորեն ազատվել պատժից, իսկ ներման ակտի դեպքում դատապարտյալը կարող էլ լրիվ կամ մասնակիորեն ազատվել պատժից կամ այն կարող է փոխարինվել ավելի մեղմ պատժատեսակով: Ընդ որում, պետք է օրենսդրորեն ամրագրել, որ այս հիմքերով հանցանք կատարած անձի կամ դատապարտյալի ազատումը չի ազատում նրանց տուժողին պատճառված վնասը հատուցելու պարտականությունից:

Օրենսդրական ամրագրում պետք է ստանա նաև այն, թե ովքեր կարող են դիմել ՀՀ նախագահին դատապարտյալին ներում շնորհելու խնդրագրով: Թեև տեսականորեն այդ հարցը կանոնակարգվում է, սակայն ավելի ճիշտ կլիներ հիշյալ հարցի օրենսդրական մակարդակով հստակեցումը, մասնավորապես՝ հարցի լուծում է քրեական օրենսգրքում ուղղակի ամրագրելը, որ նման խնդրագրով կարող են դիմել դատապարտյալը, նրա օրինական ներկայացուցիչները: Ընդ որում, պետք է կանոնակարգվի նաև ներման խնդրագրի մերժման դեպքում կրկին ներման խնդրանքով դիմելու հնարավորությունը, սակայն օրենքով սահմանված որոշակի ժամանակահատված անցնելուց հետո:

Օրենսդրական ամրագրման կարիք ունի նաև այն, որ համաներման ակտը անձի նկատմամբ կարող է կիրառվել միայն նրա համաձայնության դեպքում:

13.2. Հետաքրքրություն են ներկայացնում նաև դատվածությանն առնչվող հարցերը: Ինչպես և գործող քրեական օրենսգրքում, դատվածության վերացման հիմք պետք է դիտվեն դատվածության մարումը, հանումը, ինչպես նաև արարքի ապաքրեականացումը: Միաժամանակ, պետք է օրենսդրորեն ամրագրել, որ այդ հիմքով դատվածություն չունենալու հավաստումը հիմք չի կարող հանդիսանալ պետությունից փոխհատուցում պահանջելու համար: Օրենսդրորեն պետք է հստակեցնել դատվածության մարման ժամկետները հաշվելու պահը պատժից

ազատվելու, հատկապես՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատվելու դեպքերում:

Վերանայման կարիք ունեն դատվածության մարման ժամկետները: Ճիշտ կլինի ազատազրկման հետ կապված պատիժներից ավելի մեղմ պատժի դատապարտման դեպքում դատվածությունը մարված համարել այդ պատիժը կրելուց հետո: Միաժամանակ, դատվածության մարման ժամկետների որոշումը պետք է կապել ոչ թե հանցագործության տեսակի, այլ դատարանի կողմից նշանակված պատժաժամկետի հետ: Նման լուծումն ավելի ճիշտ է թե՛ տեսական, թե՛ գործնական տեսանկյունից, հատկապես այն դեպքերում, երբ նշանակվում է օրենքով նախատեսվածից մեղմ պատիժ կամ ընդհակառակը, պատիժ է նշանակվում հանցագործությունների կամ դատավճիռների համակցությամբ: Միաժամանակ, այս մոտեցումն ավելի արդարացված կլինի դատվածության ընդհատման դեպքում դատվածության մարման ժամկետի հաշվարկման տեսակետից:

Օրենսդրական կարգավորման կարիք ունեն նաև ցմահ ազատազրկման դատապարտված և ներման կամ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքով պատժից ազատված անձանց դատվածության մարման հարցերը:

Վերանայման կարիք ունի նաև դատվածության հանման ինստիտուտի կանոնակարգումը: Գործող քրեական օրենսգրքով սահմանված կանոնակարգման համաձայն, դատարանը կարող է հանել նրա դատվածությունը անբասիր վարքագիծ դրսևորելու և դատվածության մարման ժամկետի գոնե կեսը անցնելու դեպքում: Ինքնին, դժվար է որոշել «անբասիր վարքագիծ» հասկացությունը և ըստ էության այն կամայական մոտեցման տեղիք է տալիս: Ճիշտ լուծում կլինի օրենսդրորեն ամրագրել, որ դատվածության հանման ինստիտուտը կկիրառվի բացառիկ դեպքերում, հասարակությանը կամ պետությանը մատուցած բացառիկ ծառայությունների դեպքում:

14. Անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները

14.1. Անչափահասների քրեական պատասխանատվության և պատժի հարցերին անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել: Տվյալ կատեգորիայի անձանց նկատմամբ քրեաիրավական ներգործության հիմնական տեսակներ, ըստ առաջնայնության, պետք է համարել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցները, պայմանական դատապարտումը և պատիժը: Ընդ որում, ներգործության այս կամ այն միջոցի ընտրության հիմքում նախ և առաջ պետք է դրվեն անչափահաս հանցագործի անձը բնութագրող բարոյահոգեբանական, ֆիզիոլոգիական, սոցիալ-դերային առանձնահատկությունները, այլ ոչ թե օբյեկտիվ հանգամանքները (հանցագործության տեսակը, պատճառված վնասի չափը և այլն):

Վերը նշված հանգամանքներն առաջին հերթին պայմանավորված են անչափահասների հանցավորության (որպես հանցավորության համակարգի բաղկացուցիչ մասի) յուրահատկություններով, որոնք էլ իրենց հերթին գլխավորապես կախված են անչափահասների սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններից: Հենց այդ առանձնահատկություններն էլ օրենսդրին կանգնեցնում են անչափահասների քրեական պատասխանատվության հստակ կանոնակարգման անհրաժեշտության առջև:

ՀՀ քրեական գործող օրենսդրությամբ նախատեսված են անչափահասների քրեական պատասխանատվության, պատժի նշանակման և դրա տեսակների սահմանման, ինչպես նաև նրանց քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու, վաղեմության ժամկետները հաշվելու ու դատվածությունը մարելու հատուկ պայմաններ, որոնք շատ դեպքերում տարբերվում են քրեական պատասխանատվության սահմանման և պատժի նշանակման, ինչպես նաև դրանցից ազատելու ընդհանուր կանոններից: Տվյալ հանգամանքը բխում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թվականի նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով հաստատված «Պեկինյան կանոններից» («ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնները անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ»), որոնց 2.2. կետի «ա» ենթակետի համաձայն՝ անչափահաս է համարվում այն երեխան կամ երիտասարդը, որն իրավախախտման համար, գործող իրավական համակարգի շրջանակներում, կարող է ենթարկվել պատասխա-

նատվության մեծահասակի նկատմամբ կիրառվող պատասխանատվության ձևերից տարբերվող ձևով: Ինչպես նշվում է նույն կետի մեկնաբանության մեջ, «…տարիքային սահմանները կախված կլինեն յուրաքանչյուր իրավական համակարգի դրույթներից, հաշվի առնելով անդամ պետությունների տնտեսական, սոցիալական, մշակութային և իրավական համակարգերը: Միևնույն ժամանակ «Պեկինյան կանոնների» կետ 4.1.-ի համաձայն՝ «Այն իրավական համակարգերում, որոնցում ընդգրկվում է «անչափահասների քրեական պատասխանատվության տարիք» հասկացությունը, այդպիսի տարիքի նվազագույն սահմանը չպետք է սահմանվի շատ ցածր՝ հաշվի առնելով զգացմունքային, հոգեկան և մտավոր հասունության գործոնները»: Այսինքն՝ քրեական պատասխանատվության նվազագույն տարիքի սահմանները, կախված պատմական և մշակութային, ինչպես նաև երեխայի սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններից, միանգամայն տարբեր են: Հետևաբար, եթե քրեական պատասխանատվության տարիքային սահմանը սահմանված լինի չափից ցածր կամ ընդհանրապես չսահմանվի, ապա պատասխանատվության գաղափարն ընդհանրապես կկորցնի իր իմաստը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է լուրջ ջանքեր գործադրել քրեական պատասխանատվության տարիքի նվազագույն սահմանը խելամտորեն և պատշաճ որոշելու համար:

ՀՀ քրեական գործող օրենսդրությամբ անչափահասների քրեական պատասխանատվության առանձնահատկությունները վերաբերում են՝

1) այնպիսի պատիժների նշանակմանը, որոնք կարող են կիրառվել անչափահասների նկատմամբ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները, հոգեկան զարգացման աստիճանը, առողջության վիճակը, անձի այլ առանձնահատկությունները, ինչպես նաև այլ անձանց ազդեցությունը,

2) քրեական պատասխանատվության և պատժի փոխարինմանը դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելով,

3) հանցանք կատարած անչափահասին պատժից ազատելուն,

4) պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատելուն,

5) քրեական պատասխանատվությունից կամ պատժից վաղեմության ժամկետներն անցնելու հետևանքով ազատելուն,

6) դատվածության մարմանը:

ՀՀ քրեական գործող օրենսգրքում, սակայն, նշված հարցերը շատ դեպքերում թերի են կարգավորված: Մասնավորապես.

14. 2. Լուրջ վերանայման կարիք է զգում անչափահասների համար նախատեսված պատժի համակարգը: Իրավակիրառական պրակտիկայում, ըստ էության, կիրառվում է միայն որոշակի ժամկետով ազատազրկում պատժատեսակը: Բանն այն է, որ մյուս պատժատեսակները (տուգանքը, հանրային աշխատանքները, կալանքը), օրենսդրական ոչ հստակ կարգավորման պատճառով, արդյունավետ չեն: Այս առումով անհրաժեշտ է ոչ միայն հստակեցնել նշված նորմերի օրենսդրական ձևակերպումները, այլև ընդլայնել անչափահասների նկատմամբ կիրառվող պատիժների շրջանակը: Տվյալ կատեգորիայի անձանց նկատմամբ կարող են արդյունավետորեն կիրառվել նաև պատժի այնպիսի տեսակներ, ինչպիսիք են ազատության սահմանափակումը և որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը:

14.3. ՀՀ քրեական նոր օրենսգրքով անչափահասների համար նախատեսվող պատժի համակարգը կունենա հետևյալ տեսքը՝

1) տուգանքը,
2) հանրային աշխատանքները,
3) որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը,
4) ծնողական իրավունքներից զրկելը
5) ազատության սահմանափակումը,
6) կարճաժամկետ ազատազրկումը,
7) ազատազրկումը:

Նշված հերթականությունը պայմանական է:

14. 4. Անհրաժեշտ է ընդլայնել անչափահասների նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման պրակտիկան: Անչափահասների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները հաշվի առնելով՝ այս կատեգորիայի անձանց նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցները պետք է առաջին հերթին նպատակաուղղված լինեն նրանց դաստիարակությանը և ուղղմանը, չափահասների բացասական ազդեցությունից պաշտպանելուն, այլ ոչ թե պատժելուն: Ուստի անհրաժեշտ են օրենսդրական այնպիսի ձևակերպումներ, որոնք կբացառեն անչափահասների նկատմամբ պատժի կիրառումը բոլոր այն

դեպքերում, երբ նրանց ուղղմանը և նրանց կողմից նոր հանցագործությունների կանխմանը հնարավոր է հասնել դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներով:

14. 5. Միևնույն ժամանակ քրեական օրենսգրքում պետք է նախատեսել, որ նշված միջոցների պահանջների կատարումից չարամտորեն խուսափելու դեպքում, անչափահասը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության և պատժի:

14. 6. Նախազգուշացումը՝ որպես պատճառված վնասի և քրեական օրենսգրքով նախատեսված հանցանքների կրկնակի կատարման հետևանքների պարզաբանում, չի կարող համարվել դաստիարակչական բնույթի հարկադրանքի ինքնուրույն միջոց: Տվյալ դեպքում բացակայում են հարկադրանքի տարրերը, քանի որ հանցանք կատարած անչափահասի վրա որևէ պարտականություն չի դրվում: Այլ հարց է, որ նախազգուշացումը պարտադիր պետք է կիրառվի դաստիարակչական բնույթի հարկադրանքի ցանկացած միջոց նշանակելիս:

14. 7. Վերանայման է ենթակա նաև հանցանք կատարած անչափահասին ծնողների կամ նրանց փոխարինող անձանց, կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի հսկողությանը հանձնելու հետ կապված դաստիարակչական բնույթի միջոցը: ՀՀ քր. օր.-ի գործողության ներկայիս պայմաններում հսկողության հանձնելը նույնպես հարկադրանք չի ենթադրում, քանի որ տվյալ դեպքում ևս հանցանք կատարած անչափահասի վրա որևէ պարտականություն չի դրվում: Մասնավորապես, այն դրսևորվում է ծնողների կամ նրանց փոխարինող անձանց, կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի, կամ տեղական ինքնակառավարման մարմնի վրա անչափահասի նկատմամբ դաստիարակչական ներգործության և նրա վարքագծի նկատմամբ վերահսկողության պարտականություն դնելու մեջ: Մինչդեռ անհրաժեշտ է հսկողության հանձնվողի վրա որոշակի պարտականություններ և պատասխանատվություն դնելը: Բացի այդ, պետք է հրաժարվել ծնողների կամ նրանց փոխարինողների հսկողությանը հանձնելու դրույթից, քանի որ անչափահասի կողմից հանցանքի կատարումն արդեն իսկ վկայում է այդ հսկողության թերությունների մասին:

14. 8. Պետք է վերանայել նաև անչափահասների նկատմամբ կիրառվող դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների քրեական գործող օրենսգրքով նախատեսված ցանկը՝ այն ընդլայնելու և առավել հստակեցնելու նկատառումներով: Օրինակ՝ դրանց շարքում կարող է նախատեսվել հատուկ կրթական, մարզական, մշակութային և այլ ծրագրերին ներգրավելը:

14. 9. Անհրաժեշտ է սահմանել անչափահասի նկատմամբ նշանակվող դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների սպառիչ ցանկ, որպեսզի բացառվի այն տարածական մեկնաբանության ենթարկելու հնարավորությունը: ՀՀ քրեական գործող օրենսգրքի հոդված 91-ի երրորդ մասի համաձայն՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ դատարանն անչափահասի նկատմամբ կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի այլ միջոցներ: Սակայն քրեական օրենքը անալոգիայով կիրառելն արգելելը ենթադրում է ոչ միայն օրենքում եղած բացը նույն օրենքի մեկ այլ դրույթով լրացնելու անթույլատրելիություն, այլև քրեաիրավական հետևանքները որոշակիության հայտնի աստիճանով ձևակերպելու անհրաժեշտություն:

14. 10. Պետք է վերանայել նշված միջոցների նշանակման՝ քրեական օրենսգրքով սահմանված ժամկետները: Անչափահասի ուղղման գործընթացը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով և պահանջում է անհատական մոտեցում: Որոշ անձանց ուղղման համար կարող են պահանջվել ամիսներ, մյուսների ուղղման համար՝ տարիներ: Սակայն քննարկվող միջոցների կիրառման ժամկետների սահմանումը պարտադիր է: Հակառակ դեպքում անհասկանալի է, թե երբ է դադարում քրեաիրավական տվյալ հարաբերությունը: Միևնույն ժամանակ այդ ժամկետները չեն կարող գերազանցել տվյալ հանցագործության համար քրեական պատասխանատվությունից ազատելու վաղեմության ժամկետները: Այլապես կստացվի, որ վաղեմության ժամկետն անցել է, սակայն անձի նկատմամբ շարունակում են կիրառվել քրեաիրավական ներգործության միջոցներ:

14. 11. Դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման ժամկետների սահմանումը չի կարող թողնվել իրավակիրառողի հայեցողությանը: Այդ ժամկետները պետք է ուղղակիորեն նախատեսվեն քրեական օրենսգրքում:

14. 12. Անհրաժեշտ է սահմանափակել հանցանք կատարած անչափահասների նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակելու հնարավորությունները: Մասնավորապես, առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասի նկատմամբ, անկախ տարիքից, որոշակի ժամկետով ազատազրկում որպես կանոն չպետք է նշանակվի: Անչափահասի ազատազրկումը պետք է գնահատվի որպես պատժի ծայրահեղ միջոց, որը կարող է կիրառվել միայն այն դեպքերում, երբ ոչ մի այլ միջոց չի կարող դրական արդյունք տալ:

14. 13. ՀՀ քրեական օրենսգրքում անհրաժեշտ է առանձնացնել անչափահասների նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելուն նվիրված ինքնուրույն ինստիտուտ: Անչափահասների նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելու հիմքում պետք է դրվեն նրա անձը բնութագրող սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, որոնք կվկայեն այն մասին, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ինչն էլ հնարավորություն կտա առավելագույնս անհատականացնելու պատժիչ-դաստիարակչական ներգործությունը անչափահաս դատապարտյալի նկատմամբ:

Քրեական պատասխանատվության տվյալ ձևի իրագործումը պետք է ուղղված լինի հարկադրելու հանցանք կատարած անչափահասին որոշակի այնպիսի վարքագիծ դրսևորելու, որը կնպաստի նրա ուղղմանը և սոցիալականացմանը, ինչն էլ հնարավորություն կտա բացառելու նրա կողմից նոր հանցանքի կատարումը: Այդ առումով հանցանք կատարած անչափահասի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելիս նրա վրա, որպես պարտադիր պայման, պետք է դրվեն այնպիսի պարտականություններ, որոնք կնպաստեն սոցիալապես օգտակար հատկությունների ձևավորմանը (օրինակ՝ ուսումը շարունակելը, աշխատանքի տեղավորվելը, բուժման կուրս անցնելը և այլն):

Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի շրջանակներում պետք է նախատեսվեն ոչ միայն հարկադրանքի տարրեր պարունակող, այլև դրական վարքագիծը խրախուսող նորմեր, որոնք կխթանեն անչափահաս հանցագործների ուղղման գործընթացը և կնպաստեն նրանց քրեական պատասխանատվության նպատակների իրականացմանը:

14. 14. Քրեական օրենքով անհրաժեշտ է նախատեսել, որ որոշ դեպքերում 18-21 տարեկան երիտասարդ հանցագործների նկատմամբ պետք է կիրառվեն անչափահաս-ների քրեական պատասխանատվության և պատժի առանձնահատկությունները: Արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ 18-21 տարեկան երիտասարդները կազմում են քրեական իրավունքի համար ոչ պակաս կարևոր նշանակություն ունեցող սոցիալական խումբ, քան անչափահասները:

15. Անվտանգության միջոցներ

15.1 Գործող քրեական օրենսգիրքը չի նախատեսում անվտանգության միջոցների կիրառման հնարավորությունը, որոնք, սակայն ներկայումս արդյունավետորեն գործում են բազմաթիվ եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում: Ի տարբերություն պատժի, այս միջոցների նպատակն է ոչ թե հանցանք կատարած անձի ուղղումը կամ սոցիալական արդարության վերականգնումը, այլ քրեական օրենսգրքով սահմանված արարք կատարած անձի «վտանգավոր վիճակի» չեզոքացումը, հնարավոր հանցավոր արարքների կանխումը, անձի վերասոցիալականացումը: Նման միջոցների շարքին են դասվում՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները, քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված արարք կատարած, բայց քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձանց նկատմամբ կիրառվող միջոցները, որոշակի վայրեր այցելելու արգելքը, հոգեբանական օգնություն ցույց տվող կառույցներ հաճախելու պարտականությունը, վարքագծի նկատմամբ հատուկ հսկողությունը և այլն: Անվտանգության միջոցները կարող են կիրառվել ինչպես պատժի հետ զուգակցվելով, այնպես էլ որպես ինքնուրույն ներգործության միջոց՝ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքում:

15. 2. ***Բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ***

Հստակեցման կարիք ունի բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման հիմքը: Գործող քրեական օրենսգիրքը սահմանում է այն անձանց շրջանակը, ում հանդեպ դատարանի կողմից կարող են նշանակվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ, այն է՝ հանրորեն վտանգավոր արարքի կատարման պահին անմեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության վիճակում գտնվող

անձինք, ալկոհոլամոլությունից կամ թմրամոլությունից բուժման կարիք ունեցողներ, ինչպես նաև անձինք, ովքեր հանցանքը կատարել են մեղսունակության վիճակում, սակայն հանցանքի կատարումից հետո նրանց մոտ առաջացել է պատժի նշանակումը կամ կատարումն անհնարին դարձնող հոգեկան խանգարում: Հիշյալ անձանց շրջանակը ճշգրտման կարիք ունի. նախ, ներկայումս այս շարքում նախատեսված չեն այն անձինք, ովքեր թունամոլությունից բուժման կարիք ունեն: Բացի այդ, ճիշտ կլինի բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման հնարավորությունը նախատեսել ոչ միայն այն անձանց համար, ովքեր հանցանքի կատարման պահին գտնվել են մեղսունակության վիճակում, սակայն հանցանքի կատարումից հետո նրանց մոտ դրսևորվել է պատժի նշանակումը կամ կատարումն անհնարին դարձնող հոգեկան խանգարում, այլև ընդլայնել այդ անձանց շրջանակը՝ դրանում ընդգրկելով նաև հանցանքի կատարման պահին մեղսունակության վիճակում գտնված, սակայն դրանից հետո հոգեկան խանգարման դրսևորում ունեցող այն անձանց, ովքեր ի վիճակի չեն ամբողջությամբ կամ մասամբ գիտակցելու կամ վերահսկելու իրենց արարքները: Այս կատեգորիայի անձանց դեպքում պետք չէ շեշտադրում անել միայն պատժի նշանակման կամ կատարման անհնարինության վրա, քանի որ հնարավոր են նաև իրավիճակներ, երբ պատժի կրման ընթացքում անձի մոտ ի հայտ գան հոգեկան խանգարումներ, որոնք թեև անհնարին չեն դարձնում պատժի նշանակումը կամ կրումը, սակայն էապես խոչընդոտում են պատժի նպատակների իրականացմանը կամ կարող են հանգեցնել նոր հանցանքների կատարման, քրեակատարողական հիմնարկում սահմանված կարգի խախտման: Նման դեպքում, ճիշտ կլինի նախատեսել պատժին զուգընթաց բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման և իրականացման հնարավորությունը:

Հստակեցման կարիք ունեն նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կոնկրետ տեսակների նշանակման հիմքերը: Դժվար է, առաջին հերթին, համաձայնել գործող քրեական օրենսգրքում ներկայումս առկա այն կանոնակարգման հետ, որը սահմանում է, որ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարման վիճակում կատարված հանցանքի համար դատապարտված, բայց ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից կամ թունամոլությունից կամ մեղսունակությունը չբացառող հոգեկան խանգարումից բուժման կարիք ունեցող անձանց նկատմամբ դատարանը

պատժի հետ մեկտեղ կարող է նշանակել միայն հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողություն և հարկադիր բուժում: Առանձին դեպքերում հնարավոր է, որ հիշյալ անձինք ոչ թե հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային, այլ հոգեբուժական հիվանդանոցի բաժանմունքում ստացիոնար բուժման կարիք ունենան: Նման իրավիճակ հատկապես կարող է առաջանալ ազատազրկման հետ կապ չունեցող պատժատեսակների կիրառման դեպքում, երբ, սակայն, հանցանք կատարած անձը վտանգ ներկայացնի իր կամ այլ անձի համար: Հետևաբար, գործող քրեական օրենսգրքում առկա նման սահմանափակումը թվում է չարդարացված:

Փոփոխությունների կարիք են զգում նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների նշանակման, փոփոխման, դադարեցման վերաբերյալ դրույթները: Գործող քրեական օրենսդրությունը սահմանում է, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելիս դատարանը հաշվի է առնում անձի հոգեկան հիվանդությունը, նրա կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, մինչդեռ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի նշանակման ժամանակ պետք է հաշվի առնել նաև անձի անձնավորությունը, նրա կողմից նոր հանցանքների կատարման, այլ անձի իրավունքների ոտնահարման, հասարակական կարգի խախտման հնարավորությունը:

Միասնական մոտեցում պետք է սահմանվի նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների փոփոխման կամ դրանց դադարեցման կանոնակարգման առումով: Գործող քրեական օրենսգիրքը սահմանում է, որ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառման դեպքում անձի առողջանալու կամ նրա հիվանդության բնույթի այնպիսի փոփոխության դեպքում, երբ վերանում է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու անհրաժեշտությունը, դատարանը բժշկական հաստատության եզրակացության հիման վրա որոշում է կայացնում դրանց կիրառումը դադարեցնելու մասին, մինչդեռ պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի կիրառման դադարեցման ժամանակ դատարանը հիմնվում է հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության վրա: Թերևս ճիշտ կլինի երկու դեպքում էլ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների դադարեցման հիմք դիտել հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությունը:

Օրենսդրորեն հստակեցման կարիք ունի այն հարցը, թե կարող է արդյոք հոգեբուժական հիվանդանոցային պայմաններում իրականացվող հարկադրանքի միջոցի տևողությունը գերազանցել ազատությունից զրկելու հետ կապված պատժի այն ժամկետը, որը նշանակվել է կամ կարող էր նշանակվել կատարված արարքի համար: Միաժամանակ, պետք է կանոնակարգել նաև ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակի հետ զուգակցված կամ հոգեբույժի մոտ արտահիվանդանոցային հսկողության և բուժման տևողության առավելագույն թույլատրելի ժամկետը:

15.3. ***Որոշակի վայրեր այցելելու արգելքը*** նույնպես արդյունավետ միջոց է, որը կարող է դրսևորվել, օրինակ՝ ռեստորաններ, սրճարաններ, գիշերային ակումբներ, խաղասրահներ այցելելու արգելքով: Հիշյալ անվտանգության միջոցի կիրառման տևողությունը պետք է որոշվի դատարանի կողմից՝ օրենքով սահմանված ժամկետների շրջանակում: Առավել արդյունավետ է թվում նման արգելքների սահմանումը երեք ամսից մինչև երկու տարի ժամկետով:

Այս անվտանգության միջոցի պահանջները դիտավորությամբ խախտելու դեպքում պետք է նախատեսվի քրեական պատասխանատվություն:

Անվտանգության այս միջոցը կիրառվում է՝ նկատի ունենալով հանցավոր վարքագիծ դրսևորած անձի հնարավոր նոր հանցագործությունները կանխարգելելու անհրաժեշտությունը: Մասնավորապես, դրանք կարող են դրսևորվել խուլիգանություն կատարած անձին գիշերային ակումբներ, պարասրահներ, ռեստորաններ, սրճարաններ այցելելու արգելքով կամ, օրինակ, խաղամոլության արդյունքում ձևավորված պարտքից ազատվելու համար գողություն կատարած անձին խաղասրահ այցելելու արգելքով և այլն:

15.4. ***Հոգեբանական օգնություն ցույց տվող կառույցներ հաճախելու պարտականությունը*** առավելապես կիրառվում է քրեական օրենսգրքի հատուկ մասով նախատեսված բռնությամբ զուգորդված արարքներ կատարած անձանց նկատմամբ: Այն դրսևորվում է օրենքով սահմանված ժամկետների տիրույթում դատարանի կողմից որոշված ժամկետում հոգեբանական միջամտության ենթարկվելու համար համապատասխան օգնություն ցույց տվող կառույցներ հաճախելով: Արդյունավետ կլինի հիշյալ անվտանգության միջոցի կիրառումը երեք ամսից մինչև երկու տարի ժամկետով:

Այս անվտանգության միջոցի պահանջները դիտավորությամբ խախտելու դեպքում պետք է նախատեսվի քրեական պատասխանատվություն:

Անվտանգության այս միջոցը պետք է կիրառվի, երբ դատարանը հանգում է եզրակացության, որ անձի կողմից կատարված իրավախախտման պատճառ կամ նման վարքագծի դրսևորմանը նպաստող գործոններն հանդիսանում են հանցանք կատարած անձի հոգեբանական բարդույթներն ու խանգարումները և նշանակվող անվտանգության միջոցը անհրաժեշտ է անձի կողմից հնարավոր հանցավոր նոր վարքագիծը կանխելու համար:

15.5. ***Վարքագծի նկատմամբ հատուկ հսկողությունը*** իր պատժաժամկետն ամբողջովին կրած անձի նկատմամբ օրենքով սահմանված ժամկետի շրջանակներում դատարանի կողմից որոշված ժամկետում կիրառվող անվտանգության միջոց է, որը կիրառվում է, եթե առկա է պատիժը կրած անձի կողմից նոր հանցանքի կատարման իրական վտանգ: Վարքագծի նկատմամբ հսկողության սահմանման տևողությունը պետք է հստակեցվի օրենսդրորեն, մասնավորապես առաջարկվում է այն սահմանել մեկից հինգ տարի ժամկետով: Վարքագծի նկատմամբ հսկողություն սահմանելու դեպքում այս միջոցի կիրառման կանոնակարգումը իրականացվում է պրոբացիոն ծառայության աշխատակցի կողմից, որն էլ պետք է օգնի պատիժը կրած անձի վերաինտեգրմանը հասարակությունում: Այս ընթացքում անձի նկատմամբ կարող են ներկայացվել նույն պահանջները, ինչ և պատիժը պայմանականորեն չկիրառելու պարագայում: Վարքագծի նկատմամբ հսկողության սահմանման ժամկետը դատարանի կողմից կարող է փոփոխվել՝ պրոբացիոն ծառայության աշխատակցի կողմից ներկայացված միջնորդագրի հիման վրա: Ընդ որում, օրենսդրական կանոնակարգման կարիք ունեն նաև այս միջոցի փոփոխման, դադարեցման հիմքերն ու պայմանները:

15.6. ***Գույքի բռնագրավումը*** պետք է նախատեսվի երկու ձևով՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների կամ գույքի բռնագրավում և հանցագործության գործիքների ու միջոցների բռնագրավում:

15.7. Քրեական օրենսգրքում անվտանգության միջոցների շարքում պետք է նախատեսվեն նաև այնպիսիք, որոնք կարող են կիրառվել քրեական պատասխանատվության տարիքի չհասած, սակայն քրեական օրենսգրքի Հատուկ

մասով նախատեսված արարք կատարած անչափահասի նկատմամբ: Դրանք պետք է ուղղված լինեն այդ երեխաների կողմից հասարակությունում օրինապահ վարքագծի ձևավորմանը, նրանց կողմից նոր իրավախախտումների կատարման կանխարգելմանը: Նման միջոցների թվին են դասվում, օրինակ՝ նրան ընտանեկան հսկողության հանձնելը, հատուկ կրթադաստիարակչական հիմնարկ տեղավորելը, ուսումնական, կրթական, մշակութային, մարզական ծրագրերին ներգրավելը և այլն:

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

Քրեական օրենսգրքի Հատուկ մասը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքային դրույթների վրա.

16. Քրեաիրավական ներգործության մեղմացումը պետք է կշռադատված և իրավաբանորեն հիմնավորված ու արդարացված լինի: Այն չպետք է առաջացնի քրեական օրենքի պահպանական և կարգավորիչ գործառույթների անհիմն թուլացում:

16.1. Վերականգնողական արդարադատությունը չի կարող միանշանակորեն ենթադրել քրեական սանկցիաների մեղմացում: Միաժամանակ անհրաժեշտ է ապահովել համապատասխան սանկցիաների համաչափությունը և հիմնավորվածությունը՝ հիմք ընդունելով հանցագործություններից առավել վտանգավորի (ծանրացուցիչ հանգամանքներում սպանության) համար նախատեսված պատժատեսակներն ու պատժաչափերը:

16.2. Հանցավոր արարքների ապաքրեականացումը միայն որոշակի հանցակազ-մերով իրավակիրառական պրակտիկայի բացակայության պատճառով անթույլատրելի է, քանի որ, այդ թվում, քրեաիրավական հենց այդպիսի նորմերի առկայությունը նպաստում է հանցագործությունների կանխման նպատակի իրականացմանը:

16.3. Ժամանակակից պահանջներին համապատասխանող քրեական օրենքը պետք է առավելագույնս հիմնված լինի իրավակիրառական պրակտիկայի պահանջմունքների վրա: Այդ իմաստով անհրաժեշտ է նախատեսել հանցանքների և քաղաքացիական իրավախախտումների, ինչպես նաև հանցանքների և վարչաիրավական խախտումների սահմանազատման հստակ չափանիշներ:

16.4. Քրեական օրենքի գործողության արդյունավետությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է բացառել բոլոր այն դեպքերը, երբ ընդհանուր բնույթի քրեական հանցագործությունները նախատեսված են որպես հատուկ օբյեկտների դեմ ուղղված հանցագործությունների հանցակազմի հատկանիշ կամ ծանրացնող հանգամանք (օրինակ՝ հասարակական, քաղաքական կամ պետական գործչի սպանությունը նախատեսված է հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների շարքում): Հատուկ օբյեկտի դեմ ընդհանուր քրեական հանցագործություն հանդիսացող արարքի կատարումը, ըստ անհրաժեշտության, պետք է նախատեսել որպես ընդհանուր քրեական հանցանքի ծանրացնող հանգամանք:

16.5. Անընդունելի է քրեական գործող օրենսգրքում առկա այն վիճակը, երբ որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք է նախատեսված մեկ այլ հանցանքի կատարումը (օրինակ՝ սպանությունը, որը զուգորդված է մարդուն առևանգելով կամ ավազակությամբ և այլն): Նման դեպքերում ոչ միայն առաջանում են արարքի որակման հետ կապված բազմաթիվ խնդիրներ, այլև խախտվում է նույն արարքի համար կրկնակի դատապարտման անթույլատրելիության սկզբունքը: Հետևաբար նման ծանրացնող հանգամանքներ նախատեսելը ճիշտ չէ:

16.6. Քրեական օրենսգրքի Հատուկ մասի կառուցվածքն անհրաժեշտ է առավել հստակեցնել և պարզեցնել: Այն պետք է ունենա հետևյալ տեսքը.

Բաժին ... Խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Խաղաղության դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Պատերազմական հանցագործություններ

Գլուխ ... Մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ

Բաժին ... Մարդու դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Կյանքի դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Առողջության դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Կյանքը և առողջությունը վտանգի տակ դնող հանցագործություններ

Գլուխ ... Ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Սահմանադրական իրավունքների և ազատությունների դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններ

Բաժին ... Սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Հափշտակություններ

Գլուխ ... Սեփականության դեմ ուղղված այլ հանցագործություններ

Գլուխ ... Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ

Բաժին ... Հասարակական անվտանգության և համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Հասարակական անվտանգության դեմ ուղղված ընդհանուր բնույթի հանցագործություններ

Գլուխ ... Հանրավտանգ նյութերի և առարկաների հետ վարվելու կարգի դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Աշխատանքների և գործունեության իրականացման անվտանգության հատուկ կանոններով սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ

Բաժին ... Հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Հասարակական կարգի դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Բարոյականության դեմ ուղղված հանցագործություններ

Բաժին ... Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների, խիստ ներգործող և թունավոր նյութերի օրինական շրջանառության, դրանց պահպանման և օգտագործման կարգի դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Բնակչության առողջության դեմ ուղղված այլ հանցագործություններ

Բաժին ... Շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Կենդանական և բուսական աշխարհի, բնության հատուկ պահպանվող տարածքների դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Շրջակա միջավայրի անվտանգության դեմ ուղղված այլ հանցագործություններ

Բաժին ... Պետական իշխանության դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Սահմանադրական կարգի հիմունքների և պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Կառավարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Արդարադատության դեմ ուղղված հանցագործություններ

Բաժին ... Զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Զինվորական ծառայություն անցնելու կարգի դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Ռազմական գույքի օգտագործման, պահպանման և ռազմական տեխնիկայի շահագործման կարգի դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Զենքի, ռազմամթերքի, շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների և նյութերի հետ վարվելու կարգի դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Հատուկ ծառայությունների կրման և հատուկ պայմաններում զինվորական պարտքի կատարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ

Գլուխ ... Զինվորական պաշտոնեական հանցագործություններ